ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ

ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻՐՈ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

2010



ՀԵՂԻՆԱԿԸ՝ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ



Չորրորդ գրքիս կազմը



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն. Ս. Օ. Տ. Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ
Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի
Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան Թեմի

ՍՈՒՅՆ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿԱՐԱՄՅԱ ՆՎԻՐՅԱԼ ՀՈՎԻՎՆԵՐ ԵՎ ԻՄ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ՝ ԱՐԺ. Տ. ՔԵՐՈՎԲԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԵՎ ԱՐԺ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Յիշատակն արդարոցն օրհնութեամբ եղիցի. ամէն։

ՔԱՐՈԶԳՐՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԵՐ ՍԻՐԵՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
Հայաստանեայց Եկեղեցի Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

ԱՐԺ. Տ. ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

Սիրելի Տէր Հայր,

Մեր սրտի քաջալերական եւ երախտագիտական խօսքն ենք ցանկանում յղել Արեւմտեան մեր Տիրախնամ Թեմում Ձեր իրագործած ծրաջան եւ եռանդուն գործունէութեան համար, որի վառ ապացոյցներից մէկը Ձեր քարոզգրքերի հերթական հատորն է՝ *«Անառակ Որդու Վերադարձը»* խորագրով:

Եւս մէկ աշխատութիւն, որտեղ գեղարուեստական եւ երբեմն էլ պարզ ու ինքնաբուխ տողերի շնորհիւ ընթերցողին է փոխանցւում Հոգեւոր Հովուին բնորոշ սրտի ու հոգու ջերմութիւն, անկեղծ հոգածութիւն ու շինիչ խրատ: Քարոզգիրքը զարդարուած է հետաքրքրաշարժ պատմութիւններով նախորդ դարի մեր մեծագոյն եկեղեցական Հայրերի մէջբերումներով, որոնք էլ ընթերցողին առիթ են տալիս մտորելու եւ խորհելու ոչ՝ թէ անցաւոր եւ աշխարհիկ նիւթերի շուրջ, այլ՝ յաւիտենականի:

Իսկ ո՞րն է քարոզգրքի բուն նիւթը, եթէ ոչ վերադարձը դէպի Մայր Եկեղեցին, Հայ Ազգին բնորոշ բարոյական արժէքներին եւ, ի վերջոյ՝ Ամենակարողին: Այո՝ վերադարձ, որին կարօտ են մեր կաւակաց հոգիները, վերադարձ, որին կանչուած ենք մենք բոլորս:

Սիրելի Տէր Հայր, մեր աղօթք-պատգամն է, որ շարունակէք Ձեր Աստուածահաճոյ ընթացքը եւ Ձեր հրատարակած քարոզգրքերի կողքին յաւելէք նորերը՝ նոր եռանդով եւ նոր տեսիլքներով տոգորուած:

Այսու, մեր պատգամն է. *«Եւ դու քարոզի՛ր Աստծու Խօսքը, շարունակի՛ր, յայտարարիր այն, ժամանակին լինի թէ՝ տարաժամ, յանդիմանի՛ր, սաստի՛ր, յորդորի՛ր՝ կատարեալ համբերատարութեամբ ուսուցանելով» (Բ. Տիմ. 4:2):*

Սիրոյ ջերմ ողջունիւ,
Աղօթարար՝

ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Մարտ 2, 2009
Պըրպէնք, Գալիֆորնիա

3325 NORTH GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504
TEL: 818.558.7474 • FAX: 818.558.6333 • EMAIL: INFO@ARMENIANCHURCHWD.COM • WWW.ARMENIANCHURCHWD.COM

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի սիրելի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում Լոս Անջելեսում հրատարակած Չորրորդ Քարոզ-գրքիս *«Անառակ Որդու Վերադարձը»* քարոզները, որոնք անվանել եմ *«Միրո առաքելությունը»:*

Նախ աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Գրքի պատրաստության համար քաջալերանք ստացա Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Հովնան Արք. Տերտերյանից, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Առաջնորդ Սրբազան Հորը և միշտ աղոթող եմ իր քաջառողջության ու գործոց հաջողության համար: Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մադոյանն ու Մաշտոց Չոբանյանը, որոնց նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյան

Սեպտեմբեր 2010
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ՏԻՐՈՋ ԾԱՌԱՆ ՏԻՐՈՋ ԱՆԴԱՍՏԱՆԻՆ ՄԵՋ

Ժրաջան հոգևոր հովիվը երջանիկ է, որովհետև ինքզինք Տիրոջ Անդաստանին մեջ կզգա՝ գործքով ու հավատքով, ուր իր հոգիի և մտքի արգասիքը կկերտե իր համեստ ճիգերով բաշխելու համար զայն հավատացյալներուն: Արժանաշնորհ Տ. Հովսեփ Ավագ Քհն. Հակոբյանն է ալդ օրինակելի հոգևորականը, որ ահա իր չորրորդ քարոզագիրքի 32 քարոզներով՝ *«Անառակ Որդու Վերադարձը»* կընծայե իր հոգևոր եղբայրներուն և հավատացյալ հոտին: *«Տիրոջ Խորան» են* սկսելով ան *««Հավատքի ուժը»* փոխանցեց ու զայն *«Միրո Մեղան»ին* վրա պատարագեց: Ու այս բոլորը հոգեկան զոհունակությամբ, հավատքով ու անսակարկ սիրով: Ոչ մեկ ակնկալություն, բացի ըղձանքե մը, որ քարոզները, որոնք պարզ են ու ուղղակի գրված, Քրիստոսի լույսը գոնե մասամբ հասցնեն աղոթողին ու հավատացյալին:

«Անառակ Որդու Վերադարձը» ինք իր մեջ ունի ներշնչող պատգամը, թե դառնալ պետք է մեր հին ճանապարհեն և ընդունվիլ Հորմեն, որ կսպասե Իր որդիներուն: Որպեսզի կարենա իր այս Քարոզագիրքը արժևորել և կնքել, Տեր Հայրը իր համեստ մտքի ցոլքերուն վրա կավելցնե մեր հին անցյալի մեծ վարդապետներուն և մոտավոր անցյալի հոգևորականներուն անժամանցելի և շատ օգտակար վերլուծումները Անոնց շարքին են հիներեն՝ Մանդակունի Հայրապետն ու Շնորհալին, Գրիգոր Նարեկացին ու Տաթևացի Հայրապետ, որոնք հիմը դրած են Հայ Եկեղեցվո դավանանքին ու պաշտամունքին, երգած են ու մեկնաբանած Ավետարանն ու Քրիստոսի կյանքը: Բացառապես զգալի են այն ներդրումները, որոնք սույն Քարոզագիրքի հեղինակին կողմէ կմեջբերվին նորօրյա հոյակապ հոգևորականներու ընծայած քարոզներեն ու մեկնաբանություններեն, որոնց շարքին ականավոր դեմքեր են՝ Վազգեն Ա. Կաթողիկոս, Գարեգին Ա. Հովսեփյանց Կաթողիկոս, Բաբկեն Կյուլեսերյան Աթոռակից Կաթողիկոս, Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Գարեգին Պատրիարք Խաչատուրյան, Շնորհք Պատրիարք Գալուստյան և այլ բազմերախտ հոգևոր պետեր, որոնք Ս. Էջմիածինն ու Արմաշը, Երուսաղեմն ու Կիլիկիո Աթոռը այնքան բնական կերպով, առանց բռնազբոսիկ ուղղություններու դիմելու,

իրենց ուրույն տաղանդովն ու գրական վաստակով ընծայած են Հայաստանյայց Եկեղեցիին: Ու այս կետին մեջ գնահատելի է Տ. Հովսեփ Քահանա Հոր կատարած պրպտումները՝ համբերությամբ և հակիրճ բովանդակությամբ:

Քարոզագրիքին ներքին կառույցն ալ հետաքրքրական է և միևնույն ատեն ընթերցողին ուշադրությունը կլարե: Հոն ոչ միայն տոներն են, որ կտողանցեն ըստ Հայ Եկեղեցվո Տոնացույցին, այլ ամեն քարոզ իր Ավետարանական հպումեն զատ ստացած է նաև մեր Եկեղեցվո Շարակնոցին հմայքը, գրաբարին հետ աշխարհաբար թարգմանությամբ, որպեսզի հավատացյալը կապ մը հաստատե քարոզված պատգամին ու երգվող հոգևոր շարականին միջև: Այս մոտեցումը մենք նկատած ենք կանուխեն երջ. Շնորհք Պատրիարքի քարոզագիրքերուն մեջ, որուն հետևած է Տ. Հովսեփ Ա. Քահանան՝ իր անվերապահ երախտիքը յայտնելով միանգամայն առ որ անկ է:

Առավելությամբ մը ևս կփայլի ներկա *«Անառակ Որդու Վերադարձը»* և այդ ալ մաքուր, վճիտ և հասկնալի լեզվով գրված ըլլալն է: Կարդալու ձանձրույթ չէ, որ զգացի, երբ երկու շունչով կարդացի ներկա հատորը, այլ հաճույքով ու հետաքրքրությամբ: Պարզ լեզուն ու նյութերուն համառոտությունը առաջին հերթին ընթերցողին ակնկալությունները կսրեն ու քարոզները, որոնք տրամաբանական հաջորդականությամբ և ըստ Տոնացույցի դասավորված են, ուսանելի կըլլան, հաճելի կըլլան ու մանավանդ իրենց կյանքե առնված այլազան օրինակներովը, փոքրիկ մանրավեպերով նույնիսկ, կուգան հագեցնելու ընթերցողին ծարավը:

Կարևորությամբ նշելու եմ նաև Քարոզագիրքին զուտ հոգևոր և բարոյական նկարագիրը: Արդեն անոնք են մնայունն ու կենսականը: Տեր Հովսեփ իր քահանայական պաշտոնին հավատարիմ մնալով ամեն հոգևոր պատգամ համարձակությամբ և կենսախինդ լավատեսությամբ տված է առանց կրկնաբանելու, անտես չառնելով անոր մեջ և կամ անոր կից բարոյախոսական կարևոր բաժինը: Բարոյական դասը, որ այս անգամ կուգա Ավետարանի անսպառ աղբյուրեն կլրացնե հոգևոր նույն պատգամը, ճիշտ այնպես, ինչպես Քրիստոս մեր Տերը անբաժան պահեց երկուքը՝ հոգևորն ու բարոյականը, սորվեցնելով Իր աշակերտներուն ու հետևորդներուն բարոյական արժեքներու կիրարկումը՝ որպես լրում

Աստուծո պատգամին և խոսքին:

Գիրքը հիմնապես *«Վերադարձ»-ի* հրավեր մըն է դեպի Քրիստոս, այնպես, ինչպես Անառակ Որդին շեղելե ետք վերադարձավ իր հոր տունը՝ զղջալով և սակայն որդիին համար սիրո մեծագույն դասը եղավ իր հոր համբուրելի ընդունելությունը որպես իր հարազատ որդին, որ կորսված էր և գտնված:

Դոկտ. Զավեն Ավագ Քահանա
Արզումանյան

ՍԻՐՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«ԵՎ ԵԹԵ ՈՒՆԵՆԱՄ ԱՄԲՈՂՋ ՀԱՎԱՏԸ ՄԻՆՉԵՎ ԻՍԿ ԼԵՌՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՉԱՓ, ԲԱՅՑ ՍԵՐ ՉՈՒՆԵՆԱՄ, ՈՉԻՆՉ ԵՄ...» (Ա. ԿՈՐՆԹ. 13:3):

Մեծ Պահքի շրջանի մեջ գտնվելով, վստահ եմ, որ ամենքս էլ մեր հաճույքներին ու ցանկություններին սահմանափակումներ ենք դրել և բոլորս էլ գտնվում ենք ապաշխարության մեջ: Ապաշխարություն, այսինքն՝ հեռացում աշխարհից, զսպում մեր հաճույքների, ախորժակի և շռայլության: Ամեն մի զսպվածություն ու չափավորություն անիմաստ է, եթե այն չի տրվում հանուն աստվածահաճո գործերի: Զսպել ախորժակը, ոչ թե իր կազմվածքի ու առողջության, այլ՝ իր չկերածը սովածին տալու համար: Չշռայլել՝ ոչ թե իր քսակը ավելի մեծացնելու, այլ՝ ողորմության համար: Ներել՝ սիրելու համար... Շատերը պահքը դարձնում են նպատակ, այնինչ այն իբրև միջոց պետք է ծառայեցնել: Շատերն էլ մյուս ծայրայեղութեան մեջ են ընկնում. ընդհանրապես բացառելով պահքի նշանակությունը:

Բայց այդ բոլորից վեր կանգնած է մի առաքինություն, առանց որի մենք ոչինչ ենք, իսկ եթե այն ունենք, իրապես երանելի ենք:

Դա ՍԵՐՆ է, առաքինություն, առանց որի անիմաստ է դառնում ամեն ինչ: Սերն է, որ իմաստավորում է պահքն ու ծոմապահությունը, առանց նրա՝ չկա քրիստոնեություն: Սերն է, որ իմաստավորում է աղոթքն ու ծեսը, առանց նրա՝ չկա հավատք: Սերն է, որ իմաստավորում է մարդկային հարաբերություններին, առանց նրա՝ չկա Եկեղեցի: Սերն է, որ ստեղծեց աշխարհը, առանց նրա՝ չկա մարդկություն: Սերն է, որ փրկեց աշխարհը, առանց նրա՝ չկա փրկություն: Աստված սեր է, առանց նրա՝ մենք ԱՆԱՍՏՎԱԾ ենք:

Միջկրոնական և ազգերի միջև իրար նկատմամբ ունեցած ատելությունները գալիս են սիրո պակասից:

Փողոցով քայլելիս արժանացա մի քրիստոնյա հավատացյալի քմծիծաղին: Զարմանալի է, մենք երկուսս էլ նույն Աստծուն ենք պաշտում, որտեղի՞ց այդ չարությունը: Հասկանում եմ, թե՝ ո՞րտեղից: Սիրո պակասից: Ինչպես լույսի պակասը խավարն է, այնպես էլ սիրո պակասը՝ ատելություն է ծնում:

Աստված աշխարհը և մարդուն սիրով ստեղծեց: Եվ ամեն բան բարի էր, գեղեցիկ ու հավասարակշռված: Բայց կամաց- կամաց սերը պակասեց: Առաջին մարդը՝ Ադամ, մեղանչեց, Կայենը նախանձից սպանեց իր եղբորը՝ Աբելին: Ատելությունը մտավ աշխարհ: Աստված սեր է, բայց նաև արդար դատավոր է: Աստված չկործանեց մարդկությունը, այլ միայն ջրով մաքրեց ատելությունն ու անհավատությունը: Իսկ սերը չկործանեց, այլ նրան տապանի մեջ ապահով իջեցրեց Արարատի գագաթին: Նորից հավասարակշռություն տիրեց աշխարհի վրա: Եվ նորից սիրո պակաս՝ մեղսալից ՍՈԴՈՄ: Երկու հազար տարի առաջ՝ նույնպես աշխարհն ապականված ու անսեր էր: Բայց այս անգամ Աստված չկործանեց այն, այլ՝ *«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16):*

Աստված իմանալով հանդերձ, որ չարությունը շատ է և հնարավոր է, որ Իր Միածին Որդուն չարչարեն, տանջեն ու խաչեն, ուրիշ ելք չտեսավ և աշխարհ իջավ ինքը' Սերը: Սուրբ Ներսէս Շնորհալին գրում է.

«Մերդ սիրով խոնարհեցիր...»:

Եվ խաչվեց սերը' Հիսուս Քրիստոս, տալով Իր պատգամը *«Սիրեցեք միմյանց»:*

«Եթե խօսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ' ծնծղաների, որ դողանջում են: ...Եվ եթե իմ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Սերը երբեք չի անհետանում, թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ՝ պիտի լռեն, թե գիտություն՝ պիտի

անցնի... իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանհետանա»:

«Արդ մնում են հավատ, հույս, սեր. Սրանք՝ երեքը, և սրանցից մեծագույնը սերն է» (Ա. Կորնթ. 13:1, 3, 8-10, 13):

Ահա Պողոս Առաքյալի օրհներգը: Ոչ թե օրենքը, այլ օրհներգը, որովհետև սերը օրենք չի ճանաչում. Սերը՝ օրհնություն է:

Այժմ հարց տանք իրար ու անկեղծ լինենք մեր պատասխանների մեջ: *«Կարևո՞ր էր արդյոք, որ Հիսուս ծնվեր Բեթղեհեմում և ինչո՞ւ»:* Հիսուսի ծնվելը Բեթղեհեմում կարևոր էր, թե կարևոր չէր, այնքան էլ էական չէ, այլ՝ գլխավորն այն է, թե մենք ինչքանո՞վ ենք տեղ տալիս Նրան *մեր սրտի ու հոգու մութ քարանձավում կամ* արդյոք Սիրո Արքան ծնվե՞լ է մեր սրտի և հոգու մեջ: Երկնքում, այո փայլում է Սիրո աստղը և ճանապարհ ցույց տալիս մոգերին, բայց նրա ճառագայթները որքանո՞վ են լուսավորում մեր հոգին և մենք արդյո՞ք դեպի այդ աստղն ենք առաջնորդում մեր կյանքի անիվը: Հիսուս խաչվեց ու Հարություն առավ, իսկ գուցե այն այդպես էլ խաչվա՞ծ է մնացել մեր հոգում կամ նրան այդպէ՞ս էլ հարություն չտվեցինք մեր հոգու գերեզմանում: Եվ այդպես էլ փակ մնաց այն՝ ատելության, չարի, նախանձի ու նենգության հսկա գերեզմանաքարով, որը նույնիսկ Հիսուս չի կարող շարժել, երբ մենք այդ չցանկանանք:

Աստծուն հավատացողը բնական է, որ ատում է սատանային: Բարուն հավատացողը, ատում է չարին: Աստծուն հավատալով չենք կարող ատել մեր եղբորը:

«Եթէ մեկն ասի, թե սիրում է Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում, ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20): Ատելությունը չարիքի արմատն է: Այն արմատախիլ անելու միակ ուժը՝ Սերն է: Չպետք է ատել մարդկանց: Սերը կյանք է:

Մեծ Պահքի ապաշխարության շրջանին այս մտածումները բոլորիս մտքով էլ կարող են անցնել: Սրանք մտորումներ են, որոնք հուզում են ամենքիս, որովհետև ի վերջո իբրև մարդիկ, բոլորս էլ անզոր ենք մեր Տիրոջ զորության առաջ: Ամեն:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ, ՈՐ ՅԱՅՍՄ
ԱՒՈՒՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ» (ՇԱՐԱԿԱՆ):
«ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՈՐ ԱՅՍՕՐ ՀԱՅՏՆՎԵՑԻՐ»:

«Ի՞նչ պատահեց երկու հազար տարիներ առաջ», ամեն տարի այս հարցն ենք տալիս ու հուզումով պատասխանում., թե՝ *«Ծնվեց Մանուկ Հիսուսը»* ու շարունակում ենք. Թե՝ *«Ո՞վ էր Նա, ինչո՞ւ աշխարհ եկավ և ի՞նչ նպատակի համար»:* Հիսուս ծնվեց պարզ մի մսուրում Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքի քարայրներից մեկում անշուք ու անաղմուկ: Նա չարժանացավ մեծամեծ պատիվների, չմեծացավ պալատում, չհագնվեց գեղեցիկ հագուստներ, չապրեց ըստ պահանջի, սակայն դրա փոխարեն նա տիրացավ ամենամեծ փառքին. երկնքի հրեշտակները երգեցին ու գովերգեցին Նրա Սուրբ Ծնունդը՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: «Բարձունքների մեջ Աստծուն փառք և երկրի վրա խաղաղություն ու մարդկանց միջև հաշտություն» և դրանից բացի մանուկ Հիսուսը գրավեց պարզ հովիվների ուշադրությունը:

Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանն ասում է.

«Խոնարհության, հնազանդության, աղքատության և բարեպաշտության այդ անլուռ քարոզը, քարանձավից և մսուրից արտասանված, փոխադարձվեց փառաբանությամբ, որը հրեշտակները հնչեցրեցին երկնային բարձրությանց մեջ արձագանքող անհուն մի երգով և, որը հովիվները արտահայտեցին երկրպագությամբ, իրենց հոգիների բովանդակ երկյուղածության մեջ: Բնության ծոցում իրենց ամբողջ կյանքը բարության և խաղաղության մեջ քաղցրացրած այդ լռակյաց էակները, որոնց խոսքը իրենց սրինգների երգն էր միայն եղել երկնքի ու երկրի գեղեցկությունների առջև, այդ օրը զարմացրեցին բոլոր նրանց լսողներին, ինչպես ավետարանիչն է վկայում, հավատքի և սիրո այնպիսի խոսքերով, որոնք անտարակույս գերագույն մի ներշնչումից էին թելադրվում նրանց» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե.

Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 113):

Իսկ Արևելքից եկող մոգերը երկնքում փայլող աստղին հետևելով, եկան Հիսուս Մանուկի մոտ, երկրպագեցին Նրան և գեղեցիկ նվերներ տվեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս:

Դարեր շարունակ մարդիկ մոգերի կողմից Հիսուսին տրված յուրաքանչյուր նվերին կարևոր նշանակություն են տվել: *«Ի՞նչ են նշանակում այս նվերները և ի՞նչ կարևորություն է տրվել սրանցից ամեն մեկին»:*

Առաջինը՝ ՈՍԿԻՆ, *ամենամաքուրը մետաղներից, գեղեցիկն ու գրավիչը: Ոչ ժանգոտվում է և ո՛չ էլ փչանում, կարող է խորհրդանշել հոգին: Թագավորին հատուկ նվեր է.* այն լինելով մետաղների թագավորը, արժանի նվեր եղավ *Մարդկանց՛ Թագավորի* համար:

Երկրորդը՝ ԿՆԴՐՈՒԿԸ ԱՆՈՒՇԱՀՈՏ ԽՈՒՆԿՆ է, *որը ծխվում է Աստծու առաջ և քահանային հարմար նվեր է.* այն օգտագործվում էր և այսօր էլ գործածվում է Սուրբ Խորանի սպասարկության ու այլ ծիսակատարությունների ժամանակ: Քահանան պաշտոնի բերումով մի կամուրջ է Աստծու և մարդկանց միջև, ուստի մեր Տերը իբրև Քահանայապետ, մեզ վերստին արժանացրեց Աստծու ներկայությունը ունենալ մեր մեջ:

Երրորդը՝ ԶՄՈՒՌՍԸ, *որը գործածվում էր մեռածների մարմինը ավելի երկար պահպանելու համար,* այսինքն՝ *զմռսելու համար: Այն խորհրդանիշն է հանդիսանում մեր մարմնի, որն իբրև Աստծու տաճար պիտի ընծայվի Նրան և պահվի փչանալուց:* Հիսուս աշխարհ եկավ մարդկանց մեջ ապրելու և խաչի վրա Իր կյանքը զոհեց նրանց փրկության համար: Մոգերը իրենց բերած գեղեցիկ նվերներով գուշակել էին, թե Հիսուս պիտի լիներ ճշմարիտ Թագավորը, կատարյալ Քահանայապետը և ամբողջ մարդկության Փրկիչը:

Երուսաղեմի միաբան Եղիշե Եպիսկոպոս Դուրյանը գեղեցիկ կերպով է բնորոշում Հիսուսի Ծնունդը.

«Ո՞ւր է նա»: - Բայց ահավասիկ, այստե՛ղ ձեր աչքի առջև երևում են մուրն ու խանձարուրը, չե՞ք տեսնում նրա մեջ հանգչող հրաշալի Մանո՛ւկին, Կույս Մո՛րը...:

«Գրքերն ու գրքի մարդը մինչև այստեղ կարող են մեզ

տանել...: Ավելի՜ հեռուն գնալու և այս տեսարանից այն կողմ փայլատակող ճշմարտությունը ողջունելու համար պետք ունենք Հավատքի՝ Մոգերից ժառանգված նույն լույսին, որը գիտի, թե ուր վերջապես պիտի արձակի իր մաքուր ճաճանչը...»

...Որևէ մեկը, որը կմոտենա Հիսուսին և չունի իր Հավատքի պայծառության մեջ փայլող լույսը, չպիտի կարողանա հասկանալ «այն մեծ և սքանչելի խորհուրդը որ Հայամ Ավուր Հայտնեցավ... (Եղիշե Եպիսկ. Դուրյան, «Ո՞ւր է որ ծնավ», Երուսաղեմ):

Սուրբ Ծննդյան այս գեղեցիկ օրը, հասկանալի է, թե ի՞նչ է մեզանից սպասվում: *«Մոտեցեք Աստծուն և վերցրեք լույսը»: Հաղորդվեցեք և տեսեք թե ինչքան քաղցր է Տերը» (Պատարագամատույց)* Սուրբ Պատարագին երգված խոսքերը, պարզ են դարձնում, թե ի՞նչ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությունը: Նպատակը մեկ է՝ հայ հավատացյալների կյանքում ավելի ուժեղ կերպով արմատավորել Հիսուսի օրինակը ու մաքուր մի կյանք ապրելու գիտակցությունը:

Ամեն մարդ ունի իր ծննդյան օրը, երբ ամեն տարի իր մտերիմներով և հարազատներով հավաքվում են ու նշում այն: Սակայն, երբ նշում ենք Հիսուս Քրիստոսի ծնված օրը, այն չենք ընկալում իբրև տարեդարձ, այլ ամեն տարի տոնում ենք որպես խորհրդավոր ու սքանչելի մի Ծնունդ, Ծնունդ, որն իր հետ բերում է նոր հույզեր, նոր ապրումներ, նոր սպասելիքներ և նոր անակնկալներ: Երբ մի երեխա է ծնվում, նկատի են առնում, թե ո՞ր երկրում ծնվեց ու ինքնաբերաբար նա դառնում է այդ երկրի քաղաքացին: Սակայն որտե՞ղ է ծնվում մեր Տերը ամեն տարի, ո՞ր երկրի քաղաքացին է Նա: Հիսուս ծնվում է բոլոր նրանց մեջ, ովքեր պատրաստ են ընդունելու Նրան իրենց հոգիներից ներս՝ իբրև մսուր:

Նորից իր խոսքն է ասում Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանը.

«Այդ մեծ և ճշմարտապես սքանչելի Խորհրդի առջև ի՞նչ պիտի լինի մերը, ի՞նչպես պիտի փառաբանենք մեր Փրկչի ծնունդով մեզ հայտնված մեծ ճշմարտությունը: Ամեն քրիստոնյա, որ տարվա մեջ գեթ մի անգամ հաղորդության մեջ է դնում իր հոգին այս տոնի իմաստի հետ, այդ հարցը պիտի տա ինքնիրեն...» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյանի», Ե. Քարոզներ,

Երու- սաղեմ, 1940, էջ 115):

Ոչ մի թագավոր իր ունեցած ամբողջ իշխանությամբ և ուժով, ոչ մի իմաստուն փիլիսոփա ու ոչ մի բռնատեր, չեն կարողացել երկրագնդի վրա այնպիսի փոփոխություններ ու հեղաշրջում մտցնել, ինչպես արեց պարզ մսուրում ծնված Մանուկ Հիսուսը: Մեռելները հարություն առան, հիվանդները բժշկվեցին, թշնամիները բարեկամացան, մեղքերի մեջ թավալվողները՝ սրբվեցին... Այո, այս բոլորը եղան ու շարունակվում են կատարվել ամեն օր, սակայն միայն նրանց համար, որոնք իրենց ամբողջ կյանքում ճանաչեցին ու այսօր էլ ճանաչում են ճշմարիտ Աստծուն:

Երջանկահիշատակ Գարեգին Ա. Հայրապետը ասել է. *«Քիչ է ասել Աստված քաղցր է, քիչ է ասել թե Աստված սեր է, մինչև որ այդ սերը չներթափանցի ու անձի ներքին էության, ներքին բովանդակության մաս չդառնա, հավատքի մեջ չշաղախվի, այդ ճշմարտությունը կմնա վերացական մի ճշմարտություն՝ թղթի վրա՝ մտքում»:*

Քրիստոնեական աշխարհում Սուրբ Ծննդյան տոնի առթիվ բազմաթիվ սովորություններ ու ավանդություններ են տեղի ունենում, որոնք երկրից երկիր, քաղաքից քաղաք և գյուղից գյուղ տարբերվում են: Սակայն այդ բոլոր նվիրականացած սովորությունների մեջ Անդորայի իշխանության տակ գտնվող *Պիրենյան լեռների մի գյուղում* իրապես օգտակար, գեղեցիկ ու ամբողջովին քրիստոնեական մի սովորություն կա:

«Ամեն տարի Սուրբ Ծննդյան Տոնի օրը, եկեղեցու Սուրբ Մեղանի մի անկյունում, բարձերի մեջ նստեցնում են գյուղի ամենաաղքատ մանուկին ու բոլոր բնակիչները Արևելքից եկած մոգերի օրինակով այցելում են նրան և Հիսուսի դերը կատարող մանուկին ընծայում ամեն տեսակ պարգևներ՝ արծաթ, ոսկի, դրամ, հագուստ, ինչպես նաև գառնուկ, ուլիկ, հավ ու այլ նվերներ: Բնականաբար բոլոր մեծ ու փոքր զանազան պարգևները պատկանում են միայն ու միայն մանուկին, որը նստած է Սուրբ Մեղանի մի անկյունում, ժպտուն կամ լալագին և կամ անտարբեր անցուդարձին: Այդ մանուկը մի քանի ժամվա ընթացքում թոթափում է իր վրայից աղքատի զգեստներն ու թշվառությունը և դառնում ոսկեղենիկ իշխանիկ»:

Այո, մեծ է մարդկանց տառապանքը: Այսօր աշխարհի տարբեր երկրներում դժբախտաբար դեռևս կան ընտանիքներ, որոնք անտուն են, *առանց տաքության, առանց հագուստի և ուտելիքի, մարդիկ, որոնցից շատերը զրկված են* տարրական խնամքից ու մանավանդ անհույս են, բազմահազար երեխաներ, որոնք զուրկ են մայրական գուրգուրանքից ու փայփայանքից:

Աղոթենք և չզրկենք նրանց մեր խնամքից ու օգնությունից:

«Հավատացյալի համար չկա փառաբանության ավելի մի մեծ գործ, քան ցանկություն հայտնել իր մեջ ունենալու Աստվածային կյանքը և կամ մոտենալու Աստծուն, միանալու Նրա հետ ու ծնելու իր մեջ, այսինքն՝ միշտ սրբագործելու իր անձն ու կյանքը Նրա սիրով և հավատքով. . .» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 115):

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԴԿ.

«ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ»

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Խորհուրդը, որ այսօր հայտնվեց մեծ է և սքանչելի. հովիվները երգում են հրեշտակների հետ ու ավետիս տալիս աշխարհին:

Մի նոր Արքա ծնվեց Բեթղեհեմ քաղաքում, մարդկանց որդիներ, օրհնեցեք , որովհետև մեզ համար մարմին առավ:

Երկնքի ու երկրի անբավելին խանձարուրի մեջ փաթաթվեց և առանց Հորից բաժանվելու սուրբ այրում բազմեց:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»
«Օրհնեալ է Յայտնութիւն Քրիստոսի»
«Զեզ եւ մեզ մեծ աւետիս»: Ամեն:

ՀԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿԻ ԾՆՈՒՆԴԸ

«ԱՅՍՕՐ ՏՕՆ Է ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ. ԱՒԵՏԻՍ.
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ, ԱՒԵՏԻՍ»
(ՇԱՐԱԿԱՆ)

«ԱՅՍՕՐ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ԵՎ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ Է. ԱՎԵՏԻՍ»:

Սուրբ Ծննդյան այս գեղեցիկ օրերին հայ քրիստոնյային հատուկ ցնծության և ողջույնի բառերն են սրանք, որոնք բխում են նրա անկեղծ սիրուց ու հավատքից:

Երբեմն թերահավատ մարդիկ ինձ հարցնում են, *«Տեր Հայր, կարիք կա՞ր, որ Հիսուս աշխարհ գար* և *մանավանդ պետք էր, որ հայ ժողովուրդը, ընդուներ Նրա Վարդապետության Լույսը»:* Մեր երջանկահիշատակ Հայրապետները այսպես պիտի պատասխանեին. *««Եկել էր ժամանակը* և *Հիսուս պետք է ծնվեր, որպեսզի մարդկությանը փրկեր մեղքերի ծանրությունից»: «Ատված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ.3:16),*- վկայում է Ավետարանը:

Հիսուսի ծննդյան խորհուրդը մեզ մտածել է տալիս, թե Նրանով ամբողջ մարդկության առջև բացվեց կյանքի մի նոր ճանապարհ:

Նրա Ծնունդով այսօր բոլորս միանում ու դառնում ենք մի մարմին: Այսօրվա հոգևոր գեղեցիկ երգերը մեզ դեպի մսուր են հրավիրում, ծնկի գալու այն երկնային Մանկան առաջ, որը հանդիսացավ մեր Փրկիչը. *«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»:* Մեզ առաջնորդող աստղը բանականությունը չէ, այլ հովիվների և իմաստուն մոգերի առողջ բարեպաշտությունը, սքանչացման և հիացմունքի նվիրական զգացմունքը, վսեմի ու աստվածայինի առջև:

«Այսօր արեւն արդարութեան. աւետիս.
Երեւեցաւ ի մէջ մարդկան. աւետիս»:
«Այսօր արդարության արևը երևաց
մարդկանց մեջ. ավետիս»:

Մեզանից երկու հազար տարիներ առաջ հնչած այս

օրհներգը, այսօր, նոր պայծառությամբ և ուժգնությամբ է հնչում ու մեր սրտերը լցնում հրճվանքով և ծննդյան ուրախությամբ:

Հավաքվել ենք, որպեսզի մեկս մյուսին բարի լուրը տանք, թե՝ ծնվեց Օծյալ Փրկիչը:

Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանն ասում է.

«Գոմը հիմա փոխվել է մի վեհ վայրի, նրա վերևում լսվում են երկնային երգեր, մի աստղի լույսի միջից նրա վրա ծագել է Աստծու փառքը. Հովսեփը, նրա պայծառությամբ վերջնականապես խաղաղեցրած իր միտքն ու հոգին, աստվածային մանկան առաջին երկրպագողն է. նրան հետեում են հրեշտակից բարի լուրը ստացած հովիվները, որոնք իրենց սրտերի անմեղությունը և իրենցից ծնված հավատքն են մատուցում ու մոգերը, որոնք իմաստության, գիտության և զորության տուրքն են նվիրում Նրան: - Հյուրամերժ հյուրանոցները փակված են Աստծու սիրո առջև. Նրա առջև բացվել են խոնարհների հարկերը. արդարությունը, ճշմարտությունը, սրբությունը, բարի հովիվների ժառանգությունն են. նրանց միջոցով և նրանց հետ պիտի իրականանա փրկությունը երկրի վրա» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյան» Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 109):

Սուրբ Ծննդյան օրը թող առիթ լինի մեր թերություններն ու սխալները ուղղելու և Քրիստոսի ուսուցումների համաձայն սկսելու մի նոր կյանք: Այս կյանքի դժվարություններից հաղթանակած դուրս գալու համար, հույսով ու հավատքով լցվենք, սպասելով, որ վաղվա օրը պիտի բացվի ավելի արևոտ ու պայծառ, բանի որ մեր ժողովուրդը իր պատմության ընթացքում երբեք չի հուսահատվել, նույնիսկ իր ամենածանր վիճակում, որովհետև միշտ իր հայացքը ուղղել է ու հետևել Բեթղեհեմի Աստղին:

Աստվածորդին Իր Ծնունդով մեր առջև բացում է կյանքի մի նոր ծնունդ: Դա ֆիզիկական ծնունդը չի, այլ՝ հոգևոր մի ծննդի հրավերն է:

Աշխարհը փոթորիկների մեջ է, գրեթե ամեն կողմ տեղի են ունենում պատերազմներ, երկրաշարժեր, ցեղասպանություններ, ինչո՞ւ, որովհետև Տիրոջ լույսը պակաս է և խավարն է տիրում:

Քրիստոսի կանչը վերանորոգվելու, վերածնվելու և բարոյապես վերազինվելու համար ավելի քան երբեք այժմեական է: Դժբախտաբար մարդիկ անտարբեր են, սակայն քրիստոնյան չի կարող անտարբեր մնալ և հոսանքից քշվել, այլ պետք է հոսանքին հակառակ կողմով թիավարելու դժվարին ու պատասխանատու գործը ստանձնի, ինչքան էլ այն ծանր լինի:

Շարականագրի բառերն են. *«Աստված մարդացավ և օրենքի տակ մտավ»,* որպեսզի մենք կարողանանք ճանաչել նրան Իր ամենաճշմարիտ իսկության մեջ: Այս է Հայ *Եկեղեցու ցնծերգության և հաղթական հայտարարության իմաստը, թե՝* «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան, աւետիս»:

Բայց ինչպես կարող ենք հասկանալ, թե՝ *«Աստված մարդացավ»:*

Պարտիզպանի պատմությունը մասամբ կարող է լույս սփռել մեր այս ասածի վրա.

«Պատմվում է, թե մի պարտիզպան կար, բարի ու մարդասեր մի մարդ: Սակայն այս բարի մարդը չէր կարողանում հավատալ թե Հիսուս Քրիստոսի անձի մեջ Աստված մարդացավ: Դրա համար էլ Սուրբ Ծննդի նախօրյակին, մի փոթորկոտ օր, նա տունն է մնում, իսկ ընտանիքի բոլոր անդամները գնում են եկեղեցի, տոնելու այդ իրողությունը:

Հանկարծ պատուհանի դրսի կողմում նա տեսնում է թռչունների մի խումբ, որոնք ձյունամրրիկի մեջ կորած, շփոթված, իրենց թևերը թափահարելով ապակու դեմ, կարծես հուսահատորեն ապաստարան էին փնտրում:

Պարտիզպանը անմիջապես դուրս է վազում դեպի հարդանոց (գոմ), բացում դռներն ու լույսը վառում, բայց թռչունները ներս չեն մտնում: Հացի փշրանքներ է ցանում ձյան վրա, բայց թռչունները չեն փորձում նույնիսկ հետևել դրանց: Ապա նա փորձում է նրանց բաց դռնից ներս հրապուրել իր ձեռքերը շարժելով ու

ձայներ արձակելով, բայց կրկին անօգուտ:

Նա հուսահատված, ինքնիրեն ասում է. «Երևում է նրանք չեն հասկանում, թե ես ի՞նչ եմ ուզում ասել»: Ու մտածում է. «Եթե միայն ես կարողանայի թռչուն դառնալ նրանց պես, թերևս նրանք ինձ հետևեին դեպի լույսը»: Եվ այդ պահին լսում է Ծննդյան զանգերի ձայնը:

Մի պահ նա ուշադիր լսում է ու անկախ իր կամքից ձյան վրա ծնկի իջնելով աչքերը դեպի երկինք բարձրացրած, շշնջում է.

«Հիմա եմ հասկանում, թե ինչո՞ւ դու այդպես արեցիր: Աստված՝ մարդացավ»:

Քրիստոսի Ծննդյան հրաշքը մեծագույն նշանն է Նրա ներկայության մեր մեջ:

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանն ասում է.

«Հայ ժողովրդի զավակները, դարեր շարունակ, սերնդից սերունդ, ուխտի են եկել Բեթղեհեմի խոնարհ մսուրին, ուր ծնվեց խոստացված Փրկիչը մարգարեների նախագուշակած մեսիան, «Էմմանուելը,», «մարդացյալ Աստվածը», որ մեզ հետ է միշտ, Իր խոստման համաձայն»:

«Այս հավատքն է, որ հավերժորեն պայծառ է պահել Հայ ժողովրդի զավակների նայվածքը դեպի Բեթղեհեմի աստղը և անշեղ առաջնորդել մեր զավակների ապրելու կամքը, բարոյական խղճմտանքը ու գործելու և ստեղծագործելու աննկուն ոգին, համաձայն հրեշտակի երկնային պատգամի: Եվ հակառակ աշխարհի չարագործ ուժերի կործանարար ծրագրերի, մենք դեռ ապրում ենք ու պիտի ապրենք»:

Այսօր առավել ևս Հիսուսի Ծնունդը մեր հոգիներում արթնացնում է մի նոր աղոթք, դեպի Աստծուն ուղղելու մեր խնդրանքը աշխարհի խաղաղության, մեր ազատ և անկախ Հայրենիքի ու Արցախի անսասանության համար: Հավատում ենք, որ Սուրբ Ծնունդը մեզ համար Աստծուց հասած մի շնորհք է, որը մեզ տալիս է անսպառ ներշնչում ու եռանդ, ապրելու և նոր մի իմաստ տալու մեր այս ժամանակավոր կյանքին:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»

«Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»: Ամեն:

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«ՄԻԹԵ ԿԱՐԵԼԻ՞ ԲԱՆ Է, ՈՐ ՀԱՐՍԱՆՔԱՎՈՐՆԵՐԸ ՍՈՒԳ ՊԱՀԵՆ, ՔԱՆԻ ՓԵՍԱՆ ՆՐԱՆՑ ՀԵՏ Է»

(ՄԱՏԹ. 9:15)

Մեր Տերը այս հարցը ուղղեց նրանց, որոնք չէին հասկացել պահքի բուն նպատակը: Նրանք չգիտեին, որ Հիսուսի աշակերտները ունեին մի ուրիշ կերակուր, որն ամեն օր ճաշակում էին Նրա բերանից բխող օրհնաբեր խոսքով և անմիջականորեն վայելում նույնինքն Աստծուն: Հետևաբար, կարիք կա՞ր մաքրվելու ն մոտենալու Աստծուն, երբ Նա Ինքն էր մոտեցել մարդկանց:

Մեր Տերը մեզ հետ չէ այսօր, սակայն մարդիկ զգո՞ւմ են արդյոք Նրա ներկայությունը իրենց մեջ, եթե այդպես է, ապա ինչո՞ւ են շարունակվում զանազան տեսակի մեղքերի շարանները. ոխը, ատելությունը, նախանձը, վիճաբանությունները ն այլն: Տերը մեր կողքին է, բայց մենք մերժում ու հեռացնում ենք Նրան մեզանից, ինչպես Անառակ Որդին, բայց երբ անդրադառնանք ն ցանկանանք վերադառնալ, կարիքը պիտի ունենանք մի կողմ դնելու աշխարհային մտահոգությունները, որոնք խճողել են մեր մտքերն ու հոգիները. կարիքը պիտի ունենանք վերանորոգվելու, մտածելու ն մեր ներաշխարհում ամփոփվելու ու լռության մէջ լսելու Տիրոջ ձայնը: Այս է իսկական պահքը: Աստված ուզում է, որ մենք իբրև Իր հարազատ զավակները մշտապես ուրախ լինենք, բայց մյուս կողմից էլ ընդունում է զղջումի և անդրադարձի համար մեր թափած արցունքները նրանք նկատելով որպես մերժման բողոքներ մեր կատարած սխալների ու մեղանչումների դեմ, խոնարհվում է, մխիթարում ու հույս է տալիս մեզ:

Պահքի կարևորությունը շեշտելով և բուն իմաստն ու բովանդակությունը բացատրելով Ավետարանիչը նկարագրում է, թե Հովհաննես Մկրտչի աշակերտներին տարօրինակ էր թվում այն հանգամանքը, որ Հիսուս Իր առաքյալներին և հետևորդներին չէր ստիպում պահք պահել, ինչպես իրենց ուսուցիչն էր անում: Հիսուս նրանց պատասխանում է. *«Միթե կարելի՞ բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի*

փեսան նրանց հետ է, բայց կգան օրեր, երբ փեսան նրանցից կվերցվի, և ապա ծոմ կպահեն»:

Սրանով մեծ Վարդապետը հստակ ցույց էր տալիս, որ պահքը, ծոմը, աղոթքը միջոցներ են և ոչ թե նպատակ: Իրական նպատակը Աստծուն մոտ լինելն ու Նրա ներկայությունը զգալն է: Եկեղեցին, հավատարիմ Քրիստոսի խոսքին, խրատում է մեզ երեք բան անել - *աղոթել, պահեցողություն անել և ողորմություն տալ:*

Աղոթքը մեզ *մոտեցնում է Արարչին, պահեցողությունը* մարմնական սննդից ավելի շեշտում է *հոգևոր սննդի կարևորությունը, իսկ ողորմածությունը* առիթ է տալիս մեզ մեր ունեցածը բաժանելու *Աստծու զավակների՝ տվածների, աղքատների, կարիքավորների, բանտարկյալների և հիվանդների հետ:*

Աստված մեզ կանչում է, որպեսզի մենք Իրենով երջանիկ լինենք և ներկա ու ապագա կյանքի ապահովությունը ունենանք: Առանց Աստծու՝ կյանքը մութ է: Նրա թևերի տակ ապրել նշանակում է' հավիտենական ապահովություն ունենալ, քանի որ Նա է բոլոր բարիքների աղբյուրը: Աստված մեզ չի ստեղծել միայն այս ժամանակավոր կյանքի համար, որ մի քանի տարիներ ապրենք, տառապենք ու մեռնելով՝ փոշիանանք: Նա Իր պատկերով ստեղծած մարդու համար մեծ ու փառավոր ապագայի ծրագրեր ունի, որոնք իր ժամանակին անպատճառ պիտի գործադրի: Մի խաբվեք, գերեզմանը կյանքի վախճանը չէ: Մահը այն դուռն է, որի միջով այս կյանքից հավիտենականության պիտի անցնենք: *«Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում»:* Այս է Ավետարանի պատգամը, որը հավիտյան չի փոխվում: Չխաբվենք, մեր անհավատությամբ՝ ոչ Աստված Իր գոյությունից կդադարի և ոչ էլ Նրա դատաստանը կվերջանա, բայց Նրան չհետևելով՝ մենք կկորչենք: Հետևաբար՝ *միշտ աղոթեցեք:* Ամեն:

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՐԺԵՔԸ

Մեր Եկեղեցում Մեծ Պահքին կարևոր տեղ է տրված: *«Ինչո՞ւ: Ի՞նչ արժեք և նշանակություն ունի այն: Անցյալում մեր հայրերի սահմանած օրենքները ի՞նչ կապ ունեն այսօրվա մեր կյանքի հետ: Երբ ամբողջ աշխարհը փոխվել է և փոխվում է, արդյոք ավելորդ չէ՞ խոսել «պահք-մահքի» մասին: Եվ դեռևս, Մեծ Պահքի հետ կապված ուրիշ բաներ, մեղք, մեղքի գիտակցություն, զղջում, ապաշխարություն կոչվածը և այլն: Ծիծաղելի չէ՞ արդյոք այսպիսի բաների մասին խօսելը գիտության և աստղանավորդության ներկա դարում»:*

Շատերը ոչ միայն ամոթ, այլև անհանդուրժելի են գտնում վերոհիշյալների մասին խոսելը, դրանք համարելով տգիտության, սնոտիապաշտության, միամտության և նման բաների արդյունք:

Սակայն, ծառը իր պտղից է ճանաչվում:

Ներկա կյանքում երևացող չափից դուրս ազատությունը իր պտուղներն է տալիս: Մեր այսօրվա քաղաքակիրթ կյանքը լցնող մի քանի իրողությունների պարզ մատնանշումն իսկ բավական է հասկանալու, թե ինչի ենք հասել այսպես մտածելով ու գործելով:

1. *Ընտանեկան կառույցի խախտում:* Ամենուրեք ամուսնալուծումների երկար շարքը բավական է հստակ պատկերացում կազմելու այս մասին:

2. *Մեղի այլասերումը և շահագործումը:* Անբարոյականության քարոզչությունը, անչափահասների սեռային կյանքը, անհամար վիժումներն ու դրանց ցավագին հետեւանքները և այլն:

3. *Չարության աճը:* Դաստիարակությունը բոլոր ձևերով - մամուլ, վեպեր, գծանկար-պատմվածքներ, հեռուստացույց, կողոպուտներ, ավազակային հարձակումներ, առևանգումներ, բռնաբարություններ, սպանություններ, կանխամտածված սառը ոճիրներ, ահաբեկչություն և այլն:

4. *Անծրագիր, աննպատակ է անտարբեր կյանք:*

Կյանքի դեմ դառը արտահայտություններ, անվերջ դժգոհություններ, փախուստ պատասխանատվություններից՝ թմրեցուցիչների գործածությամբ կամ այլ ինքնախաբեություններով, քաջության պակասը, ծայրահեղ հուսալքումները, անտարբերությունը և բազմաթիվ անձնասպանությունները:

Այս բոլորից հետո ի՞նչ եք կարծում, կարելի՞ է սրանք թոյլատրելի, բնական և օրինաչափ համարել: Եթե այո, այն ժամանակ անուրանալի ձևով պիտի ընդունենք նաև մեղքի ներկայությունը մեր շրջապատում և մեր կյանքից ներս:

Եթե մեղքը կա և կա անշուշտ, երբեք ավելորդ չպիտի լինի խոսել զղջման ու ապաշխարության մասին:

Պարզ ու հստակ է Աստծու խոսքը և Նրա պահանջած պահեցողությունը այս է. «*Ուղղումը մեր կյանքի, թերությունների սրբագրությունը, մարդկային և ընտանեկան հարաբերությունների բարեփոխումն ու բարվոքումը, բարոյական ամուր և օրինաբեր սկզբունքների հասկացողությունը և մեր պատասխանատվությունների ու դերի գիտակցումը»:*

Պահեցողությունը միայն որոշ տեսակի ուտելիքներից մեզ զրկելու նպատակ չի հետապնդում, այլ մղում է, որ մեր անձերը զերծ պահենք հոգեկան աշխարհը փչացնող չար խորհուրդներից ու խոսքերից: Հովհան Մանդակունի Հայոց Հայրապետը ասում է. *«Պահքը միայն ուտել-խմելը չէ, այլ խուսափելն է ամեն տեսակ մեղքերից: Պահք են՝ քիչ խոսելը, չբարկանալը, չնախանձելը, վրեժխնդիր չլինելը, խոնարհությունը և հնազանդությունը»:*

Սուրբ Գրիգոր Տաթևացին ավելացնում է. *«Մատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում ու չի հոգնում: Ոմանք պահոց օրերին ոչխարի միս չեն ուտում, բայց մարդու միս են ուտում, որն ավելի ծանր մեղք է»:*

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր հավատացյալներին թելադրում է *պահք* պահել, որը նշանակում է *ուրախությամբ,* ժուժկալությամբ, *մաքրությամբ և արդարությամբ փակել մեղքի ճանապարհը:*

Ահա այս է Մեծ Պահքի արժեքը:

Աստված նմանվում է բարի և իմաստուն մի *պարտիզպանի, որը բացված ակոսներից թունա*վոր խոտերն է մաքրում, պտղատու ծառերից անպետք և ավելորդ ճյուղերն է կտրտում, որպեսզի *ծառը տեսքով գեղեցիկ, հոտավետ և քաղցրահամ* պտուղներ տա: Նա մեր բարի ու արդար գործերը և մեզ ուրախացնող բարիքները չի խլում մեզանից, այլ ընդհակառակը, ազատում է մեզ ստորացնող մեղքերից, կըրքերից ու ցանկություններից:

Ինչպես Եսայի մարգարեն ժամանակին զգուշացրեց

իր ժողովրդին սուտ մարգարեներից և հորդորեց նրանց հեռու մնալ անբարոյական կյանքից ու անարդարություններից, սիրել իրար անկեղծորեն, հավատարիմ մնալ իրենց հայրերի սուրբ հավատքին և պահել Աստծու բոլոր պատվիրանները, նույնպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին խրատում է իր հավատացյալներին հեռու մնալ սուտ մարգարեներից ու կեղծավորներից: *Հեռու մնալ* նշանակում է՝ ամուր կապվել մեր նախահայրերի սուրբ հավատքին, լինել արդարամիտ, ուղղամիտ, սիրել Աստծուն ամբողջ սրտով, մտքով ու հոգով և չհալածել Աստծու բարի սպասավորներին, որոնք իրենց հոգևոր ծառայությամբ Նրա փառքն են հյուսում: Ամեն:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԿԻՐԱԿԻ

«ՀԱՆԵՑԵՔ ՁԵՐ ՎՐԱՅԻՑ ՀԻՆ ՄԱՐԴՈՒՆ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՎ
ԵՒ ՀԱԳԵՔ ՆՈՐԸ, ԱՅՆ, ՈՐ ՆՈՐՈԳՎԱԾ Է
ԳԻՏՈՒԹՅԱՄԲ, ԸՍՏ ԻՐ ԱՐԱՐՉԻ ՊԱՏԿԵՐԻ....»
(ԿՈՂՈՍ. 3:5-13)

Բարեկենդանի Կիրակին է:

Բարեկենդան նշանակում է *բարի կենդանություն, կենաց ուրախություն,* Եվրոպական լեզվով՝ *Կարնավալ,* այսինքն *խրախճանքի, կերուխումի, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու օր:*

Այս կիրակին նվիրված է մեր նախահորը և նախամորը՝ Ադամին ու Եվային, որոնք դրախտում Աստծու օրհնության ներքո առողջ ու անհոգ երջանիկ մի կյանք էին վայելում:

Բարեկենդանի Կիրակիի հաջորդ օրվանից սկսվում է քառասնօրյա պահեցողությունը:

Շատերը կարող են հարց տալ թե՝ *«Պահեցողությունը ի՞նչ կարող է փոխել հավատացյալի կյանքում»:*

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը պատասխանում է մեզ. *«Պահքով դադարում են տհաճ մտածումները և զգայարանների շվայտությունները: Աչքերը դառնում են հստակատես, ականջները՝ հեշտ լսող, լեզուն՝ քաղցրախոս, ձեռքերը՝ բարեգործ, սիրտն՝ ուղիղ և բերանը՝ պարկեշտ...»:*

Մեր Եկեղեցու նշանավոր Հայրերից Մաղաքիա Արք. Օրմանյանը շարունակում է.

«Պահեցողությունը կամավոր ժուժկալություն է երկու տարբեր շարժառիթներով. մեղքերի թողություն և ապաշխարություն. Մյուսը՝ առավելագույն առաքինություն ու կատարելութիւն»:

Մի խօսքով ավելի պարզ ու հստակ՝ *«Ի՞նչ է Պահքը»:*

Պահքը կարող ենք ամփոփել երեք կետերի մեջ.

ա. Չափավորություն.
բ. Ինքնաքննություն.
գ. Զոհողություն:

ա. Չափավորություն: Չափավորությունը առողջության գլխավոր երաշխիքն է: Բոլոր տեսակի չափազանցությունները վնասակար են ու նույնիսկ՝ կործանարար:

Քրիստոնեական կրոնը ոչ թե զրկում է մեզ խմելուց, այլ՝ հարբեցողությունից, ոչ թե ուտելիքից՝ այլ՝ շատակերությունից: Մեր մարմինը Աստծու կողմից մեզ տրված մի պարգև է, որը կոչված է դառնալու Սուրբ Հոգու տաճարը և ոչ թե չարության ու մեղքերի բնակարան:

Մարդիկ քրիստոնեական կրոնը և պահքը սխալ ձևով են հասկանում, բողոքելով, թե՝ նա զրկանքների կրոն է, այսինքն՝ քրիստոնեությունը արգելում է վայելել կյանքի հաճույքները և այսպիսի պատճառաբանություններով շատերը հեռանում են նրանից: Մինչդեռ, քրիստոնեությունը ոչ մի բանից չի զրկում մարդկանց, բացի՝ մեղքից ու չարից:

բ. *Առիթ ինքնաքննության և զղջումի:* Ապրված մի կյանք, եթե այն չափավոր, նույնիսկ մաքուր և բարոյական առաքինություններով է անցել, բավարար չի Աստծուն հաճելի դարձնելու համար: Մարդը, ինչքան էլ իր կյանքը հիմնի բարոյական առողջ սկզբունքների վրա, դարձյալ ենթակա է մեղք գործելուն: Իսկ մեղքի զղջումը, այն սրբացնելու առաջին քայլն է: Հարց է *առաջանում. «Իսկ ինչպե՞ս կարելի է մեղքերից մաքրվել և վերանորոգվել»:* Պարզ է, երբ մեր տան մեջ մի որևէ իր է փչանում, այն տանում ենք նորոգողի մոտ: Նույն ձևով էլ մարդը, եթե ուզում է մաքրվել և վերանորոգվել, պետք է վերադառնա իր Ստեղծիչի՝ Աստծու մոտ: Բայց նախ և առաջ նա պետք է ընդունի իր սխալը, ինչպես որ մի հիվանդ պիտի հասկանա, թե բուժվելու կարիք ունի, որպեսզի կարողանա գնալ բժշկի մոտ: Ինքնաքննությունը շատ կարևոր է, որպեսզի կարողանանք մեր սխալներն ու մեղքերը տեսնել և ընդունել: Հիշենք Պողոս Առաքյալի խոսքը. *«Քննեցեք դուք ձեզ՝ տեսնելու, թե նույն հավատի մե՞ջ եք. փորձեցե՛ք դուք ձեզ. չգիտե՞ք, թե Քրիստոս Հիսուս ձեր մեջ է..»» (Բ. Կորնթ. 13:5):*

գ. *Զոհողություն:* Մեղանչական մարդու համար սխալը տեսնելը, զղջալն ու ցավելը բավական չէ, նա պետք է դա ապացուցի գործնական ճանապարհով, իսկ դա լինում է

միայն *զոհողությամբ:* Երբ գիտակցենք մեր սխալներն ու զըղջանք, Աստված էլ դրանք կնկատի իբրև զոհողություն ու կնեբի մեր մեղքերը թե այս և թե հանդերձյալ կյանքում: Բայց ինչքա՜ն չնչին է մեր զոհողությունը Աստծու անչափվելի զոհողության հետ: Քրիստոս ոչ թե իր ունեցած հարստությունից մեզ բաժին հանեց, այլ ամբողջությամբ Ինքնիրեն հանձնեց մեղավորների ձեռքը, մեծագույն զոհողությունը կատարելով մեր մեղավոր անձերի փրկության համար: Հարցը այն է, թե մենք որքանո՞վ ենք պատրաստ նվազագույն զոհողությամբ վերաշահելու Երկնքի Արքայությունը:

Այս փոքրիկ պատմությունը կարծում եմ մեր Տիրոջ զոհողության լավագույն օրինակն է.

«Մանուկներից մեկն ուզում է իմանալ թե Հիսուս ինչքան է սիրում իրեն: Մի օր, երբ եկեղեցում առանձին է մնում, ծնկի է գալիս խաչյալ Տիրոջ պատկերի առաջ և անկեղծությամբ ու միամտությամբ հարցնում Նրան. «Տէր Հիսուս, ինչքա՞ն ես սիրում ինձ»: Հրաշքով կարծես մեր Տերը պատկերի միջից խոսում է նրա հետ, ձեռքերը տարածելով խաչի լայնությամբ. «Ահա երկու ձեռքերիս լայնությամբ սիրում եմ քեզ և որովհետև այսքան շատ սիրեցի քեզ, թույլ տվեցի մարդկանց, որ մեխով ամրացնեն ձեռքերս խաչափայտի վրա, որպեսզի քո համար ունեցած սերս երբեք չնվազի»:

Պահոց քառասուն օրերը ինքնամաքրման, աղոթքի, զղջման և ապաշխարության օրեր են: Պողոս Առաքյալը Կորոսացիներին ուղղած նամակում հետևյալ սրտառուչ խոսքերն է ասում. *«Դեն գցեցեք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չար ցանկություն և ագահություն... հանեցեք ձեր վրայից հին մարդուն իր գործերով և հագեք նորը, այն, որ նորոգված է գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի. . . Որպես Աստծու ընտրյալներ, սրբեր և սիրելիներ, հագեք, ուրեմն, գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց, եթե մեկը մյուսի դեմ գանգատ ունի, ինչպես Աստված Քրիստոսով ներեց ձեզ, նույն ձևով արեք դուք» (Կորոս. 3:5-13):*

Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Գալուստյանի մեկնաբանությունը այս կապակցությամբ հետևյալն է.

«...Պետութիւններ ծնվեցին ու կայսրություններ կազմվեցին, որոնք կաշկանդեցին մարդկային բնատուր կամ աստվածատուր ազատությունը, որը բնական երջանկության նախապայմանն է:... Ներկայումս մարդկությունը հասել է այնպիսի մի վիճակի, ուր այլևս գրեթե անհնար է վերադառնալ սակավապետ կյանքին և բնության հետ հաշտ ապրելու պայմանին, ինչը համազոր է ասելու, որ մարդն անվերադարձ կորցրել է իր բնատուր երջանկությունը... Բայց չի կորցրել այն վերստին ունենալու կամ նրան վերադառնալու իր բնատուր ձգտումը...» (Շնորհք Պատրիարք Գայուստյան, «Մեծ Պահքի Կիրակիների շղթան», Սուրբ էջմիածին, 2001, էջ 35):

Այո, պետք է ապրել ու աշխատել Մեծ Պահոց խորհրդով: Թող ձեր գործերը լինեն կենդանի ու տեսանելի: Միայն Եկեղեցի գալ, մեր երեսները խաչակնքել, մոմ վառել, խունկ ծխել, գանձանակը դրամ գցել, բավարար չէ: Շատ կարևոր է, որ հաստատուն մնանք մեր պապերի հավատքի մեջ, հեռու պահենք մեզ և մեր զավակներին զանազան տեսակի աղանդներից, որոնք խորթ են մեր ավանդություններին: Նրանք գալիս են ոչխարի դիմակով իբրև գայլեր, Քրիստոսի անունով, բայց ներքուստ չարի կերպարանքով, մեր տները քանդելու, մաս մաս անելու մեր ընտանիքները, կնոջը՝ ամուսնուց, զավակին՝ ծնողից բաժանելու նպատակով: Իբրև մեր Եկեղեցու Սուրբ Ավազանում մկրտված և դրոշմված զավակներ, շարունակենք հավատարիմ մնալ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին. սիրենք մեր Հայրենիքը, ծառայենք նրա հզորացմանն ու բարգավաճմանը: Սա կլինի ամենամեծ սերը մեր սրբությունների նկատմամբ:

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԴԿ.
«ԲԱՆՆ ՈՐ ԸՆԴ <ՕՐ»

Բանն որ ընդ հօր յէութեան եւ համագոյ սուրբ հոգւոյն, զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս. զոր զարդարեալ փառօք եդ ի դրախտին փափկութեան:

Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ. քանզի զաստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան:

Վասն որոյ աղաչեա մայր աստուծոյ մարիամ. Զմիածին քո զորդին զի շնորհեսցէ ըստ աւազակին ժառանգել վերստին մեդ զդրախտին վայելչութիւն:

Բանը, որ Հօր հետ նույնն է էությամբ և Սուրբ Հոգու հետ՝ համագո, Իր պատկերը խառնեց մեր հողանյութ բնությանը, Եդեմական դրախտի մեջ դնելով:

Այնտեղ հրճվալից ցնծում էր տխրություն չճանաչող ուրախությամբ, քանզի միշտ տեսնում էր Աստծուն, Ով Իր վեհ բարձունքից իջնում էր դրախտ, Ումից ճառագայթող լույսը թափանցում էր նրա Անձի մեջ:

Ուստի Աստծու մայր Մարիամ, աղաչիր քո Միածին Որդուն, որպեսզի ավազակի նման մեզ շնորհ անի՝ դրախտի վայելչությունը վերստին ժառանգելու համար:

Մեր նշանավոր Հայրերից Սուրբ Գրիգոր Տաթևացին այսպես է մեզ խրատում.

«Մեր սրտերից հանենք չարը: Միրենք միմեանց սուրբ և անկեղծ մտքով: Դառնանք առ Աստված և Նա կդառնա դեպի մեզ: Ներենք միմյանց, որպեսզի Նա էլ մեզ ների: Գթանք աղքատներին, որպեսզի Նա էլ մեզ գթա: Քաղցածների համար հաց շինենք և մերկերի համար՝ զգեստ, անտունների համար՝ օթևան և հիվանդների համար՝ բժիշկ, որպեսզի Աստված էլ մեր հոգու և մարմնի վերքերը բժշկի»: Ամեն:

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Արտաքսման Կիրակիի խորհուրդը կապված է մեր նախածնողների օրինազանցության հետ: Ադամն ու Եվան ապրեցին դրախտում վայելելով նրա փափկությունը, երջանկությունն ու ազատությունը: Տիեզերքի Արարիչը Ադամին և Եվային ստեղծեց ազատ ու ինքնիշխան, սակայն հետևյալ արգելքը դրեց նրանց առաջ. «*Բարու և չարի* գիտության ծառից մի՝ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» *(Ծնն. 2:16-17):* Բայց մի օր սատանան օձի կերպարանքով մոտեցավ Եվային և ասաց. *«Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, և դուք կշինեք աստվածների նման՝ կիմանաք բարին ու չարը» (Ծնն. 3:5):* Չդիմանալով չարի գայթակղությանը՝ Եվան նախ ինքը կերավ արգելված պտղից և հետո տվեց Ադամին ու նրանց աչքերը բացվեցին:

Դրախտի բոլոր բարիքները վայելող առաջին մարդը անհնազանդության պատճառով մեղանչեց և ընկավ մեղքի գիրկը: Այդ օրվանից Աստծու հրամանով մարդը ճակատի քրտինքով հայթայթում է իր օրվա հացը, կանայք ցավով են զավակ ունենում, իսկ օձը սողում է գետնի վրա ու մարդկանցից հեռու փախչում:

Բայց Աստված մարդուն չմոռացավ: Նրա սերը Իր արտայայտությունը գտավ Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալով: Հիսուս դարձավ հաշտության միջնորդ Աստծու և մարդկանց միջև:

Չարը, սակայն, այսօր էլ ամեն մեկիս փորձության է ենթարկում ու հանգիստ չի տալիս և վա՜յ նրան, ով ընկնում է նրա ճանկերի մեջ:

Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Գալուստյանի մեկնաբանությունը.

«Ադամ-Եվայի պատմությունը յուրաքանչյուրիս պատմությունն է, դժբախտաբար, հավերժորեն կրկնվող և մշտնջենապես ներկա: Մարդկանցից ո՞վ չի ունեցել իր փորձության ժամերը՝ ճիշտ Ադամի և Եվայի նման: Ո՞վ չի հրապուրվել «արգելված պտուղի» տեսքով, ո՞վ իր նմանների կամ իր ներաշխարհի ձայնը չի լսել. «Մի

վախեցիր, կեր, կհասունանաս, կիմաստանաս, աչքերդ կբացվեն, կմեծանաս, փորձառություն ձեռք կբերես» և դեռևս սրանց նման հազար ու մի փափուքներ»... Ո՞վ չի հեռացել իր կրոնից, իր եկեղեցուց, որոնց մեջ մարդն զգում է Աստծո ներկայությունը... Սրանք այժմեական և ամենօրյա երևույթներ են, որոնց դերակատարներն ամեն օր և ամենուրեք ապրող, շրջող ու շնչող մարդիկ են. ես եմ, դու ես, նա է, ամենքս ենք...» (Շնորհք Պատրիարք Գաշուստյան, ««Մեծ Պահոց Կիրակիների շղթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 4041):

Ապրում ենք մի աշխարհում, ուր դժբախտություններն ու փորձությունները միշտ կան, մեղքը ամեն րոպե մեր կողքին է և ստվերի պես հետևում է մեզ ու, որպեսզի մարդու համար հեշտ լինի դրանք հաղթահարելը, մեր Սրբազան Հայրապետները կարծես սահմանել են քառասնօրյա պահեցողությունը, որպեսզի զղջանք և անդրադառնանք մեր գործած մեղքերին ու թողություն խնդրենք Ամենակալից:

Հետաքրքիր է իմանալ այս պատմությունը.

Մի ճգնակենցաղ վանական ծանր հիվանդանում է և վանքում նրան խնամելու համար հարմարություն չի լինում: Քաղաքում ապրող հավատացյալ մի կին խնդրում է, որ նրա խնամքի գործը իրեն հանձնեն: Կինը ծեր վանականին տանում է իր տունը: Մի քանի տարի խնամելուց հետո մարդիկ չար շշուկներ են տարածում այդ վանականի և կնոջ սրբության վերաբերյալ: Վանականը ի սրտե աղոթում է Աստծուն, որ աստվածային իմաստությամբ այդ հորինված և սուտ լուրերը իր մահվանից հետո վերցնի իրեն խնամող կնոջ վրայից: Եվ երբ մոտենում է իր մահվան օրը, նրա մոտ են գալիս շատ վանականներ և ծերունի վանականը ասում է նրանց. «Եղբայրներ, խնդրում եմ ձեզ, իմ մեռնելուց հետո վերցրեք իմ այս փայտե գավազանը և մտցրեք գերեզմանաթմբիս մեջ: Եթե նա արմատներ արձակի ու պտուղ տա, իմացեք, որ իմ խիղճը մաքուր է այդ կնոջ նկատմամբ, որը խնամում էր ինձ, իսկ եթե գավազանը չծաղկի, ապա իմացեք, որ ես ընկել եմ պղծվելով»: Ու նրա կտակի համաձայն, մահից հետո նրա հոգևոր եղբայրները գավազանը մտցնում են գերեզմանաթմբի հողի մեջ: Անցնում է որոշ ժամանակ և փայտե գավազանը սկսում է ծաղկել ու պտուղ է տալիս: Բոլորը զարմանում են, նույնիսկ հարևան երկրներից

գալիս են տեսնելու այդ հրաշքը, օրհնում ու փառաբանում են Աստծուն:

Պահեցողության գլխավոր նպատակն է հնարավորություն տալ մեր անձերը զերծ պահելու հոգեկան աշխարհը փչացնող չար խորհուրդներից ու խոսքերից:

Այստեղ տեղին է հիշել ռուս մեծ գրող Չեխովի պահքի ու աղոթքի մասին ունեցած գեղեցիկ պատմվածքը, որտեղ նա ներկայացնում է երկու ավազակների, որոնք անտառում գողություն ու մարդասպանություն էին անում: Մի քանի *րոպե հետո, երբ ավազակներից մեկը սպանվածի* գրպանից մի կտոր ապխտած միս է հանում և ուզում է ուտել, ընկերը նրան նկատողություն է անում, ասելով. *«Դու չգիտե՞ս, որ պահքի մեջ ենք»:*

Սա ցույց է տալիս, որ կան մարդիկ, որոնք պահք են պահում և աղոթում առանց հասկանալու ու գիտակցելու դրանց իսկական իմաստը:

Ընդհանուր Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Սուրբ Օգոստինոս Երանելի Հայրապետը ասում է.. «*Պահեցողությունը մաքրում է հոգին, վեհացնում միտքը, չափի և հակակշռի տակ է պահում կրքերը, ցրում ցանկության ամպերը, մարում սեռական կրակը, արծարծում ժուժկալություն ու վառում ճշմարտության լույսը»:*

Սուրբ Գրքի Ծննդոցի առաջին գլխից երեք հիմնական գաղափարներ կարող ենք քաղել.

ա. Աստված երկինքն ու երկիրը ստեղծեց ոչնչից:

բ. Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համաձայն:

գ. Աստծու ստեղծածը բարի էր:

ա. Առաջին հերթին հայտնի է դառնում Աստծու Ինքնիշխան, Ամենակալ և Ամենաստեղծ լինելը: ***Աստված ստեղծում է*** ոչնչից և կախված չի որևէ նյութից: Ճարտարապետը կարիքը ունի քարի, փայտի կամ երկաթի, ցեմենտի և այլ շինանյութերի՝ շենք կառուցելու համար, իսկ Ամենակարողն Աստված ոչնչից ամեն ինչ ստեղծելու ուժ ունի:

բ. ***Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համաձայն:*** Մեր սրտերում Աստծու պատկերն է փորագրված և ճիշտ այդ պատճառով անքակտելի մի կապ գոյություն ունի Աստծու ու

մարդու միջև: Եթե իրար կոպտենք ու վիրավորենք, Նրա պատկերը արհամարհած կլինենք:

զ. ***Աստծու ստեղծածը բարի էր:*** Մեծ Պահքի ընթացքին մաքրությունը և քրիստոնեական փոխադարձ վերաբերմունքը պիտի առաջնորդեն մեզ աստվածային բարության ու մեր սրտերում պիտի զգանք Աստծու ստեղծագործության առաջին կարևոր նշանը՝ հավիտենական լույսը:

Ադամն ու Եվան չհնազանդվեցին Աստծու կամքին ու հրամանին և արժանիորեն ստացան իրենց պատիժը: Այսօր էլ, մեր ժամանակներում, եթե մեզանից որևէ մեկը օրենքը խախտի, դատարանի կողմից կենթարկվի համապատասխան պատժի: Հիշեցեք, թե Հիսուս ի՞նչ պատասխանեց, երբ փարիսեցիները նրան փորձելու համար հարցրեցին՝ *«Օրինավո՞ր է մեզ համար կայսրին հարկ տալ թե՝ ոչ» (Ղուկաս 20:22):* Նրա պատասխանը ավելի քան հստակ էր և ազդու. *«Տվեք կայսրինը՝ կայսեր, իսկ Աստծունը՝ Աստծուն.»» (Ղուկաս 20:25):*

Ուրեմն, իբրև ազնիվ քաղաքացիները այս հյուրընկալ երկրի՝ մենք բոլորս պետք է լավ հասկանանք ու կարողանանք ճշտորեն կատարել Հիսուսի պատգամը և հնազանդվել նախ աստվածային, ապա մարդկային օրենքներին: Հազարավոր տարիներ էլ անցնեն Նրա խոսքերն ու Նրա բարոյական խրատները երբեք չեն հնանա: Ինքն էլ այս մասին ասաց. *«Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի» (Մատթ. 24:35):* Դժբախտաբար մարդիկ այսօր կույրի պես խարխափելով խավարում մոռանում են և կամ անտեսում սրանք: Արդյունքը տեսնում ենք՝ ժողովուրդների միջև անհամաձայնություններ, որոնք հետագային վերածվում են պատերազմների, եղբայրասպան կռիվների, մարդասպանությունների, նույնիսկ ցեղասպանությունների և այլն: Այս բոլորը վստահորեն կարող ենք ասել տեղի են ունենում Աստծու նկատմամբ մարդկանց ունեցած անհնազանդության և հավատքի պակասի պատճառով, քանի որ զավակները չեն լսում ու հնազանդվում իրենց ծնողներին, զինվորները՝ հրամանատարներին և ժողովուրդները՝ ղեկավարներին:

«Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու նշանավոր Հայ-

րերից՝ Սուրբ Օգոստինոս Հայրապետը, որն ապրել է չորրորդ դարում, ծնունդով Ալժիրից էր, բայց ապրում էր Հռոմում: Նրա մայրը քրիստոնյա էր: Նա ժամանակի հայտնի փիլիսոփաներից մեկն էր: Մի անգամ պատահաբար Սուրբ Գիրքը վերցրել էր կարդալու, հազիվ երկու տող կարդացած, արհամարհանքով նետում է մի կողմ՝ ասելով, թե իր համար սա շատ պարզունակ գիրք է: Բայց երբ ծանոթանում է աշխարհի մյուս կրոններին, դրանք ուսումնասիրելուց հետո, տեսնում է, որ նրանց մեջ չկա իր հոգեկան ծարավը հագեցնող և բավարարող մեկը: Եվ երբ Իտալիայի քաղաքներից մեկում՝ Միլանում, լսում է Ամբրոսիոս եպիսկոպոսի քարոզները, դրանցից ազդված գնում է Եկեղեցու դիմացի այգին մտածելու, թե ինչ պիտի անի իր հոգին խաղաղեցնելու համար:

Հանկարծ նրան մի երեխա է մոտենում ու ասում. «Վերցրու, Աստվածաշունչը և կարդա»: Անհավատ Օգոստինոսը հետաքրքրության համար կրկին անգամ վերցնում է Աստվածաշունչն ու կարդում և անդրադառնում է, որ իր ողորմելի կյանքը, ցոփությամբ և զանազան տեսակի մեղքերով լի, անիմաստ է մի սովորական քրիստոնյա հավատացյալի կյանքի համեմատությամբ ու ինքն իր ամբողջ գիտելիքներով Աստծու աչքի առջև ոչ մի արժեք չի ներկայացնում: Անդրադառնում է ու ընդունում քրիստոնեությունը, կարդում է Սուրբ Գիրքը և այս անգամ այնտեղ գտնում է իր հոգին խաղաղեցնող ու մխիթարություն պատճառող պատգամները: Երկար տարիներ հետո իր այլ գործերի շարքում գրում է «Խոստովանություն» անունով հոգեթով աղոթքների շարքը»: Օգոստինոս Երանելի Հայրապետի ժառանգության մի զգալի մասը (տասնյակ գրքեր) վերաբերում են նույն այդ Աստվածաշնչին, որը նա ժամանակին անտեսել էր:

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին խրատում է այս խոսքերով.. *«Գիշերն անցավ և ցերեկը մոտեցավ, ուրեմն դեն գցենք խավարի գործերը և հագնենք լույսի զրահը, շարժվենք առաքինությամբ, ինչպես ցերեկով, ոչ անառակություններով և հարբեցողությամբ, ոչ պոռնկությամբ և պղծությամբ, ոչ նախանձով և կռվազանցությամբ, զգեստավորվեցեք Տեր Հիսուս Քրիստոսով և մարմնին խնամք մի տարեք ցանկությունները գոհացնելու համար....» (Հռոմ 13:12-14):*

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԴՁ.
«ՈՐ ՁՕՐԷՆՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ»

Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ շնորհեա մեզ տէր ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի թշնամւոյն. եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրիդ եւ բառնալոյ զցաւս մեր. վասն որոյ շնորհեա մեզ տէր ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց:

Որ երկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին մարիամու. եւ կենդանարար քո յարութեամբ հրաւիրեցեր զմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ:

Դու ով Տէր, նախ դրախտում հաստատեցիր, Պահքի սուրբ օրենքը, որը մեր նախածնողները չպահեցին ի արգելված պտուղն ուտելով, ճաշակեցին մեղքի ու մահվան դառնությունը: Ուստի շնորհիր մեզ, Տեր, որ ճաշակենք Քո պատվիրանների քաղցրությունը:

Թշնամին զանազան մեղքի վերքեր բացեց մեր հոգիների մեջ. բազմաթիվ հիվանդությունների մեջ ընկանք, որ մեր ցավերը վերցնես: Ուստի բժշկիր մեզ, Քրիստոս, իբրև մարդասէր:

Կույս Մարիամից ծննդյամբ մարդկանց փրկելու եկար և Քո կենդանարար Հարությամբ մահկանացուներիս անմահական Հարության հրավիրեցիր. Ուստի շնորհիր մեզ, Տեր, որ ճաշակենք Քո պատվիրանների քաղցրությունը:

Թող բարին Աստված օրվա խորհրդով զորացնի մեր հավատքը, ուժ տա մեզ, որպեսզի ողորմած և գթասիրտ լինենք, չբամբասենք, չհայհոյենք, սուտ չխոսենք և մոլություններից մեզ հեռու պահենք, որպեսզի մաքուր սրտով ու անբիծ հոգով կարողանանք արժանանալ Երկնքի Արքայությանը: Ամեն:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԿԻՐԱԿԻ

«ՀԱՅՐ, ՄԵՂԱՆՉԵՑԻ ԵՐԿՆՔԻ ԴԵՄ ՈՒ ՔՈ ԱՌԱՋ» (ՂՈՒԿԱՍ 15:18-19)

Ղուկասի Ավետարանում կարդում ենք Հիսուսի հետևյալ առակը.

«Մի մեծահարուստ երկու որդի ուներ: Կրտսեր որդին հորն է ներկայանում ու պահանջում իր հարստության բաժինը: Հայրը իբրև փորձառու մարդ, խրատում է նրան, որ ետ կանգնի իր այդ անմաստ քայլից, բայց անօգուտ: Որդին վերցնում է իր բաժինը և գնում ուրիշ երկիր ու վատնում է ամբողջ ունեցածը: Երկրում սով է ընկնում և նա ստիպված է լինում խոզարած դառնալ, նույնիսկ նրան արգելվում է խոզերի առջև դրված ուտելիքից օգտվել: Մի պահ անդրադառնում է, թե իր հոր ծառաները ինչպիսի լավ խնամք են ստանում ու որոշում է վերադառնալ. ««Հայր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ, և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրու իբրև քո աշխատավորներից մեկը» (Ղուկաս 15:18-19):

Ահա այստեղ մեր առջև բացվում է հրաշալի մի տեսարան: Հայրը երբ հեռվից տեսնում է իր որդուն, վազում է դիմավորելու և մեծ սիրով գրկում է նրան ու պատվիրում իր ծառաներին, որպեսզի բերեն լավագույն հագուստները, իշխանության մատանին դնեն մատին և նրա պատվին մորթեն ամենագեր եզը: Բնականորեն այս վիճակը շփոթի է մատնում ավագ որդուն: Երբ նա գործից տուն է վերադառնում ու տեսնում կատարվածը, բողոքում է Հորը ասելով, թե տարիներ շարունակ ինքը նվիրումով ծառայել է, բայց Հայրը նույնիսկ իրեն մի ուլ իսկ չի տվել, որպեսզի ընկերների հետ ուրախանա: Հայրը հուզումով պատասխանում է. *«Որդյակ դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է, բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: (Ղուկաս 15:31-32):*

Անառակ Որդին երբ վերադարձավ, հայրը նրան չկոպտեց, չհանդիմանեց, չբարկացավ, չքննեց, թե ինչպե՞ս ծախսեց իր հարստությունը, ինչպիսի՞ անառակ կյանք վարեց, այլ գրկաբաց ընդունեց նրան, համբուրեց, ուրախացավ

և խնջույք պատրաստեց, բավական էր, որ իր մոլորված որդին վերադարձել էր և հասկացել իր սխալն ու դարձի եկել. *«Կորած էր և գտնվեց»:* Շատ հաճախ դժբախտաբար մենք ուրիշների մեջ միայն թերություններն ու պակասավոր կողմերն ենք նկատում, այն էլ խոշորացույցով: Դժբախտաբար նույնիսկ մեր տան անդամների լավ և դրական կողմերը չենք նկատում, միշտ գերադասելով ուրիշինը: Մեր Տերը չհանդուժեց այդ ոգին, որն հատուկ էր փարիսեցիներին ու սադուկեցիներին, որոնք արտաքինով դատելով մարդուն նրա աչքի շյուղն էին տեսնում, առանց անդրադառնալու, որ իրենց աչքի մեջ գերան կա: Այսպիսիների համար էր, որ Հիսուս ասաց. *«Ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս, և չար ծառ չար պտուղ է տալիս: Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ տալ» (Մատթ. 7:17-20):*

Եղբայրները ներկայացնում են ամբողջ մարդկությունը իր երկու հիմնական բարոյական գծերով: Կրտսերը թաթախված է մեղքի մեջ, բայց բոլորովին դատարկված չի սիրով լցվելու կարողությունից, իսկ ավագ եղբայրը՝ հավատարիմ է, օրինապահ, բայց կորցրել է ներելու ոգին: Կրտսերը հակառակ մասամբ իր քայքայված վիճակին, զղջում է ու մոխիրներից վերստին կյանք է ստանում և բարձրանում իր որդիական պատվին: Սակայն ավագ եղբայրը այլ ձևով է նայում այս հարցին: Եզրակացությունն այն է, թե ավագ որդին եսասեր է: Ավետարանիչը չի շարունակում, թե նա ազդվե՞ց իր հոր խոսքերից, հաշտվե՞ց, տուն մտա՞վ և ուրախացա՞վ եղբոր վերադարձի համար, բայց դա այնքան էլ կարևոր չէ:

Կյանքում բոլորս էլ քիչ թե շատ նմանվում ենք Անառակ որդուն, որովհետև մարդը թույլ է իր բնությամբ, քանի որ սխալ գործելը մարդկային է: Մեղքերը ինչ ձևի տակ էլ գործվեն, ծանր քարի պես ճնշում են գործադրում մեր խղճի վրա և հեռացնում մեզ Աստծուց: Անառակ Որդին չուներ պետք եղած հասունությունը և կյանքի փորձառությունը, բայց կարողացավ իր մեջ ուժ գտնել ու վերադառնալ: Առակի ամենակարևոր դեմքը Անառակի Հայրն է, որը գրկաբաց ընդունում է իր մոլորյալ զավակին:

Այստեղ մի պահ թողնենք Անառակ Որդուն ու մոտենանք մեծ եղբորը: Կարծես թե ամեն ինչ լավ է այս երիտասարդի մոտ, հավատարմությամբ աշխատում է իր հոր հետ, կատարում նրա բոլոր հրահանգները ու երբեք նրա խոսքից դուրս չի գալիս, բայց երբ կրտսեր եղբայրը վերադառնում է, փոխանակ ուրախանալու, եսասիրությամբ ու նախանձով է լցվում նրա նկատմամբ: Այս պարագան հասկանալի է, երբ որ մանուկ ու պատանի ենք, ուզում ենք, որ մեր ծնողները մեզ ավելի շատ գնահատեն և սիրեն, քան մեր եղբայրներին ու քույրերին: Սակայն, երբ ծնող ենք դառնում ու զավակներ ունենում, երբեք կողմնապահություն չենք անում, բոլորին էլ բաժանում ենք մեր ծնողական սերը, սակայն Աստված չանի, եթե մի հիվանդ և թույլ մեկը լինի նրանց մեջ, բնական է, որ նրան ավելիով ենք ուշադրություն դարձնում, քանի որ նա շատ ավելի խնամքի կարիք ունի: Այսօր էլ մեր այս կյանքում դժբախտաբար կան այնպիսի անառակ որդիներ, որոնք չեն լսում իրենց ծնողներին, անտեղի վիրավորում, ցավեցնում են, չեն ուզում ենթարկվել օրենքներին, փորձում են ամենավատ բաները և մտածում են առանց աշխատանքի արագ հարստանալու մասին ու այդ ճանապարհին ժամանակից շուտ ընկնում և հայտնվում են կամ բանտերում կամ մի այլ տեղ, որտեղից վերադարձ չկա, ծնողներին թողնելով մեծագույն դժբախտության մեջ: Այսօր ամենուրեք ականատես ենք լինում, թե ինչպես մարդիկ հաճախ հեռանում են մեր երկնավոր Հորից ու ընկնում անառակ որդու վիճակում: Երանի այս մարդիկ էլ անառակ որդու նման խոր զղջում ապրեն, գիտակցեն, որ մեղավոր են ու վերադառնան իրենց Հոր մոտ, որը բարի է և անպայման կների իրենց մեղքերը: Մնում է քայլը կատարել: Զղջման, ապաշխարության և անդրադարձի համար երբեք ուշ չէ:

«Անառակ Որդու» առակի պատմությունը կարդալով, զգում ենք, որ սերը չի թագավորել այս ընտանիքում, հակառակ դեպքում մեծ եղբայրը սիրով, խորը կարոտի ու ներողամտության զգացումներով պիտի դիմավորեր իր կորած եղբորը և իրենց ընտանեկան ուրախությանը մասնակից պիտի դառնար: Իսկ *«Անառակ Որդին»* երբ ապրեց և իր մարմնի

վրայ զգաց մարդկային բոլոր ստորացումներն ու զրկանքները, այն ժամանակ միայն հասկացավ իր թշվառության պատճառը:

Հետաքրքիր է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Գալուստյանի մեկնաբանությունը Անառակ Որդու Կիրակի օրվա խորհրդի մասին.

«Վատնելը վատ բան է, վատնելն անառակ և անկարգ մարդկանց գործն է: Դա մեծագույն չարիքն է անհատի և ընկերության համար: Եվ եթե Ավետարանի Անառակը, սեփական դառը փորձառությունից ելնելով, մեզ ուղղելիք բարեկամական թելադրանք ունենար, ենթադրում ենք, որ դա հետևյալ բառերով պիտի լիներ. «Հնարավոր է, որ դուք իմ չափ չեք ապականված, երանի ձեզ: Հնարավոր է, որ մեղքերի մեջ իմ չափ չեք մխրճված. վա՜յ նրանց, ովքեր ընկղմված են այդ տիղմի մեջ: Շատ դժվար կլինի նրանց վերականգնումը, մանավանդ ձեր դարում, նրանց մեծագույն մասը անդառնալիորեն կկորչի: Խոստովանում եմ, որ մեծագույն ցավս, որ մինչև կյանքիս վերջ ինձ նեղեց, հորս հարստության վատնումն էր, որը թափված կաթի նման այլևս անկարելի էր ձեռք բերել, և ժամանակս, որն այլևս անվերադարձ կորած էր ..» (Շնորհք Պատրիարք Գաշուստյան, ««Մեծ Պահոց Կիրակիների շղթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 66-67):

Համաձայն Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Հովհան Ոսկեբերանի Մատթեոսի մեկնության, Անառակ Որդու հայրը՝ Հայր Աստվածն է, Անառակ Որդին՝ մարդը, որ հեռանում է Աստծուց և իր շնորհները վատնում անառակության մեջ: Ժամանակ է անցնում և մարդը ավելի մեծ մեղքի մեջ է ընկնում, դառնում խոզարած, (հրեական կյանքում խոզը անմաքուր կենդանի է և նաև պիղծ ոգին է խորհրդանշում), այսինքն նա այնքան անկում է ապրում, որ պիղծ միջավայրում է ապրում (խոզերի մեջ) ու ցանկանում է սնվել նրանց կերակուրից, սակայն այդ էլ չի թույլատրվում նրան: Այս, հուսահատ և չափազանց ծանր վիճակում գտնվող անձը հանկարծ անդրադառնում է, սթափվում, դարձի է գալիս, կարողանում է իր մեջ ուժ գտնել ու վերադառնալ Հոր մոտ, որը իբրև գթառատ և սիրող Հայր, ոչ միայն գրկախառնվելով ընդունում է նրան, այլ վերադարձնում առաջվա փառքը՝ հագցնելով նրա աջ մատին՝ մատանին, կոշիկները և պատմուճանը (մատանին նշան է հին

իշխանության վերադարձի, կոշիկները՝ չարին, պիղծ ոգիներին հաղթելու, իսկ պատմուճանը՝ հին մարդու նորոգության): Նրա համար զոհաբերում է նաեւ պարարտ եզը, որը խորհրդանշում է Քրիստոսին, Ով Իր կյանքը զոհաբերեց մարդկության մեղքերի փրկության համար:

Բարին այն է, որ մարդն զգում է, երբ վերադառնում է դեպի Աստված և հեռանում մեղավոր կյանքից, ապաշխարում ու արժանանում է Աստծու Արքայությանը: Մարդիկ, որոնք առավոտյան արթնանում են, տեսնում գեղեցիկ բնությունը ու փառք են տալիս Աստծուն, որ իրենց տվել է ևս մեկ օրվա կյանք, նրանք իրապես հասկանում են, թե ինչքա՜ն մեծ պարգև են ստացել Արարչից:

Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանը այսպես է բացատրում Անառակի Կիրակի օրվա խորհրդի մեջ փրկության գաղափարը.

«Մարդը մի ընկած հրեշտակ է, որը միշտ երկինքն է երազում. նրա հոգում միշտ նշույլներ կան, որոնք գերաշխարհիկ պայծառությունների ցոլքերն են. զգացմունքներ, որոնք նրա դեմքը չփոխող ժառանգության մնացորդներն են իր մեջ: Այդ պայծառ զգացումներից մեկը, որը մարդու բարոյական մեծությունն է կազմում, ինքնին փրկության ցանկությունն է»: Ըստ Թորգոմ Սրբազանի, մարդն ապրում է այնքան, որքան ժամանակ իր մեջ կենդանի է փրկության այս իղձը, որի մեռնելուց հետո էլ բարոյապես մեռնում է և մարդը: *(Թորգոմ Պատրիարք Գուշակյան, «Քարոզներ» «Անառակի Կիրակին», Երուսաղեմ, էջ 159):*

Եկեք ամեն մեկս քննենք մենք մեզ, տեսնելու համար թե կյանքի ո՞ր ուղղությամբ ենք ընթանում՝ հոր տանից հեռացողի՞, թե՞՝ վերադարձի ճանապարհով ընթացողի:

Վերադարձի ճանապարհը մեր քայլերը պիտի ուղղի դեպի Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին, որն իր սիրտը լայն բացած սպասում է իր մեղավոր ու զղջացող զավակներին: Այս առակի միջոցով մեր Եկեղեցին կոչ է անում բոլոր մեղավորներին ու մոլորյալներին. *«Բռնեք վերադարձի ճանապարհը, եկեք և այս փակյալ խորանի առաջ ծեծեք ձեր կուրծքը և խնդրեցեք Աստծու ներողամտությունը, Նրա ողորմածությունն ու գութը և վստահ եղեք, որ Նա պիտի ընդունի ձեր*

աղոթքը ու, երբ բացվի խորանը, Նա Իր Հարության ավետիսով պիտի ասի ձեզ, թե իրապես ազատվեցիք ձեր մեղքի կյանքից, եկեք, օրհնվածներ, մտեք Աստծու արքայությունը»:

Այս հետաքրքիր, բայց պարզ պատմությունը ուզում եմ կապել Եկեղեցու կյանքի հետ:

«Երկու եղբայրներ են լինում, որոնցից մեկը ամուսնացած էր, ուներ ընտանիք, իսկ մյուսն՝ ամուրի էր: Երկուսն էլ ապրում էին սիրով ու համերաշխ: Իրենց մեջ հավասարապես բաժանել էին հայրական ժառանգությամբ ստացած հողը, որի վրա գիշեր ցերեկ աշխատում էին: Մի օր ամուրի եղբայրը ինքն իրեն մտածում է ու ասում. «Արդար չի, որ այս ժառանգությունը և նրա արդյունքը մեր մեջ բաժանվի հավասարապես, քանի որ ես առանձին մարդ եմ և իմ հոգսերս ավելի քիչ են»: Այս մտածումով էլ նա ամեն գիշեր, աշխատանքից հետո, տուն վերադարձի ճանապարհին, իր պարկում վերցրած բավական քանակությամբ ցորեն, տանում ու լցնում է եղբոր շտեմարանը: Մինչ այդ նույնպիսի մտածում է ունենում նաև ամուսնացած եղբայրը, որն իր մտքում ասում է. «Արդար չի, որ այս ժառանգությունը և նրա արդյունքը մեր մեջ հավասարապես բաժանվի, քանի որ ես ամուսնացած լինելով, վերջ ի վերջո պիտի ունենամ իմ մասին մտածողներ, մինչ եղբայրս, իր նեղ օրերին կարիքը պիտի ունենա առավել հոգատարության»: Նա նույնպես ամեն գիշեր աշխատանքից հետո, տուն գալու ճանապարհին, իր պարկում վերցրած բավական քանակությամբ ցորեն, տանում ու լցնում է եղբոր շտեմարանը:

Մի օր գաղտնիքը բացահայտվում է ու եղբայրները ողջագուրվում են»:

Այս պատմությանը կարելի է հետևյալ բացատրությունը տալ. *«Երկու եղբայրները ներկայացնում են մարդկությունը, դաշտը, ուր նրանք աշխատում են՝ Եկեղեցին է, իսկ ժառանգությունը՝ հասնում է Աստծուց:*

Մայր Աթոռի միաբան Սիոն Արք. Մանուկյանն ասում է.

«Աստված անառակ որդիների Հայրն է, որոնց դարձին և գոչման է սպասում, նրանց գրկելու ու համբուրելու համար: Ո՜վ հավատացյալ Տերը քեզ է սպասում, գնա, նետվիր Նրա գիրկը և խոստովանիր. «Հայր, մեղա հերկինս և առաջի քո» (Հայր մեղանչեցի երկնքի ու Քո առաջ): Այն ժամանակ Նա սիրո ժպիտով քեզ պիտի դիմավորի, գրկի ու հայրական սիրո և ներման համբույրներ դրոշմի ճակատիդ ու ասի Իր հրեշտակներին. «Ուրախացեք Ինձ հետ, որովհետև այս անառակ զավակս մեռած էր՝ հարություն առավ և

կորած էր՝ գտնվեց» (Սիոն Արք. Մանուկյան, «Ավետարանի Պատգամներ», Բ. Տպագրություն, Երուսաղեմ, 1965, էջ 39):

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԳԿ.

«ՕՐՀՆԵՄ ԶՔԵԶ»

Օրհնեմք զքեզ անսկիզբն հայր որդւոյդ միածնի, զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ ոչխարիին. դարձո եւ զմեզ ի մեղաց որդւոյ քո չարչարանօք:

Գովեմք զքեզ բան եւ լոյս որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօք:

Բարեբանեմք զփառակիցդ հօր զհոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր զհնացեալքս մեղօք հնոյն ադամայ. նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց:

Օրհնում ենք քեզ Միածին Որդուդ անսկիզբ Հայր, Որին ուղարկեցիր մոլորված ոչխարին դարձի բերելու համար. Քո Որդու չարչարանքներով մեզ էլ մեր մեղքերից դարձի բեր:

Գովաբանում ենք Քեզ Բան և Լույս, որ Քո տիրական պատկերի ճրագի լույսով գտար ու վերականգնեցիր. Քո սուրբ չարչարանքներով մեղքով ընկածներիս էլ վերականգնիր:

Օրհնում ենք քեզ Հոր փառակից ճշմարիտ Հոգի, որ հին Ադամի մեղքերով հնացածներիս նորոգեցիր. Քո սուրբ չարչարանքներով մեղքով ընկածներիս էլ վերականգնիր:

Կանգուն պահենք մեր Եկեղեցին: Լսենք Աստծու կանչը և զանգերի ղողանջները, որոնք հրավիրում են մեզ աղոթքի, ապաշխարության ու բարի կյանքի: Իրական ապաշխարությունը այն է, որ հավասարակշռենք մեր գործերը, առաջին հերթին հաշվետու լինելու մեր անցած կյանքի համար, որպեսզի կարողանանք Աստծու առաջ պատասխան տալ: Իրական քրիստոնյան նա է, ով բարի գործերով է փրկվում, հավատքով, աղոթքով ու սիրով: Այսօր, երբ բոլորս էլ կանգնած ենք Աստծու խորանի առաջ վստահ լինենք, թե մեր Հայրը, որ երկնքում է, մեր անկեղծ սրտից բխած աղոթքներն ու խնդրանքները կլսի և կկատարի: Ամեն:

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

«...ՏՈՒՐ ՔՈ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎԸ...»

(ՂՈՒԿ. 16:2)

«Հիսուս պատմում է մի մեծահարուստի մասին, որն իր ունեցվածքների համար մի տնտես ուներ (այսօրվա հասկացողությամբ տնտեսը կառավարչի պաշտոնն է): Որոշ ժամանակ հետո մարդիկ սկսում են նրանից դժգոհել, ասելով, թե նա իր տիրոջ հարստությունը փչացնում է: Բնական կերպով տնտեսը սխալ էր գործել իր տիրոջ ունեցվածքն ու հարստությունը օգտագործելով իր օգտի համար: Մեծահարուստը լսելով այս մասին, իր մոտ է կանչում տնտեսին ու պահանջում, որ նա անմիջապես իրեն հանձնված հարստության հաշիվը ներկայացնի և հեռանա իր պաշտոնից» (Ղուկ. 16:3):

Տնտեսը մտածում է. *«Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ՝ ամաչում եմ: Գիտեմ թե ի՞նչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունիցս հեռացվեմ՝ ընդունեն ինձ իրենց տները...» (Ղուկ. 16:3):* Տիրոջ պարտապաններին մեկ-մեկ կանչելով՝ զեղչում է նրանց պարտքերի մի մասը այն հաշվով, թե պաշտոնից զրկվելուց հետո իր բարերարների կողմից հոգացվեն իր ապրուստի միջոցները: Բառիս բուն իմաստով այս ձևը գողություն էր, բայց զարմանալիորեն Տերը գովում է տնտեսի անիրավությունը, որովհետև *«իմաստությամբ գործեց»:* Եթե ավելի խորը մտածենք՝ իրոք, սա բոլորովին դեմ է Ավետարանական ընդհանուր քարոզության, որն ուղղամտությունն է, հավատարմությունը և ճշմարտությունը: Շատերին թվում է, թե բնագրի խմբագրության մեջ մի շփոթություն կա, բայց առակին հետևող Հիսուսի վերջին խոսքերը՝ *«Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. 16:9)* կամ *«Քիչ բանի մեջ հավատարիմը շատի մեջ էլ հավատարիմ է, իսկ քչի մեջ անիրավը, շատի մեջ էլ անիրավ է... Չեք կարող և Աստծուն ծառայել և մամոնային» (Ղուկ. 16:13), որոշ չափով պարզում են այս խոսքերի իմաստը:*

Մամոնա բառը ասորերեն կամ արամերեն ծագում ունի, որ այստեղ գործածվում է *ունեցվածք* կամ *հարստություն*

իմաստով:

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Հայրերը՝ Օրիգինես, Օգոստինոս, Եփրեմ Խուրի Ասորի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Երուսաղեմացի, այսպես են մեկնաբանում Անիրավ Տնտեսի առակը. *(Ղուկ. 16:1-13):*

«Անիրավ Տնտեսը խորհրդանշում է մարդուն, ով մեղքերի մեջ թաղված է և ուշ թե շուտ կանգնելու է դատաստանի առջև Գթացող Աստված ցանկանում է մարդուն հասկացնել, որ մինչև մահը ինքը հնարավորություն ունի մաքրվելու այդ մեղքերից և դրա լավագույն օրինակը Անիրավ Տնտեսի առակն է:

Լինելով մեղավոր և անդրադառնալով իր գալիք կորուստի մասին, մարդը ձևեր է փնտրում քավելու մեղքերը ու կարողանում է գտնել դրանք: Իսկ որո՞նք են այդ ձևերը.

Բարեգործությունը: *Ճիշտ է կարծես թե Տնտեսը անիրավ գտնվեց և չարաշահեց Տիրոջ վստահությունը, բայց բարեգործությամբ շահեց Նրա գովասանքը: Ինչո՞ւ, որովհետև այս աշխարհում գտնվող ամեն մի իր հարստություն, կյանք, ունեցվածք, Տիրոջն է պատկանում: Եվ եթե մարդը Տիրոջ հարստությամբ կարողանում է հոգիներ շահել և մեղքերը քչացնել, ապա կատարում է Աստծու կամքը. «Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով առաջինին ասում է. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է. «Հարյուր տակառիկ ձեթ», և տնտեսը նրան ասում է. «Առ քո մուրհակը և նստիր ու անմիջապես գրիր հիսուն»: Դրանք Աստծու դիմաց ունեցած մեղքերն էին, որովհետև մեղքն է, որ մարդուն պարտական է դարձնում Աստծուն:*

Տնտեսը գիտակցեց, որ մարդիկ ապրելով այս երկրային կյանքում, զանազան տեսակի մեղքեր են գործում և դրա համար էլ շարունակեց իր բարի գործը. «Ապա դարձյալ մյուսին ասաց՝ «Դու ինչքա՞ն պարտք ունես», և սա ասաց. «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց՝ «Առ քո մուրհակը և նստիր ու գրիր՝ չորս հարյուր»: Տնտեսը նրանց աչքերը բացեց և հնարավորություն տվեց, որպեսզի քավեն իրենց մեղքերը. «Առ քո մուրհակը և նստիր ու գրիր՝ չորս հարյուր», այսինքն, յուրաքանչյուր անհատ ինքն է, որ նվազեցնում ու քավում է իր մեղքերը, տնտեսը ուղղակի ցույց տվեց

այդ միջոցը, թե ինչպես կարելի է մեղքերի համար թողություն ստանալ: «Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց...»: Այս ձևով տնտեսը քավում է իր մեղքերը:

Հակոբոս Առաքյալի խոսքերը հաստատում են մեղքերը քավելու կարևորությունը. *«Եթե ձեզնից մեկը շեղվի ճշմարտության ճանապարհից, իսկ մեկ ուրիշը նրան հետ բերի, թող իմանա, որ, ով մեղավորին իր մոլորության ճանապարհից հետ է բերում, կփրկի նրա հոգին մահվանից և կծածկի մեղքերի մի ամբողջ բազմություն» (Հակ. 5:19-20):*

Այստեղ կարևոր է նշել այն պարագան, որ անիրավ Տնտեսը մտադրություն չունեցավ պարտատերերի մուրհակները փոխել տալով նրանց տարբերությունները գանձել իր անձի համար:

Առակից պարզ է դառնում, թե մեր կյանքը, պաշտոնն ու հարստությունը ժամանակավոր են այս աշխարհի վրա, մենք Աստծու տնտեսներ ենք, *իմաստություն* պիտի ունենանք՝ օգտագործելու ամեն մի բարի միջոց երկնքի արքայությունը ձեռք բերելու համար: Մամոնան նույնպես միջոց է՝ բարիք կատարելու համար, երբ նա նպատակ է դառնում՝ *«անիրավության մամոնա»* է: Երկու Աստված ունենալ չենք կարող:

Բայց մենք տնտեսներ ենք ոչ միայն նյութական հարստության համար: Ինչպես դրամը պիտի օգտագործենք բարոյական նպատակների, այնպես էլ՝ մեր հոգեկան շնորհքների համար: Գիտնակա՞ն ենք, արվեստագե՞տ ենք, լեզվաբա՞ն ենք և կամ այլ շնորհքներ ունեցող մասնագե՞տ ենք, չպետք է դրանք ծառայեն մեր անձնական, շահադիտական, գծուծ նպատակներին, այլ՝ մարդկանց օգտին:

Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Գուշակյանը այսպես է բացատրում Անիրավ Տնտեսի Կիրակի օրվա խորհուրդը, այն անվանելով *««Հացին ու պատիվին կռիվը»:*

«Տնտեսը իր խախտած ապագան կառուցում է ուրիշների ոչ թե կործանումով, այլ վերականգնումով»: (Թորգոմ Պատրիարք Գուշակյան, «Քարոզներ», «Անառակի Կիրակին», Երուսաղեմ, էջ 159): Այսինքն շեշտում է այն միտքը, որ մարդը իր երջանկությունն ու բարորությունը պետք է կառուցի ոչ թե դիմացինի հաշվին, այլ նրան բարիք անելով:

«Հիսուս այս առակը պատմելուց հետո, ըստ ավետարանչի արձանագրության, գովում է այս խարդախ պաշտոնյայի արարքը, ասելով, թե աշխարհի մարդիկ ամեն ինչ անում են իրենց կյանքը բարելավելու միջոցներ գտնելու համար»,- ասում է Արժ. Տ. Շահե Ավագ Քհն. Ալթունյանը և շարունակում,- *«Իսկ լույսի որդիները սրանց չափ իմաստուն չեն: Այստեղ ակնարկությունը գնում է բոլոր նրանց, որոնք Հիսուսի անունը կրող քրիստոնյա կոչվող հավատացյալներն են, սակայն չեն մտահոգվում իրենց հոգևոր կյանքով, այնքանով, որքան առակի մեջ հիշված տնտեսի նման մարդիկ»:*

«Չեն կատարում ինչ որ Քրիստոնեության հավատքն է ակնկալում իրենցից: Չեն կարդում Աստվածաշունչը, որտեղից լույս պիտի ստանան իրենց կյանքերի համար: Չեն հաճախում իրենց հոգևոր տունը՝ եկեղեցին: Չեն ստանում իրենց Փրկչի Մարմինն ու Արյունը իբրև սնունդ իրենց հոգևոր մարմնի համար: Չեն գործադրում Սուրբ Գրքում արձանագրված պատվիրանները: Կապ չեն պահում իրենց նմանների հետ, այնպես, ինչպես մեծ Ուսուցիչն էր հրահանգել»... (Արժ. Տ. Շահե Ավագ Քհն. Ալթունյան, «Քրիստոս Փառավորյալ Հունվարեն Դեկտեմբեր», 2006, էջ 47-48):

Տնտեսի առակով Հիսուսի ավանդած դասերից մեկն այն է, որ Աստծու տնտեսության մեջ բոլորս էլ հաշվետու տընտեսներ ենք, Աստված մի օր մեզ հաշվեհարդարի պիտի կանչի, ասելով. *«Տուր քո կյանքի հաշիվը»:* Ինչպես տնտեսից սպասվում էր հավատարմություն, նույնպես և մեզանից ակնկալվում է՝ խոսքի, գործի, պատվի, նպատակի, կյանքի ու կենցաղի հավատարմություն:

Անհավատարիմ տնտեսը, եթե ժամանակին հեռատես լիներ, ինքնիրեն խնայած պիտի լիներ այն բոլոր տագնապներն ու տառապանքները, որոնց նա ենթարկվեց: Այն օրերին, երբ նա իր տիրոջ ունեցվածքն ու հարստությունն էր փչացնում, պետք է անդրադառնար, թե այդ ընթացքը իրեն դեպի տնտեսական կործանում է տանում: Եթե նա իր ժամանակին ճիշտ վարվեր՝ հարցը տարբեր կլիներ: Նույնն է պարագան նաև մեզ բոլորիս համար: Եթե անդրադառնանք մեր մի շարք սխալներին, թերություններին, հանցանքներին և

մեղքերին, պիտի խնայենք մենք մեզ շատ նեղություններ, ցավեր ու տառապանքներ:

Կ. Պոլսի Պատրիարք Շնորհք Գալուստյանը ասում է.

«Յուրաքանչյուր բարեգործություն Աստծո աթոռի առջև ինքնին բարեխոս է նվիրատուի համար: Ինչպես ճարպիկ տնտեսն իր կյանքի «ամենակրիտիկական» պահն անգամ օգտագործեց ֆիզիկական գոյության ու ապահովության համար, նույնպես և մարդիկ մահվան անկողնում անգամ կարող են իրենց հավիտենական երջանկությունն ապահովել սրտագեղ մի նվիրատվությամբ՝ դրան ընկերացնելով գործած մեծ կամ փոքր անիրավությունների համար անկեղծ զղջումը...» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Մեծ Պահոց Կիրակիների շղթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 78, 86):

Մեծ Պահոց այս օրերին, երբ բոլորս գիտակցորեն փորձում ենք ավելի մոտենալ Աստծուն, իմ աղոթքն ու մաղթանքն է, որ մենք չմտածենք միայն նյութական և մամոնայի մեզ տված ժամանակավոր ու խաբուսիկ ապահովությունների մասին: Փնտրենք հոգևոր սխրանքը, բարոյական հզորությունն ու տոկունությունը, քանի որ մարդն Աստծու համար մեծ արժեք է ներկայացնում: Գոհանանք մեր ունեցած քչով և ընտրենք կյանքի ճշմարիտ ուղին, մեր շնորհքով, խելքով ու ազատ կամքով:

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԳՁ.
«ՈՐ ԱՐԱՐԵՐ»

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին, եւ ի նմա հաստատեցեր տնտես զպետս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ:

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զոչալի. եւ ի դրախտն որ յադենի տնտես եղեալ զմարդըն առաջին. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ:

Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. եւ ի սմա կարգեալ տնտես զքարոզս բանին ճշմարտութեան. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ:

Դու, ով Տէր, ստեղծեցիր իմանալի էակների վերին աշխարհը և նրանում իբրև տնտես հաստատեցիր հրեղենների պետերին, օրհնում ենք անճառելի զորությունդ:

Դու, որ իբրև մեծատուն ստեղծեցիր զգալի երկրորդ աշխարհը և Եդեմի դրախտում իբրև տնտես կարգեցիր առաջին մարդուն, օրհնում ենք անճառելի զորությունդ:

Երկնային իմաստությամբ Քո Եկեղեցին կառուցեցիր և նրա վրա տնտես նշանակեցիր ճշմարիտ խոսքի քարոզիչներիդ. օրհնում ենք անճառելի զորությունդ:

Սրբությամբ կատարենք մեր գործը, քանի որ առանց խտրության, մի օր մեր գործերի համար հաշիվ պիտի տանք մեր խղճի ու մեր գիտակցության և մանավանդ Աստծու ահեղ Դատաստանի առաջ: Ամեն:

ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ

«ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ԱՂՈԹԵԼ ԵՎ ՉՁԱՆՁՐԱՆԱԼ»
(ՂՈՒԿ. 18:1)

Հիսուս պատմում է մի առակ անձանձրույթ աղոթքի մասին:

«Մի քաղաքում ապրում էր խեղճ որբևայրի մի կին, որն անպիտան մի մարդու հակառակության առարկա էր եղել և շարունակ նեղ դրության մեջ էր ընկնում նրա երեսից: Խեղճ այրին չկարողանալով թշնամուն հակառակվել, դիմում է այդ քաղաքի դատավորին, խնդրելով, որ նրա անիրավություններն արգելի, իր իրավունքն ու արդարությունը պաշտպանի և ազատի իրեն նրա ձեռքից: Այրին գնում-գալիս է, աղաչում, պաղատում, բայց դատավորը նույնիսկ չի լսում նրան: Այրին Աստծու անունով երդվել է տալիս, բայց նա Աստծու վախն էլ չի զգում և անխիղճ կերպով ասում է. «Աստծուց վախենալու չափ փոքրոգի չեմ»: Այդ անհոգության դիմաց, սակայն, խեղճ այրին չի հոգնում, չի ձանձրանում և շարունակում է գնալ նույն դատավորի մոտ: Դատավորը վերջապես այրու հարատևությունից ձանձրանալով, մտքում ասում է. «Չնայած Աստծուց չեմ վախենում և մարդկանցից էլ չեմ ամաչում, բայց, որովհետև այս այրի կինը ինձ շատ հոգնեցրեց, նրա դատը անեմ, որպեսզի անընդհատ չգա ու ինձ չձանձրացնի» (Ղուկ. 18:1-6):

Մեր Տերը ոչ միայն շեշտում է աղոթքի կարևորությունը, այլև մեր ուշադրությունը հրավիրում *«առանց ձանձրանալու»»* խոսքի իմաստի վրա: Աղոթքը կյանք է և հոգիները խաղաղեցնող աստվածային ուժ ունի իր մեջ, որը փոխում է մարդու ներքին աշխարհը դեպի բարին:

Հիսուս մեր աղոթքի ուսուցիչն է: Ի՞նչ էր նրա ամբողջ կյանքը, Նրա գործը, եթե ոչ Աստծուն նվիրված մի աղոթք: Աղոթքով սկսեց Իր քարոզչությունը, աղոթքով շարունակեց և աղոթքով էլ ավարտեց Գեթսեմանիի պարտեզում: Նա, որ քարոզչությունից հաց ուտելու ժամանակ իսկ չուներ, շատ հաճախ առանձնանում էր աղոթելու, որպեսզի նոր ուժ ստացած շարունակեր Իր առաքելությունը: *««Հայր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ*

կամենում, այլ՝ ինչպես դու» (Մատթ. 26:39),- այսպես աղոթեց Հիսուս Գեթսեմանիի պարտեզում:

«Աղոթքը կրոնական կյանքի գլխավոր մասն է: Չկա կրոն, աստվածպաշտություն առանց աղոթքի»,- ասում է երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը և շարունակում. *«Ինչպես արտասուքը թեթևացնում է մեզ, երբ մեր սրտի վրա ծանրացած վշտի խոստովանությունն ենք կատարում մեր սրտակից բարեկամին, նույնը և ավելիով զգում ենք Աստծու առջև, որը մեր Հայրն է և մեր իսկական բարեկամը: Ջերմեռանդ աղոթքի ազդեցության տակ մարդկային հոգին ինչպես ամպ լցվում է սիրո ցողով, բանավոր, ծարավ տունկերի վրա անձրևելու համար: Աղոթքը սեր է...» («Դեպի Լույս և Կյանք», «Աղոթքի սրբարար զորությունը», Գանձասար, 1994, էջ 113-116):*

Երկու տեսակ աղոթք կա: *Հավաքական*- համայնքային աղոթք և առանձին աղոթք:

Ինձ լսող մի մանուկի հարցրեցի՝ *«Այս առավոտ դու աղոթեցի՞ր»* - Այո. - Այո՞: Չեմ ուզում հարցնել, թե ի՞նչ աղոթեցիր, բայց ո՞ւմ աղոթեցիր.. - Աստվածին...: Աստվածին է աղոթել: Եվ ճիշտ է այդ: Ով որ Աստծուն է աղոթում, ճիշդ Անձին դիմած կլինի:

Իսկ եթե ասենք՝ *«Աղոթում եմ, աղոթում և ինձ լսող չկա»,* հարց է ծագում. *«Ո՞ւմ աղոթեցիր»:* Մի անձի՞, քեզ համար ուժեղ թվացող մեկին խնդրեցիր, որ քեզ ուրախացնի, բայց ո՞վ է նա, չնչին մի արարած: Լավ հիշեք մեր աղոթքի շնորհիվ է, որ Աստված մեզ պիտի օգնի:

Կ. Պոլսի երջանկահիշատակ Պատրիարք Շնորհք Գալուստյանի մեկնաբանությունը.

«Առաքյալներից մեկն իրեն հատուկ կտրուկ և պարզ կերպով փորձում է այս հարցին պատասխանել «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում» (Հակ. 4:3): «Չարամտորեն խնդրել» նշանակում է Աստծուն դիմել չար, եսասիրական ու աշխարհիկ նպատակներով: Բնականաբար, չի կարելի դրանց պատասխան սպասել բարի, մարդասեր և հոգի Աստծուց: Բայց ի՞նչ ասել այն աղոթքների մասին, որոնք իսկապես արդար ու բարի են և ուղղված են հիվանդների առողջության, բանտարկյալ-

ների արձակման, աշխարհի խաղաղության, մեր ազգի ու Հայրենիքի ապահովության համար: Ինչպե՞ս կարելի է շարունակել աղոթել, երբ Հոբի վիճակին ես մատնված՝ հարստությունդ կորցրել ես, զավակներդ՝ կորած են, բարեկամներդ՝ թշնամի են դարձել, առողջությունդ՝ քայքայվել է, իսկ ընտանիքդ՝ քանդվել: Այսպիսի վիճակում հոգեկան մեծ պատրաստվածություն ու հավատք է պետք Աստծուն չուրանալու, չմերժելու ու չանիծելու համար» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Մեծ Պահոց Կիրակիների շրջթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 99):

Երբ մտածում ենք, թե բարի ենք, հաջորդ հարցը այս է. թե՝ *«Ինչո՞ւ Աստված մեզ նեղությունների ու փորձանքների մեջ է դնում»:* Ինչո՞ւ ենք զարմանում: Պետք է լավ հասկանանք, թե Աստված չէ որ նեղություններ է պատճառում մեզ, այլ՝ չարերը, որոնք ուզում են մեզ միշտ վախի ու տագնապների մեջ պահել, մեր կյանքը անտանելի դարձնել, մեր միջի եղած լավն էլ մոռացնել տալ: Նպատակը մեկ է՝ մեզ իրենց ծուղակի մեջ գցել և հեռացնել Արարչից:

Աղոթել նշանակում է խոսել Աստծու հետ, որը Ամենակարող է և Ամենավստահելին: Աստծու հետ խոսելուց հետո ոչ մեկի օգնության կարիքը չենք ունենա: Աղոթքի միջոցով անտեսանելի մի կամուրջ է կապվում մեր և Աստծու միջև, որը մեզ մի նոր ուժ է տալիս, հույս և վստահություն ներշնչում. *«Փառք քեզ Աստված, այսօր էլ ուրախ ենք մեր ունեցածի համար»:* Ս. Գրիգոր Նարեկացու խոսքերով. *«Ոչ թե տըրված, այլ տվողի կարոտն ունեմ»:*

Աղոթքը պետք է կատարվի սրտի և հոգու մաքրությամբ: Աստված չի լսում այն աղոթքը, որի նպատակը մի որիշին վնասելու համար է:

Գրիգոր Աստվածաբանն այսպես է արտահայտվում.

«Աղոթքը սրտի գործ է և ոչ թե շրթունքների, ու Աստված չի նայում աղաչողի խոսքերին, այլ՝ սրտին, թե ինչպես պատրաստվի ընդունելու:

Եկեղեցում կան մարդիկ, որոնք երկար են աղոթում, բայց աղոթողի վարք չունեն և ի՞նչ զարմանալու բան կա, եթե այդպիսի մարդու աղոթքը լսելի չլինի: Կիրակի օրը պետք է հեռու մնալ ամեն մարմնական աշխատանքից և միայն աղոթքով ու գոհություն

տալով զբաղվել» «(Ասույթներ քարոզների համար», Ս. Էջմիածին, 1998, էջ 130):

Հետաքրքիր է իմանալ այս պատմությունը.

«Համաշխարհային հանճարներից մեկը՝ Դանթեն, մի Կիրակի առավոտ, Սուրբ Պատարագի ամենասրբազան պահին, երբ հավատացյալները ծնկի եկած աղոթում էին, մնում է կանգնած, իր հակառակորդների ուշադրությունը դարձնելով իր վրա: Արարողությունից հետո նրանք մոտենում են կարդինալին և ամբաստանում Դանթեին իբրև սրբապիղծ ու անհավատ:

- Ո՜վ Դանթե, այս ինչ մեղք ես գործել, որ լսում եմ քո մասին,- ասում է Կարդինալը հուզված շեշտով:

- Ինձ ամբաստանողները իրավունք ունեն, Կարդինալ Հայր,- ասում է Դանթեն,- հոգիս այնքան վերացած էր աղոթքով, որ ուշադրություն չդարձրեցի մարմնիս շարժմանը, երևում է նրանք սրտանց չէին աղոթում, որ կարողացան ինձ նայել ու հետևել:

Ապրում ենք ու հաճախ դժգոհում, տեսնելով, որ չարը, անիրավն ու ավազակը չեն պատժվում իրենց ժամանակին: Չմոռանաք, որ Աստված արդար է և դրա համար անարդար որևէ՝ գործ հաճելի չի Նրան: Աստծու արդարությունը գործադրվում է սիրո սկզբունքով: Որևէ անիրավություն և անարդար գործ անպատիժ չի մնում: Սակայն Աստված մեր ուզած ձևով չի պատժում, բայց մեղավորը անպատիժ չի մնում: Սա մեզ չի գոհացնում, որովհետև մենք ուզում ենք, որ մեզ վիրավորողը ճիշտ մեր աչքի առաջ պատժվի: Աստծու պատժելու ձևը տարբեր է: Նա անիրավին մեր ուզածով չի պատժում, նախ հնարավորություն և առիթ է տալիս, որ մեղավորը դարձի գա ու չի ուզում, որ նա կորչի, այլ՝ փորձում է մինչև վերջին րոպեն փրկել նրան: Սա աստվածային սիրո արտահայտությունն է մարդկանց նկատմամբ: Սրանից բացի, Աստված մեզ ազատություն է տվել, որպեսզի գիտակցենք ու չմեղանչենք: Անձրևն ու արևը բոլորի վրա հավասարապես են թափվում ու այրում, դատաստանը հետո է լինելու:

Ամեն տեսակի աղոթք ընդունելի է, ուր էլ որ կատարվի: Սակայն աղոթքի հիմնական վայրը Եկեղեցին է, Աստծու Տունը, ուր հավատացյալները ներշնչումով ու հոգևոր մթնո-

լորտի մեջ հավաքական աղոթքով, շարականների երգեցողությամբ, Սուրբ Պատարագի հոգեպարար կատարումով, հաղորդակից են դառնում անիմանալի խորհրդին: Երբ Հիսուս ասում է, թե առանձնացեք տան մեջ, փակեք դուռն ու լուսամուտը և այդպես աղոթեցեք, մի ընդունեք բառացի կերպով: *Տունը մարդու հոգին է: «Փակել դուռն ու Լուսամուտը», նշանակում է կտրվել աշխարհային մտածումներից և կենտրոնանալ աղոթքի վրա:* Աղոթել Աստծու հետ նշանակում է խոսել Նրա հետ: Աղոթքի պահին հավատացյալը պիտի կտրվի ամեն ինչից և կապվի միայն Աստծու հետ: Երբ աղոթում ենք, ավելորդ բաներ չխնդրենք Նրանից, չմտահոգվենք մեր անցավոր, առօրյա կարիքներով, այլ խնդրենք Աստծու արքայությունը:

18-րդ դարի Հայ Եկեղեցու Հայրերից Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին իր *«Խրատի Թանգարան»* գրքում աղոթքի մասին այսպես է արտահայտվում.

«Ոչ ոք չի կարող իրեն անբասիր ներկայացնել եթե աղոթքն անտեսում է: Որովհետև ամեն ժամ ու ամենուր, ինչ վիճակում էլ, որ մեկը լինի՝ թե առողջ և թե հիվանդ, կարող է Աստծուն մտքում ունենալ Նրան փառավորել գովել ու օրհնել այս իսկ է աղոթելը»:... (Պողոս Պատրիարք Ադրիանաուպոլսեցի, «Խրատի Թանգարան», էջմիածին, 1999, էջ 393):

Մեր Եկեղեցու Հայրերից՝ Հովհան Մանդակունին իր ճառերից մեկում ասում է. *«Եթե մեկը սիրով լցված աղոթի, Աստված նրան կասի. «Ահա այստեղ եմ»: Երբ աղոթողը անկեղծ ու մաքուր արտասուքով աղոթի, երկնքի դռները կբացվեն ու նրա ձայնը կհասնի Աստծու ականջներին»:*

Իսկ Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Հովհան Ոսկեբերան Հայրապետն այսպես է արտահայտվում. *«Ինչպես ծառը չի կարող ապրել առանց ջրի, այնպես էլ մարդու հոգին՝ առանց աղոթքի միջոցով հաղորդակցվելու Աստծու հետ: Եթե դու ինքդ քեզ զրկես աղոթքից, քո վիճակը պիտի նմանվի ջրից դուրս հանված մի ձկան, որովհետև ինչպես որ ջուրը ձկան կյանքն է, այնպես էլ աղոթքը քեզ համար»:*

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի խոսքերն են. *«Ձեր զավակներին աղոթք սովորեցրեք, որ կեղտոտ խոսքերին ու*

հայհոյանքներին չվարժվեն, որովհետև մանկության ժամանակ ծնողների խրատը ավելի է դրոշմվում մանուկների մտքում անջնջելի կերպով, որի փոխարեն պիտի վարձատրվեք»:

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԲԿ.

«ՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆ»

Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո քրիստոս. անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ աստուած հոգւով եւ մտօք:

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով զգիշերն ի գլուխ յաղօթսն աստուծոյ բնութեամբ մերով տնօրինաբար, որում կրկնի ծունր ամենայն:

Աղաչանօք աստուածածնին անապական քում ծնողին. զիմանալի աչս սրտից մերոց բացցես ողորմութեամբ հայիլ ի լոյս քո քրիստոս:

ճշմարիտ պատվիրանն ավանդեցիր Եկեղեցուդ, Քրիստոս, թե միշտ պետք է անսահման ժամանակով հոգով և մտքով աղոթել Աստծուն:

Օրենքիդ խոսքը գործովդ հաստատեցիր, երբ ամբողջ գիշերն Աստծուն աղոթելով անցկացրիր՝ իբրև մեզ օրինակ, երբ հատուկ տնորինությամբ մեր բնությունն էիր առել, Որիդ առաջ իջնում են բոյոր ծնկները: Քրիստոս, Քո անապական ծնողի, Աստվածածնի աղաչանքով բաց մեր սրտերի իմանալի աչքերը, որպէսզի ողորմությամբ նայենք Քո Լույսին:

Եկեք մեր անձանձրույթ աղոթքով փառք և գոհունակություն հայտնենք Ամենակալ Աստծուն Իր պարգևած կյանքի և շնորհների համար: Ամեն:

ՀԻՍՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

«ԲԱՅՑ ԱՅԴ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄՎԱ ՄԱՍԻՆ ՈՉ ՈՔ ՉԳԻՏԵ. ՈՉ ԵՐԿՆՔԻ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՉ ԷԼ ՈՐԴԻՆ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՀԱՅՐԸ» (ՄԱՏԹ. 24:36)

Քրիստոնեական վարդապետությունը *«Քրիստոսի Երկրորդ գալուստը»* հասկացողությունը բացատրում է երկու ձևով. առաջինը վերաբերում է Հիսուսի երկրավոր կյանքին ու գործունեությանը, կատարած հրաշքներին, բժշկություններին, խաչելությանն ու Հարությանը, իսկ մյուսը՝ Նրա Երկրորդ Գալստյանը:

«Հավատամք»-ի մեջ հստակ շեշտված է, թե՝ Հիսուս *«պիտի գա նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու հանար ողջերն ու մեռածները...»:* Փորձենք թափանցել նրանց խորքը, այնտեղից քաղելու համար քրիստոնեական պատգամը, թե՝ *«Ի՞նչ է Երկրորդ Գալուստը մեզ համար և ե՞րբ այն տեղի պիտի ունենա»:*

Ոմանք հետաքրքասիրությունից դրդված կարող են հարց տալ, թե՝ *«Ինչո՞ւ այդքան կարևորությամբ պիտի հիշատակենք մի դեպք, երբ քսան դարեր առաջ արդեն իսկ մեր Փրկչի գալուստով վերջ էր գտնում այդ ակնկալությունը»:* Ճիշտ կլիներ այսպիսի հարց տալը, եթե Հիսուս այս աշխարհի վրա Իր առաքելության ընթացքում մի հարմար առիթով հայտարարած չլիներ. *«Իմ հաջորդ գալստյան ժամանակ»:*

Ինքնաճանաչմամբ մենք կարող ենք փնտրել ու գտնել մեր ներսում եղածը և ունենալ քաջությունն ու խոնարհությունը մերժելու մեր բոլոր թերությունները և որդեգրելու աստվածահաճո մի կյանք:

Երջանիկ է այն մարդը, որն ունի կարողությունը քննելու և դատելու իր անձը:

Մատթեոս Ավետարանչի 24-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է Հիսուսի Երկրորդ Գալստյանը:

«Զգույշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատեր կգան իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը, և շատերին կմոլորեցնեն: Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր, զգույշ եղեք, չխռովեք, որովհետև պետք է, որ այդ ամենը

լինի, բայց դա դեռ վախճանը չէ: Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ, և պիտի լինեն տով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց... Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, մարդու Որդու գալուստը այնպես կլինի... «Բայց այդ օրվա և ժամվա մասին ոչ ոք չգիտէ. ոչ՝ երկնքի հրեշտակները և ոչ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթեոս 24:4-9, 27, 36):

Իբրև հայ քրիստոնյաներ մեզանից ամեն մեկն իր մեջ ունի մեր Տիրոջ սերը, խոնարհությունը, հեզությունը, արդար ու մաքուր լինելու ձգտումը: Եթե անկարող ենք այս աշխարհի չարիքներին վերջ տալու, սակայն գոնե մեր բարի գործերով ու մաքրությամբ մենք հնարավորություն ունենանք մի վերք բուժելու և կամ մի ցավին սպեղանի գտնելու:

Մեր Հայրապետները խելացիորեն Մեծ Պահոց վեցերորդ Կիրակին հատկացրել են Փրկչի Երկրորդ Գալստյան, որպեսզի մտածենք մեր ապրած կյանքի վրա ու մեր մտքում գալիք ահավոր դատաստանի հեռանկարը ունենանք, երբ մի օր արդար Դատավորը՝ Հիսուս Քրիստոս մեզ բոլորիս պիտի կանչի, որպեսզի հաշիվ տանք մեր ապրած կյանքի համար, թե՝ *«Ի՞նչ ենք արել, և թե ինչպե՞ս ենք ապրել»:* Այն ժամանակ պիտի երևա չարն ու բարին, բարիները պիտի գնահատվեն, իսկ չարերը՝ պիտի դատապարտվեն գեհենի կրակի մեջ այրվելու:

«Մահկանացուներիս տրված չէ «գիտենալ ժամերն ու ժամանակները» Քրիստոսի Երկրորդ Գալստյան», «Բայց այդ օրվա և ժամվա մասին ոչ ոք չգիտե. ոչ երկնքի հրեշտակները և ոչ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթ. 24:36),-ասում է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Գալուստյանը և շարունակում է. *«Բայց բավական նախանշաններ են տրված, որոնց հիման վրա կարող ենք ասել, թե ժամանակների երկրորդ լրումից հեռու չենք: Չգիտենք, թե ամառը ո՞ր օրը կգա, բայց գիտենք, որ անպատճառ պիտի գա: Թզենու տերևներ արձակելն ինքնին նշան է, որ ամառը մոտ է. «Թզենուց սովորեցեք առակը, որովհետև, երբ նրա ոստերը կակղեն և տերևը ցցվի, կիմանաք, որ ամառը մոտ է» (Մատթ. 24:32), («Մեծ Պահքի Կիրակիների ոսկե շղթան», Սուրբ էջմիածին, 2001, էջ 118)»:*

Հիսուս, իբրև Մարդու Որդի, եթե այս մասին Իր անտեղյակ լինելն է հայտնում, դրանից չի կարելի եզրակացնել, որ նա որպես Աստծու Որդի՝ լուր չուներ այդ մասին: Նա պարզապես այս բացատրությամբ ցանկանում է շեշտել, որ դա միմիայն Աստծու մենաշնորհն է: Հիսուս այս մասին չի ուզում բացատրել, այլ այն ծածկում է մեղավորներից: Աստված չի ուզում մեղավորներին զգուշացնել, որպեսզի նրանք իրենց չարության մեջ չքաջալերվեն: Նրա ցանկությունն է, որ նրանք ժամ առաջ հրաժարվեն իրենց վատ ու մեղապարտ ընթացքից: Նույնը եղավ Նոյի ժամանակ: Մինչև Ջրհեղեղի սկսվելը Աստված զգուշացրեց բոլորին, սակայն Նրան լսող չեղավ, ընդհակառակը, նրանք շարունակեցին իրենց ցոփ ու շռայլ կերուխումով լի կյանքը: Երբ չէին կասկածում, ջրհեղեղը հասավ նրանց: Մինչ այդ Տապանը կառուցված էր և Նոյը իր բարեկամներով ու կենդանիներով ազատվեց: Հիսուսի Երկրորդ Գալստյան ժամանակ էլ նույնը պիտի պատահի:

Նախնական շրջանի քրիստոնյաները առաքյալների քարոզությունից ոգևորված մտածում էին, թե մոտ է Քրիստոսի Երկրորդ Գալուստը և ազատվելով իրենց առօրյա աշխատանքներից, աղոթքով ու ծոմապահությամբ սպասում էին այդ օրվան: Պողոս Առաքյալը հասկանալով ստեղծված դժվար կացությունը, փորձեց նրանց աշխատանքի մղել, հիշեցնելով, Հիսուսի խոսքերը. *«Դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ չեք սպասում, մարդու Որդին կգա»* (Մատթ. 24:44),բայց գալստյան ժամանակը անհայտ էր մնում:

Բնության անհերքելի օրենքի համաձայն, ամեն սկիզբ իր վերջն ունի: Մարդն էլ լինելով բնության մեկ մասը, ենթակա է նույն օրենքին: Աշխարհ ենք եկել որոշ ժամանակ ապրելու և մի օր նրանից պիտի բաժանվենք: Ուստի պատրաստ լինենք մեզ համար սահմանված օրերը անցկացնել ապրելով քրիստոնյային վայել մի կյանք, որը համապատասխան լինի Հիսուսի կյանքի օրինակին: Մեր հույսը դնենք Աստծու վրա և Նա պիտի օգնի մեզ ու չմտածենք անմիտ մեծատանն պես, որն ասում էր. *«Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգիստ արա, կեր, խմիր և ուրախ եղիր» (Ղուկ. 12:19),* որովհետև կարող ենք

ստանալ Աստծու պատասխանը. *«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (նույն 12:20):*

Ո՞վ կարող է դեմ կանգնել մահվան և կամ ո՞վ կարող է սակարկության մեջ մտնել հոգեառ հրեշտակի հետ: Դարեր առաջ Մեծն Ալեքսանդր Մակեդոնացու հայրը՝ Ֆիլիպ Մակեդոնացին, խստիվ պատվիրել էր իր ծառաներից մեկին, որ ամեն առավոտ իրեն ներկայանար ու արտասաներ հետևյալ խոսքերը. *«Ֆիլիպ, հիշիր, որ մի օր պիտի մեռնես»:* Աստվածորդին պատգամեց. *«Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. 24:3):*

Այս պատմությունը ուսանելի է:

Փարիզում Իմաստասեր Վոլտերի պատվին տրված ճաշկերույթին, պետական և մտավորական անձնավորությունների մեջ, ներկա էր նաև մի եպիսկոպոս, որը նստել էր անհավատ փիլիսոփայի կողքին:

ճաշկերույթի ամենատաք պահին, Վոլտերը գինուց հարբած, ոգևորված հանկարծ ոտքի է կանգնում ու իր ձեռքը եպիսկոպոսի ուսին դնելով բացականչում է.

- Սրբազան, շատ կարևոր առիթ է ձեզ համար օգտվել իմ հետևյալ հայտարարությունից. ճիշտ այս բոպեին մեկ ֆրանկի ծախում եմ իմ տեղը արքայության մեջ:

Բոլորը բավական երկար ծիծաղում են և աղմկում:

Երբ աղմուկն ու ծիծաղը հանդարտվում են, Սրբազանը հանգիստ առանց շտապելու ոտքի է կանգնում ու իր խոսքը փիլիսոփային ուղղելով ասում է.

- Վոլտեր, նախ օրենքը թույլ չի տալիս, որ վաճառես մի տեղ, որը քեզ չի պատկանում: Խորհուրդ եմ տալիս, որ նախ աշխատես տիրանալ այդ տեղին և մի անգամ, որ հաջողություն ունենաս, վստահ եմ, որ այն աշխարհի ամբողջ հարստության հետ չպիտի փոխանակես»:

Սրբազան Հայրը իրապես հրաշալի դաս է տալիս անհավատ փիլիսոփային:

Եկեք ոչ թե վախի ու պատիժի գիտակցությամբ, այլ սիրով, և մեծ հաճույքով կատարենք Աստծու սուրբ, բարի ու արդար կամքը, որպեսզի երբ մեր Տերը իր Հոր փառքով ու

երկնքի հրեշտակներով երկիր գա, մեզ արժանի նկատի երկընքի արքայության ժառանգորդները դարձնելու ու վայելելու Նրա քաղցր ու անփոխարինելի ներկայությունը:

Թող մեզանից ամեն մեկը ապրի Քրիստոսանման և Ավետարանի պատվերների համաձայն մի կյանք, որպեսզի երբ Հիսուս գա, մեզ արթուն ու պատրաստ գտնի ու դառնալով մեզ ասի. *«Եկեք իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25:34):* Հետևաբար, քանի դեռևս այս աշխարհում ենք ապրում, երբեք չհուսահատվենք: Արթուն ու պատրաստ լինելու առիթը տրվել է մեզ և մեր ձեռքն է, թե մենք ինչքանո՞վ վստահություն ունենք մեր Տիրոջ նկատմամբ:

Երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանն ասում է.

«Տիեզերքի մեծագույն դրամայի հիշատակումով է փակվում Մեծ Պահքի կիրակիների այս՝ այնքան իմաստայից ոսկե շղթան: Քրիստոսի Երկրորդ Գալստյամբ բացվում է մի նոր դարաշրջանի՝ «նոր երկնքի ու նոր երկրի» վարագույրը, ուր Մեծ Պահք այլևս չպիտի գոյություն ունենա, ոչ էլ այն ժխտական երևույթները և պատճառները, որոնք անհրաժեշտ դարձրեցին Մեծ Պահքը: «Բայց մենք Աստծու խոստման համաձայն, աչքներս հառած սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի...» (Բ. Պետ. 3:13): «Այս նոր միջավայրում ուրախությունը, ցնծությունը և «արդարությունը պիտի բնակվեն» «որոնցում արդարությունն է բնակվում» (Բ. Պետ. 3:13): Եվ նրա բնակիչները «հաղթողները» պիտի լինեն... «Ով հաղթի: պիտի ժառանգի այս ամենը, և ես նրանց համար Աստված լինեմ, և նրանք ինձ համար պիտի լինեն որդիներ» (Հայտն. 21:7): («Մեծ Պահքի Կիրակիների ոսկե շղթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 120):

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԲՁ.
«ՈՐ ՁԽՈՐՀՈՒՐԴ ՔՈ ԳԱԼՍՏԵԱՆ»

Որ զխորհուրդ քո գալստեանդ յառաջագոյն գուշակեցեր, մարգարէիքն իսրայելի զորս ընտրեցեր յետ մովսեսի. որք խօսեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք. տուր մեզ փրկիչ ողորմութիւն եւ զմեղաց զթողութիւն:

Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքն ծանուցին. զհասանիլ մեր փրկողիդ առ ի վախճան ժամանակին. Երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ զկերպ ծառայական. տուր մեզ փրկիչ ողորմութիւն եւ զմեղաց զթողութիւն:

Տաճար լուսոյ անստուերին եւ առազաստ անճառ բանին. որ զնախնւոյ մօրն եւայի բարձեր զանեծսն տրտմալի. հայցեա յորդւոյ քո միածնի հօր հաշտութեանն միջնորդի, բառնալ ի մէնջ զխռովութիւն եւ տալ զոգւոց խաղաղութիւն:

Քո զալստյան մեծ խորհուրդը, Դու նախապես հայտնեցիր Իսրայելի մարգարեներին, ում ընտրեցիր Մովսեսից հետո, ովքեր Սուրբ Հոգով խոսեցին, բազմապիսի պատգամներով. տուր մեզ, Փրկիչ, ողորմություն և մեր մեղքերին թողություն:

Երբ մոտեցան այն տարիները, որ կանխատեսները ծանուցեցին, հասար մեզ, ով մեր Փրկիչ՝ ժամանակները լրացնող, երևացիր մարդկանց մեջ, ծառաներիդ հետ ապրեցիր, տուր մեզ, Փրկիչ, ողորմություն և մեր մեղքերին թողություն:

Անստվեր լույսի տաճար և անճառ Բանի առագաստ, Դու, որ նախամոր Եվայի տխուր անեծքը վերցրեցիր (Քո վրա), խնդրիր Քո Միածին Որդուց, Հոր հետ հաշտության միջնորդից, որ մեր միջից հանի խռովությունը և խաղաղություն տա հոգիներին:

Աստվածաստեղծ մարդու մեջ առկա է աշխարհին հաղթելու զորությունը: Աստված Ինքն էր, որ մարդուն շնորհեց այդ իմաստությունը, որը մեր միջից արտացոլվում է միայն այն ժամանակ, երբ արթուն ենք մնում և մշտապես աղոթում, որովհետև, ինչպես Հիսուս Ինքն է պատգամում. *«.... Չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյա՞ն, թե՞՝ կեսգիշերին, աքլորականչի՞ն, թե՞՝ առավոտյան դեմ: Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի: Բայց ինչ որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում՝ արթուն կացեք» (Մարկ. 13:35-37):* Ամեն:

ԾԱՂԿԱԶԱՐԴ 1

«ՕՐՀՆՅԱԼ Է ԱՅԴ ԹԱԳԱՎՈՐԸ, ՈՐ ԳԱԼԻՍ Է ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆՈՎ»
(ՂՈՒԿ. 19:38)

Ավելի բան քսանմեկ դարեր առաջ Հիսուս որպես Փրկիչ ու Խաղաղության Իշխան հանդիսավոր մուտք գործեց Երուսաղեմ: Նրան դիմավորելու եկած ժողովրդի սրտից բխած ուրախության ձայների մեջ անընդհատ լսվում էին այս բառերը. *«Ովսաննա, Ովսաննա, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:* Պատմության մեջ իր նմանը չունեցող ուրախության տեսարանն էր, որ պարզվում էր Նրա ճանապարհին: Արմավենիների ոստերով, ձիթենյաց անուշաբույր տերևների զարդարված ճյուղերով զորգապատվել էր Հիսուսի ճանապարհը դեպի Երուսաղեմ: *«Ովսաննա»* նշանակում է՝ *«Օրհնեացի կամ օրհնյալ թող շինի»:* Շատերը շփոթված՝ կատարվածից հարցնում էին՝ *«Ո՞վ է որ գալիս է»* և ստանում պատասխանը, թե Աստծու Որդին է, որ հաղթական մուտք է գործում Երուսաղեմ:

Մեր Տերը մտնում էր Երուսաղեմ իբրև հասարակ, պարզ ու աղքատ մարդ, նստած խոնարհագույն ավանակի վրա: Նա ոչ սպառազինված բանակ ուներ, ոչ շքեղ հագուստներ և, ոչ էլ զինվորական պաշտպանություն: Հակառակ Իր այս պարզության, ժողովուրդը ողջունում է Նրան թագավորներին հատուկ փառաշուք ընդունելությամբ:

Ծաղկազարդը հայելին է այսօրվա մարդկության: Կյանքում մենք ևս հաճախ ողջունում ենք Հիսուսի ներկայությունը *«Ովսաննա»-ներով,* սակայն շատ անգամներ մեր մեջ ստեղծվում են նաև տկարության ու թուլության պահեր, երբ Ավետարանի ոսկի օրենքները կորցնում են իրենց գործնական՝ արտահայտությունը մեր ամենօրյա կյանքում: Ապացույց՝ այսօրվա մեր կյանքը, ներկա աշխարհը իր բոլոր երեսներով, ուր մարդը՝ մի կողմից դեպի Աստված է բարձրանում, իսկ մյուս կողմից՝ դժբախտաբար, գնում դեպի կործանում և իր մեջ խեղդում հոգևորն ու բարոյականը:

Մեր Տերը շատ լավ գիտեր, թե ձիթենու և արմավենու ճյուղեր բռնողները *մի քանի օր հետո պիտի ծեծեն Իրեն,* տոնական զգեստները ճանապարհի վրա փռողները՝ *պիտի պատռեն Իր հագուստները, «Ովսաննա ի բարձունս»* երգողները, վրեժի զգացումներով պիտի փոխեին իրենց ձայները զայրացած

աղաղակների՝ *«Խաչ հանեցեք Դրան»* և Իրեն մատուցված ծաղկեփնջերը՝ *պիտի դառնային փշերից հյուսված պսակի:*

Ամեն մարդ Աստծու կողմից իրեն շնորհված կյանքը պարտավոր է թանկագին նվեր նկատել, որը պետք է խնամի ու անխնա չգործածի և ճակատի քրտինքով վաստակելով իր հացը՝ փառք տա Աստծուն ու այդ բարիքներին մասնակից դարձնի նրանց, որոնք օգնության կարիք են զգում: Այդպես վարվեցին հոգով հարուստ մարդիկ, քանի մեծացան, այնքան խոնարհվեցին, ինչքան նյութական հարստություն հավաքեցին, այնքան առատաձեռն դարձան, որովհետև հրաշալի կերպով կարողացան տեսնել ճիշտ համեմատությունները իրենց անձի ու Աստծու հզոր ուժի միջև: Իսկ նրանք, որոնք իրենց ֆիզիկական ուժով գոռոզացան և իրենց կամքը պարտադրեցին ու կարծեցին, թէ *«մեծություններ»* դարձան, չարաչար սխալվեցին, որովհետև ժամանակից շուտ քայքայեցին իրենց կյանքը և նույնիսկ ոմանք իրենց կենդանության օրոք, իբրև արյունաքամ բռնակալներ իրենց իսկ ժողովրդի կողմից դատապարտվեցին ու խաչվեցին:

Խորանի փակ վարագույրը խորհրդանշում է դրախտի, Երուսաղեմի ու մեր հոգու դուռը: Հիսուս որպես խաղաղասեր Իշխան, Ծաղկազարդի օրը Երուսաղեմի դռնից մուտք է գործում, իսկ այսօր՝ մեր հոգիներից ներս:

Ավելի քան պարզ է, թե Ծաղկազարդի տոնն է պատճառը, որ մեր Եկեղեցին այսպես գեղեցիկ կերպով զարդարված է: Բնական ուրախությունից բացի, այս զարդարանքը երբեմն վախ է առաջացնում մեր մեջ: Ինչո՞ւ: Բոլորդ էլ լավ եք հիշում Ավետարանի թզենին, նա էլ կանաչ էր ու գեղեցիկ տեսք ուներ, սակայն Հիսուս պտուղ չգտնելով նրա վրա՝ չորացրեց: Աղոթենք, որ մեր Եկեղեցին նման ճակատագիր չունենա: Այս նյութական տեսարանով պարզապես հիացողներ չլինենք, այլ հասկանանք կատարված խորհրդի կարևորությունն ու մեծությունը: Հակառակ չենք, որ մեր Եկեղեցին միշտ զարդարված լինի, սակայն ոչ թե միայն ծաղիկներով, գեղեցիկ նկարներով կամ աչքի ընկնող ուրիշ առարկաներով, այլ՝ մանավանդ մեր ներկայությամբ և իրար նկատմամբ ունեցած մեր սիրով ու բարի գործերով: Ի՞նչ էր արել Հիսուս,

որ օրհնում ու փառաբանում էին Նրան, պարզ մի բան, բուժել էր, հրաշքներ գործել և մխիթարել նրանց:

Քսանմեկ դարեր են անցել այն օրից, երբ Աստծու Որդին մտավ սուրբ քաղաքը և Իր ձայնը բարձրացրեց հաստատելու համար այն, թե Տաճարը Աստծու Տունն է և պետք է մնա իր վեհության մեջ:

Ուզում եմ այս պատմությունը ձեր ուշադրության հանձնել:

«Մի ժողովուրդ չար մարդկանց երեսից ըմբոստանում է իր արդար թագավորի դեմ. ձերբակալում ու բանտարկում է նրան: Թագավորը իր ընկերների օգնությամբ կարողանում է բանտից փախչել և ամբողջ գիշեր հոգնած թափառելուց հետո, հասնում է ամայի մի տեղ ու քնում քարի վրա:

Ապստամբները լսելով թագավորի փախուստի մասին, կատաղությունից այլայլված, խուզարկում են ամեն տեղ նրան գտնելու և սպանելու համար:

Վերջապես նրանց հաջողվում է գտնել հուզումից և վշտից այլակերպված թագավորին, սրտաշարժ ու անճանաչելի դրության մեջ:

Բարկացած մարդիկ նրան տեսնելով առանց արքայական պատմուճանի, մերկ ոտքերով արյունլվա վիճակում, խղճահարվում ու ներքնապես ուժեղ ցավ են ապրում և հասկանալով իրենց սխալը, ծնկի գալով ներողություն են խնդրում ու արտասվալից աչքերով երդվում մշտապես հավատարիմ մնալ իրենց թագավորին»:

Սակայն, դժբախտաբար մի ժողովուրդ, որն սպասում էր Հռոմեական հզոր Կայսրության լծից իրեն փրկելու համար աշխարհիկ զինվորական հրամանատարի, Հիսուսի Երուսաղեմ փառաւոր մուտքից հետո ուրացավ ճշմարիտ Թագավորին, ոտքերի տակ ճզմեց ձիթենու ու արմավենու ճյուղերը և չարչարանքներով ու տանջանքներով խաչի վրա մահվան արժանացրեց Նրան:

Սուրբ Պատարագի ավարտին կատարվում է նաև Դռնբացեքի արարողությունը: Ներկայացվում է Վերջին Դատաստանը: Տեղի են ունենում հարցեր ու պատասխաններ: Փակված վարագույրի առջևից երեք անգամ հաջորդաբար

երգվում է *«Բաց մեզ Տեր»* երգը, իսկ Հիսուս կոչ է անում ժողովրդին՝ ապաշխարելու և իրենց մեղքերի համար թողություն խնդրելու:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա ոչ թե խոսքով, այլ գործով պիտի հաստատի իր խաղաղասեր ու մարդասեր լինելը: Մեր ընտանիքներից ներս՝ քենը, ատելությունը, նախանձն ու ոխը պետք է վերանան: Մեր մեջ քրիստոնեական սերն ու ներողամտության ոգին ձիթենու հունտերի պես պետք է ուժեղ արմատներ ունենան: Եթե մեզ չուզողների, հակառակորդների ու թշնամիների հետ այսօր չմիանանք, ե՞րբ ն ո՞ւր պիտի հաշտվենք: Ինչպե՞ս կարող ենք Հիսուսին ողջունել, Ծաղկազարդ և Զատիկ տոնել, երբ մեր հարազատների հետ գժտված ենք ու մերժում ենք նրանց հետ կիսել մեր Տիրոջ ուրախությունը: Եկեք մեր բարի գործերով արդարացած, սրբված ու մաքրված Դոնբացեքի շարականին ձայնակցելով ասենք՝ *«Տեր, Քո ողորմության դռները բաց մեր ժողովրդի առջև, որպեսզի մեր զավակներն էլ Քո սրբերի հետ միասին լուսեղեն հարկերին արժանանան»:* Ամեն:

ԾԱՂԿԱԶԱՐԴ 2

«Ո՞Վ Է ՍԱ...» - «ՍԱ ՀԻՍՈՒՍ ՄԱՐԳԱՐԵՆ Է,
ՈՐ ԳԱԼԻԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԻՑ Է»

(ՄԱՏԹ. 21:10)

Ավելի բան քսանմեկ դարեր առաջ Հիսուս որպես Փրկիչ մուտք գործեց Երուսաղեմ: Տեղացի խուռներամ ժողովուրդը ջերմ մթնոլորտի մեջ արմավենիների ու ձիթենու ճյուղերով դիմավորեցին և ողջունեցին Նրա հաղթական գալուստը: Աստվածաշունչ Սրբազան Մատյանը ասում է. *«Արդարները արմավենու պես պիտի ծաղկեն»:* Արմավենին իր հատկանիշներով խորհրդանշում է արդար մարդկանց կյանքը, նկարագիրն ու վարքը:

Ծաղկազարդ: Այս անունը հատուկ է միայն մեզ՝ հայերիս: Մյուս քրիստոնյաները այն կոչում են *«Արմավենիների կիրակի»:*

Երուսաղեմի ճանապարհին Հիսուսին դիմավորելու եկած ժողովրդի սրտից բխած ուրախության ձայների մեջ, անընդհատ լսվում էին այս բառերը. *«Ոսկաննա, Ոսկաննա, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:* Շատերը շփոթված կատարվածից, հարցնում էին, թե *«Ո՞վ է սա...»* Աստծու Որդին էր, որ հաղթական մուտք էր գործում Երուսաղեմից ներս: Օրհնության այս խոսքերից բարկացած, Փարիսեցիներից ոմանք համարձակվում են մոտենալ Հիսուսին ու ասում են. *«Վարդապետ, սաստիր քո աշակերտներին»: Նա պատասխանում է. «Ասում եմ ձեզ, եթե դրանք լռեն էլ, այդ քարերը կաղաղակեն» (Ղուկ. 19:39-40):*

Պատկերացրեք ժողովրդի հսկա մի բանակ, որը թափոր կազմած Երուսաղեմի փողոցներով քայլում էր դեպի Տաճար, իր մեջ ունենալով Հիսուսին ու Նրա Առաքյալներին: Ինչպիսի՜ զեղեցկություն: Ժողովուրդը տեսնելով տաճարի վեհությունը, մի պահ հանդարտվում է: Այս պահից օգտվում են Երուսաղեմի մանուկները, որոնք իրենց զիլ ու թարմ ձայներով երգում են. *«Ոսկաննա, Օրհնություն Դավթի Որդուն...»:*

Այսօրվա մեր կյանքը, ներկա աշխարհը իր բոլոր երեսներով, իր մեջ խեղդում է հոգևորն ու բարոյականը և

կյանքի բարի սկզբունքները: Այս շփոթի մեջ, մեղքերի մեջ թաթախված մարդը, պիտի արթնացնի իր մեջ Հիսուսի Երուսաղեմ մուտքի կենդանի պատկերը, որպեսզի մի անգամ ևս իր ու Աստծու միջև վերահաստատվի կապը՝ աղոթքի ճանապարհով, որովհետև ինչպես Հիսուս Երուսաղեմի տաճարում մաքրագործում կատարեց, դուրս քշելով բոլոր վաճառականներին, լումայափոխներին ու աղավնի վաճառողներին, այդպես էլ, երբ բացենք մեր սրտերը ու մեր հոգիները դարձնենք դեպի Երուսաղեմ, մաքրած կլինենք մեր ներկա կյանքը:

Հիսուս՝ իբրև Խաղաղության Իշխան, վերջին անգամ այսպես հաղթական թափորով ու ժողովրդային ցույցերով Երուսաղեմ էր մտնում, օրինակ հանդիսանալով մեզ իբրև հեզության ու խոնարհության տիպար:

Անձնասեր մարդիկ իրենց հասցեին շռայլված գովեստներից *«երկինք»* են բարձրանում, հպարտության մահացու մեղքից տառապելով, իսկ խոնարհ ու համեստ մարդիկ խուսափում են ամեն տեսակի փառաբանություններից և ցուցամոլ ձևերից: Աստված մարդուն ստեղծեց և կենդանական աշխարհի վրա իշխան կարգեց: Եվ նա ստեղծված օրից մեծագույն վարպետությամբ կարողացել է զսպել, կրթել ու մարզել վայրի գազաններին, նրանց օգտագործելով զանազան ծառայությունների համար: Վայրի կենդանիներին վարժեցնող ու զսպող մարդը, սակայն, այսօր, զարգացման գագաթնակետին հասած այս հզոր դարում, դժբախտաբար չի կարողանում ինքնիրեն կրթել, հակառակ որ Աստծու տված հրաշալի կյանքը ունի իբրև պարգև:

Եթե Ավետարանի լույսով նայենք կյանքին, մեզ համար պարզ կլինի, որ հեզությունը և խոնարհությունը մարդու ամենազնիվ ու փայլուն գծերից մեկն է, հասկացող և գնահատող մարդու համար, բարոյական այնպիսի մի մեծ ուժ ու քաջություն է, որի մարմնացումը և օրինակը եղավ մեր Տերը Հիսուս Քրիստոս, Իր ծննդից մինչև Գողգոթա:

Աշխարհի հզորագույն թագավորը Երուսաղեմ մուտք գործեց ամենախոնարհ կենդանու վրա նստած, խոնարհվեց ու լվաց Իր աշակերտների ոտքերը և խրատեց նրանց, *«Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5:5):*

Բարիքի հանդեպ *երախտագիտությունը,* մեծության մեջ *հեզությունը,* անհատների ու ազգերի նկարագիրը բարձրացնող առաքինություններ են: Մեծ փիլիսոփա Սոկրատը ասել է. *«Ճանապհիր քեզ»:* Ահա այս է կյանքի իսկական իմաստը:

Տոնական այս օրերին, հոգեկան ազնիվ զգացումներով ու վեհ ձգտումներով, բովանդակ անկեղծությամբ մոտենանք Ծաղկազարդի խորհրդին: Մեր մոլությունները, կրքերն ու չար բնավորությունները փռենք Նազովրեցու ոտքերի տակ, որպեսզի Նա ոտնակոխ անի և քայլի դրանց վրայից:

Դժբախտաբար, այսօրվա աշխարհիկ կյանքում, *խոնարհություն, պարկեշտություն, մարդասիրություն և նման առաքինությունները* գուցե թուլություններ են նկատվում, բայց վերջին հաշվով, այդ ճանապարհով գնացողներն են, որ հասնում են իսկական երջանկության և հոգեկան խաղաղության, որովհետև հասկանում են *կյանքի իմաստը:*

«Ովսաննա օրհնեալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով»: Այս եղավ առաջնորդող ամբոխի կարգախոսը, որ բոլորի շրթունքներին մի նոր կյանք էր ստանում լի հույսով, թե ավանակի վրա նստող այս Հիսուսը քաջությունը պիտի ունենար Ինքնիրեն հրեաների նոր առաջնորդը հայտարարելու և դրանից հետո Նրան պիտի հաջողվեր Հռոմի դրած ծանր լուծը վերցնել իր ժողովրդի ուսերից:

Արժ. Տ. Շահե Ավագ Քհն. Ալթունյանը այսպես է բացատրում Ծաղկազարդի իմաստը.

«Տեսել էին Հիսուսի հրաշքները, լսել Նրա խոսքերը և նրանք ուրիշ բան չէին կարող եզրակացնել բացի նրանից, որ ահա այս Հիսուսն էր՝ դարերից ի վեր սպասված Մեսիան մարմին առած, որ գալիս էր ժողովրդի ազատագրությունը հաջողեցնելու: Թվում է, թե չէին անդրադարձել այն հաստատումներին, որ Նա արել էր անշեղ հստակությամբ. «Իմ թագավորությունը այս աշխարհից չի»: Արդյոք ժողովուրդը կո՞ւյր էր, թե խուլ: Ի՞նչպես չէին հիշում Նրա խոսքերը»... (Արժ. Տ. Շահե Ավագ Քհն. Ալթունյան, «Քրիստոս Փառավորյալ Հունվարեն Դեկտեմբեր», 2006, էջ 57-58):

Մեր Տերը մտավ սուրբ քաղաքից ներս: Զայրույթով լցվեց Նրա հոգին ի տես շուկայի վերածված տաճարի շրջափակի: Տապալեց դրամափոխների սեղանները և հրամայեց,

որ տաճարի սրբությունը փչացնողները հեռանան այնտեղից. *«Գրված է՝ Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ. 1:13):*

Անհավատը և թերահավատը, ի՞նչ վիճակում են նրանք, փրկությա՞ն, թե՞՝ կործանման: Նրանք նմանվում են անապատում կորած մարդուն, որի աչքին միայն ավազն է երևում, ուր որ շրջում է ավազ է տեսնում: Ի՞նչ պիտի անի, որպեսզի մի օազիս գտնի: Պարզ է, որ փրկության միակ ելքը այս է. նա պիտի բացի իր աչքերը գտնելու համար դեպի կյանք տանող ճանապարհը, որ է Հիսուս Քրիստոս:

Դժբախտաբար շատ քչերին են հետաքրքրում այս հարցերը, որովհետև աշխարհիկ կյանքը մագնիսի պես քաշում է նրանց:

Հիսուս չվատաբանեց աշխարհի կյանքը, ընդհակառակը, այն ապրեց իր ամբողջության մեջ, բայց նրա գերին չդարձավ: Ապրեց երկրի վրա իբրև Մարդ, բայց աշխարհը չկարողացավ իշխել Նրա վրա:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԱԶ.
«ՈՐ ՎԵՐՕՐՀՆԻՍ»

Որ վերօրինիս յաթոռս քերովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար, բարեբանեալ որ երկիրդ ի կեցուցանել:

Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն զձայն մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով, բարեբանեալ որ երկիրդ ի կեցուցանել:

Ովսաննա ի բարձունս ալէլուիա, բարեբանեալ եկեալ անուամբ տեառն ալէլուիա. եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ տեառն ալէլուիա:

Դու որ քերովբեների աթոռների վրա վերստին օրհնվում ես, հաճեցար ավանակի վրա նստել մեզ փրկելու եկար, ո՛վ բարեբանող:

Ուստի մենք էլ, հաղթական օրհնություն ենք մատուցում Քեզ, տղաների հետ Քեզ օրհնաբանելով, Թագավոր Փառաց, որ մեզ փրկելու եկար, ո՛վ բարեբանող:

Ողսաննա բարձունքներում, ալելուիա՝ բարեբանյալ է Տիրոջ անունով եկողը, ալելուիա և օրհնություն, որ Տիրոջ անունով պիտի գաս. ալելուիա:

Մենք էլ կանչված ենք նույնը անելու, հակառակ դեպքում չպիտի բարձրանանք և հոգևոր մի նոր մարմին ստանանք: Քրիստոսի Հարությունը ապացույցն է, թե Երկնավոր Հայրը ինչքան էր սիրում Իր ստեղծած մարդուն, փաստ է, որ մեր վաղվա օրը աշխարհից կախված չէ: Ամեն:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՅՍՏԵՂ ՉԷ ՆԱ, ՔԱՆԻ ՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ»
(ՄԱՏԹ. 28:6)

Հիսուսի դատարկ գերեզմանում երևացող հրեշտակի այս ցնծագին արտահայտությունը մեծ ուրախություն պատճառեց Յուղաբեր կանանց և Նրա առաքյալներին: Նույնը ապրում ենք և մենք՝ քսանմեկ դարեր հետո: Հիսուսի Հարությունը քրիստոնյա աշխարհի մեծագույն տոնն է: Մենք հայերս այն կոչում ենք նաև Սուրբ Զատիկ:

Ի՞նչ է նշանակում *«Զատիկ»:* Այս բառին տրված զատվելու, բաժանվելու մեկնաբանության մեջ, նկատի է առնվել հրեաների Եգիպտական գերությունից բաժանումը, իսկ Քրիստոսի Հարությամբ՝ մեղքից և մահից բաժանվելն ու վերջնական իմաստով վերադարձը դեպի Աստված:

Սուրբ Զատկի սովորություններից է միմյանց կարմիր ներկված հավկիթներ նվիրելը: Համաձայն ավանդության Մարիամ Մագթաղենացին, Հռոմում ներկայանալով Տիբերիոս Կայսրին (14-37թթ.) և վկայելով իր քրիստոնյա լինելը, նրան կարմիր ներկված հավկիթ է նվիրում՝ ասելով. *«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:* Հավկիթը խորհրդանշում է նոր կյանքի սկզբնավորումը, իսկ կարմիր գույնը՝ Քրիստոսի արյունը:

Մեր առօրյա կյանքում գեղեցիկ սովորություն կա օրվա տարբեր ժամերին բարև տալ միմյանց, սակայն մենք դա կատարում ենք առանց անդրադառնալու դրա իմաստի ու կարևորության վրա:

Մանավանդ Սուրբ Զատկի տոնին, երբ ողջունում ենք իրար, թե՝ *«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»* և ստանում պատասխանը՝ *«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»,* անհրաժեշտ է մի պահ կանգ առնել, մտածել ու կենտրոնանալ այս ողջույնի մեջ խտացված խորիմաստ պատգամի վրա, ուր կարող ենք գտնել երեք վսեմ և հրաշալի մտածումներ:

ա. Ողջունելով Քրիստոսի Հարությունը, հավատում ենք, թե իսկապես Աստծու Միածին Որդին հոգով և մարմնով երեքօրյա թաղումից հետո Հարություն առավ:

բ. *«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»* պատասխանելով, հավատում ենք, թե այս պատմական հրաշափառ դեպքը պսակվել է Աստվածային օրհնությամբ:

գ. Ամեն մեկս իբրև քրիստոնյա հավատքով և ամբողջ հոգով պիտի ընդունենք Հիսուսի Հարության հույսը, որովհետև այս հրաշալի դեպքը մեզանից դուրս կատարված մի իրողություն չէ, այլ՝ մեր միսն ու արյունը:

Աստվածորդին խաչվեց, թաղվեց ու Հարություն առավ և ապրում է մեր սրտում: Սակայն Զատկական ճշմարիտ պատգամը այս չէ: Ճիշտ է, որ ավետարանները այս բոլորը նկարագրում են գեղեցիկ ու հոգեխռով ձևով, բայց ամենակարևորը այն է, որ աշակերտները գտան մի դատարկ գերեզման: Ահա այս նույն խորհրդին է, որ հայ քրիստոնյան հավատացել է դարերի ընթացքում, հետևելով Պողոս Առաքյալի խոսքերին *«Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է և ձեր հավատը» (Ա. Կորնթ. 15:14):*

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառ Հայրապետը հրաշալի կերպով է բնութագրում Հարության Հաղթանակը.

«Քրիստոսի Հարության հիշատակը լոկ պատմական մի դեպքի տարեդարձը կամ տոնակատարությունը չէ, այլ միշտ նորոգվող հոգեկան մի հրաշալի ապրում, որ համակում է մարդկանց ողջ էությունը, ամեն տարի միշտ նույն ուժգնությամբ, միշտ նույն թարմությամբ, միշտ նույն ջերմությամբ: Ամեն տարի, կարծեք նոր է, որ Հարություն է առնում Հիսուս իր գերեզմանից: Կարծեք մեզանից ամեն մեկի հոգու գերեզմանից է հառնում Նա» («Աստվածահրավեր պատգամներ», Լոս Անջելես, 2004, էջ 7):

Դժբախտաբար մենք հավատում ենք միայն պատմական Քրիստոսին, հաճախ ճիշտ այնպես, ինչպես հավատում ենք փիլիսոփա Սոկրատին, Արիստոտելին, Բուդդային, որոնք ապրել ու քարոզել են գեղեցիկ բաներ և անցել պատմության գիրկը, սակայն այդ չէ բուն Քրիստոսը: Գլխավորը ապրող, ներգործող ու հոգիները հեղաշրջող Հիսուսն է, որի հետ մշտնջենապես հաղորդակցության մեջ պիտի լինենք: *«Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտռում: Այստեղ չէ՝ այլ հարյալ» (Ղուկ. 4:5-6):*

Այո', մենք փնտրում ենք Հիսուսին երբեմն սիրով ու սրտով, բայց երբ Նա հանդիպում է մեզ, չենք ճանաչում Նրան, *«պարտիզպան»* կամ *«Ճամբորդ»* ենք կարծում, որովհետև հոգսերով տարված մեր սրտում եղածն է միայն, որ տեսնում ենք, փոխանակ իրականությունը տեսնելու: Նրան փնտրում ենք բամբասանքների, սրա ու նրա կարծիքի մեջ... Պատմական Քրիստոսը կարող է ներշնչել, բայց չի կարող հեղաշրջել:

Ջատկի առավոտյան գլորված քարը գալիս էր հիմնովին հեղաշրջելու մարդու դիրքորոշումը մահվան հանդեպ: Այդ քարի գլորվելուց ի վեր աշխարհը այլևս նույնը չմնաց: Ժամանակին, հին աշխարհի մարդիկ մտածում էին, թե երկրագունդը հարթ ու տափարակ գետին է, սակայն դեպի Նոր Աշխարհ ուղևորությամբ գիտության ու մարդկանց մտքերը հիմնովին փոխվեցին: Հին գիտնականներն ու աստվածաբանները հավատում էին, թե մեր երկրագունդը տիեզերքի կենտրոնն է, բայց Գալիլեյի գյուտից հետո, աշխարհը փոխվեց: Այնպես, ինչպես յուրաքանչյուր գյուտ մի քար է գլորել աշխարհի ու մարդկանց մտքերից հ բնության նկատմամբ մի նոր մոտեցում ցույց տվել մարդուն, այնպես էլ, Հիսուսի գերեզմանի քարի գլորումը եկավ Մարդու Կյանքի ու Մահվան հանդեպ ունեցած իր գաղափարները հիմնովին հեղաշրջելու ու նոր և ավելի դրական մի դիրքորոշում տալու նրան:

Քրիստոնեական Եկեղեցու իջնելը պատմության թատերաբեմի վրա եղավ արդարև մեծագույն *«շարժումը»,* որը մի կողմ գլորեց նախապաշարումների, կուռքերի, հեթանոսության ու ընկերային խտրությունների քարերը հ խախտեց չարի *«իշխանություններն ու պետությունները» (Եփես. 6:1),* որոնք լայնորեն բացվել էին Աստծու դեմ ու հանգցրեց ցանկության և սուտ գիտության կրակները:

Այդ մեծ *«շարժը»* երբեք չի կանգնել, այլ միայն թուլացել է երբեմն ու դանդաղել: Միլիոնավոր մարդիկ շարժման մեջ են Ավետարանը լսելու համար. մեր օրերի հռչակավոր հոգևորականների քարոզչական շարժումները այդ են ապացուցում: Այսօր Եկեղեցին հսկայական աշխատանք է տանում շարժելու հ մի կողմ գլորելու համար գերեզմանաքարերը

թմրեցուցիչների, անարդարությունների, պատերազմների, ցեղային խտրականությունների, որոնք մարդկության մեծ մասին փորձում են պահել մեղքի ու մահվան գերեզմաններում:

Մեզ համար կարևոր հարց է, թե՝ *«Ի՞նչ շարժում կա Հայ Եկեղեցու կյանքում»:* Չի կարելի ակնկալել *«մեծ շարժում»,* բայց որտեղի՞ց պիտի գա *«սաստիկ հովի այն հնչյունը», որ* պիտի *«շարժի»* Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ջրերը, որպեսզի նրա մեջ նետվողները կարողանան բժշկվել իրենց հոգեկան հիվանդություններից: Այդ *«շարժումը»* միայն «Երկընքից» *կարող է գալ,*- ասում է երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանը. *«Մենք մեր աղոթքներով նախ պիտի շարժենք երկինքը, որպեսզի երկինքն էլ շարժի եկեղեցու ավազանի ջրերը, կյանքի և կենդանության շունչ դնելու համար նրա մեջ, մեզ վերակենդանացնելու հարության շնչով»: («Տաղավար Տոներ», 1976, էջ 186):*

Սուրբ Զատկի պատգամը այս է: Մահը պարտված է և կյանքը հաղթական: Այլևս ազատ ենք մեղքի ու մահվան կապանքներից և կարող ենք քայլել գլուխներս բարձր ու արժանապատվությամբ, լի հույսով և ուրախությունը մեր աչքերում ու սրտերում, որովհետև Սուրբ Զատիկը այսօր և հավիտյան մեր Փրկչի հրաշափառ Հարությամբ մեզ տրված մի Նոր Կյանքն է:

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»
«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամեն:

ՀԱՐՈՒՑՅԱԼ ՔՐԻՍՏՈՍԸ

«ԻՆՉՈ՞Ւ ՈՂՋԻՆ ՄԵՌԵԼՆԵՐՍ ՄԵՋ ԵՔ ՓՆՏՐՈՒՄ: ԱՅՍՏԵՂ ՉԷ՝ ԱՅԼ ՀԱՐՅԱՎ»

(ՂՈՒԿ. 24:5-6)

Մարդու միտքը, գիտության բարձունքների հասած, միշտ ձգտում է փաստ փնտրելու կամ ականատեսի վկայություն պահանջելու: Մեր Տիրոջ Հարությունը ոչ մի վկա չունեցավ: Չորս ավետարանիչների վկայություններն իսկ իրարից տարբերվում են: Ոչ մեկը չտեսավ, թե գերեզմանի խավարում ինչպես Հիսուսի անշնչացած մարմինը գույն ստացավ, սկսեցին շարժվել նրա մատները, նա կանգնեց ու գցեց իր առաջին քայլերը... Միակ փաստը՝ դատարկ գերեզմանն է: Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ մարդկայնորեն մի ննջեցյալ կենդանացնել դա վեր է մարդու ուժից: Հիսուս իր Հարությամբ ապացուցեց, որ իրապես Ինքը Աստծու Որդին է:

Գարնան սկզբին մի պարտիզպան ծաղիկի սերմը թաղում է հողի մեջ: Նրա կողքին կանգնած ընկերը ասում է. *«Ինձ համար տհաճ է նայել քո կատարած գործողությանը, որովհետև այն ինձ հիշեցնում է գերեզման փորելն ու մեռել թաղելը»:* Պարտիզպանը պատասխանում է. *«Ես այն օրվա համար եմ թաղում, երբ շատ չանցած գեղեցիկ ծաղիկներ պիտի բուսնեն այս հողերից»:*

Նշանավոր մտածողներից մեկն այս գեղեցիկ կյանքը նմանեցրել է մի բուրումնավետ վարդի, որը ժամանակի ընթացքում թափում է իր տերևները, պահելով միայն մի կորիզ: Արդյոք կարո՞ղ ենք մարդուն էլ նմանեցնել վարդի այս վիճակին: Ինչո՞ւ ոչ: Մարդը, սակայն գլուխ-գործոց է, որն Աստծու հրամանով, տարիների ընթացքին մաշվում, հալվում, ծերանում, մեռնում ու դառնում է հող: Եվ քանի որ բույսը ամեն տարի վերստին ծնունդ է առնում, մարդը ինչո՞վ է պակաս նրանից: Մեր Եկեղեցին հավատում է, որ մարդու հոգին անմահ է: Բայց, որպեսզի մարդն արժանի լինի այդ երկրորդ կյանքին, հոգևոր և բարոյական բարձր արժանիքներ պետք է

ունենա, այսինքն՝ բարի, առաքինի և մաքուր կյանք ունենա, ողորմություն բաժանի, օգնի կարիքավորներին և մխիթարի սգավորներին:

Թերահավատի կամ անհավատի համար մահը ամեն ինչի վերջն է, մեր կյանքի, երազների, բարեկամությունների ու սիրո, մահ, որն իր հետ բերում է միայն մայրամուտներ, տխրություն ու սուգ: Սակայն բոլոր նրանք, որոնց սրտերը լի են Աստծու նկատմամբ ունեցած սիրով ու հավատքով, մահը դառնում է մի նոր արշալույս, մի նոր սկիզբ և մի նոր կյանք:

Քրիստոսի Հարությունը մարդկային կյանքում բացված գարունն է, նոր ու ճշմարիտ կյանքն է, որի ճարտարապետը, սակայն մենք ենք: Մենք ենք, որ ձև և իմաստ պիտի տանք այս նոր կյանքին, լինի դա անհատական, ընտանեկան կամ համայնքային, մեր իսկ հավաքական ճիգերով: Իջնենք մեր հոգիների խորքը և վստահ լինենք, թե այնտեղ Հիսուսն է մեր հավատքի հիմքը, որի վրա պետք է հաստատված լինի մեր կյանքը: Պետք է վերընծայենք այդ կյանքը Աստծուն, ինչպես որ Սուրբ Պատարագի ընթացքում պատարագիչ քահանան է ասում իր աղոթքում. *«Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»*, այսինքն՝ *«Այն ինչ որ Քոնն է՝ Քեզ ենք մատուցում»:*

Այսօր ամեն մարդ իր սրտում ունի այս հարցը. *«Արդյոք կյանքը գերեզմանով վերջանո՞ւմ է, թե՝ շարունակվում է մահից հետո էլ»:*

Մի օր, երբ այս մասին ուզում են իմանայ Ֆրանսիացի մեծ մտածող և միաժամանակ հայտնի անհավատ Վոլտերի կարծիքը, նա պատասխանում է. *«Գիտեմ, որ գերեզմանը մի դուռ է, որտեղից մինչև այսօր միլիոններ են մտել և չնայած այնտեղից դուրս եկող չի եղել, սակայն կարծում եմ, որ այդ դռան ետևը դատարկ չի»:*

Իրապես, եթե մահը մարդու գոյության վերջն է և հավիտենականության գաղափարը առասպել է, այն ժամանակ Աստծու գոյությունը մնում է կասկածի տակ:

Բայց այս կասկածի անկասկածելի լինելն ու հավաստիացումը տալիս է Ինքը՝ Քրիստոս, հայտարարելով. Թե՝ *«Ես իսկ եմ հարություն և կյանք, ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի, և ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի»*

(Հովհ. 11:25-26):

Մահը երբեք Քրիստոսի համար վախճան չեղավ: Մահվան մեջ անգամ շարունակվեց Իր կյանքը:

Պատկերացրեք, թե մեզանից մեկը շաբաթը կամ ամիսը մի Կիրակի Եկեղեցի է գալիս, աղոթում է, մոմ վառում, գանձանակում իր համեստ գումարն է դնում, նույնիսկ հաղորդություն է ստանում, այս բոլորից հետո, կարծո՞ւմ եք, որ նա կարող է ասել *«Ես հավատացյալ եմ»:* Անշուշտ, ոչ, ինչո՞ւ, որովհետև քրիստոնյայի հավատքի հիմքն ու սկիզբը ամենօրյա աղոթքի մեջ է: Ուրեմն պարզապես Եկեղեցի գալով, չի նշանակում, թե մենք ամբողջովին մեր հավատքն ենք ցուցաբերում և կարող ենք ասել, թե մենք հավատացյալ ենք: Հավատացյալ լինել նշանակում է՝ հետևել մեր Տիրոջ օրինակին, այսինքն՝ օգնել կարիքավորին, խնամել հիվանդին, այցելել բանտարկյալներին, մխիթարել սգավորին և այլն և այլն, այսինքն՝ բարի և արդար գործեր կատարել:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց», «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Այո, «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Հիսուս Քրիստոսի մահը և ապա Հարությունը մեզ համար կյանք է: Սակայն ինչպե՞ս կարող է մեկի մահը կյանք տալ մի ուրիշին: Քսանմեկերորդ դարի կեսերից բժշկությունը այնքան է զարգացել, որ հնարավոր է դարձել մարդու մարմնի մասը օգտագործել մի ուրիշին կյանք պարգևելու համար: Ամեն մարդու կյանքը թանկ է ու անկրկնելի և չեմ կարծում, թե որևէ մեկը իր նմանի համար իրեն զոհաբերի, որպեսզի նրան կյանք կարողանա տալ: Եթե լինի, դա քրիստոնեավայել հերոսություն է:

Սակայն մարդը չի ստեղծված, որ ապրի մի քանի տարի, թեկուզ հարյուր և կամ հազար տարի, ինչպես կենդանիների պարագայում: Մարդը Աստծու կողմից ստեղծված է հավիտենական կյանքի համար: Եվ այդ հավիտենական կյանքը հնարավոր եղավ Հիսուս Քրիստոսի մահով ու Նրա հրաշափառ Հարությամբ:

Քանի ապրում ենք այս աշխարհում, ամեն ինչն էլ մեզ համար է՝ ուրախությունն էլ, ցավն էլ, հիվանդությունն էլ, դժբախտությունն էլ և նույնիսկ մահը, որը անխուսափելի է

անկախ սեռից, գույնից ու տարիքից: Բայց եթե հավատքով ու սիրով ապրենք մեր այս կյանքը և փառք տանք Աստծուն ու բարի և արդար գործեր կատարենք, վստահ եղեք, որ թեկուզև ֆիզիկապես մեռնենք, գերեզմանի փոսը մեզ համար վերջակետ չի լինելու, քանի որ Քրիստոս, Աստվածորդին Իր Հարությամբ պատռեց մահվան վարագույրը և մեզ Իրեն հետնորդներիս, մի նոր կյանք պարգևեց:

Իբրև քրիստոնյաներ հավատում ենք Քրիստոսի Հարությանը: Սակայն ես Հիսուսին հավատացող ամենամեծ հոգիները գտել եմ մանուկների սրտերում, որոնք այնքան կենսուրախ ու մաքուր հավատքով պատմում են Հիսուսի կյանքը, Նրա առակները, չարչարանքները, խաչելությունը, թաղումը և վերջապես հրաշափառ Հարությունը: Հիշում եմ տարիներ առաջ էր, երբ Սուրբ Զատկի տոնի առիթով հարց ու պատասխաններով սովորեցնում էի աշակերտներիս, իմ տված պարզ այս հարցմանը, թե՝ *«Ի՞նչ պատահեց Հիսուսի հետ»,* փոքրիկներից մեկը միայն մեկ բառով պատասխանեց. *«Զարթնեց, արթնացավ»:* Մանուկը այսպես էր հասկանում Հիսուսի Հարության իմաստը, որը իմ կարծիքով՝ ամենաճիշտ ճանապարհն էր:

ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ԱՂ.
«ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱԻ»

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր, քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի, օրհնեա ի ձայն ցնծութեան զաստուած քո սիովն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո, լուսաւորեա երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա ի ձայն ցնծութեան զաստուած քո սիովն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի ձայն ցնծութեան զաստուած քո սիովն:

Այսօր Անմահ և երկնավոր Փեսան մեռելներից հարություն առավ, քեզ ուրախ ավետիս, երկրավոր հարս՝ Եկեղեցի, ցնծության ձայնով օրհնիր Աստծուն, ո՛վ Սիոն:

Այսօր լույսից ծնված անմահ լույսը Լուսավորեց զավակներիդ. Լուսավորվիր Երուսաղեմ, որովհետև լույսդ՝ Քրիստոս, հարություն առավ, ցնծության ձայնով օրհնիր Աստծուն, ո՛վ Սիոն:

Այսօր անգիտության խավարը եռյակ լույսով հալածվեց և մեռելներից հարություն առած Քրիստոսը քեզ գի՛տության լույսը ծագեցրեց. ցնծության ձայնով օրհնիր Աստծուն, ո՛վ Սիոն:

Սուրբ Զատկի այս առավոտյան մեր սրտագին աղոթքը բարձրացնենք առ Աստված, որպեսզի անսասան ու շեն պահի Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու մեր Մայր Հայրենիքը: Ուրեմն լի անկեղծ հոգով և ջերմ սիրով ուրախությամբ բացականչենք՝

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»

«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամեն:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱՁԱՏԻԿ

ԹՈՎՄԱՍԻ ԹԵՐԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՐՈՎՀԵՏԵՎ ԴՈՒ ԻՆՁ ՏԵՍԱՐ, ՀԱՎԱՏԱՑԻՐ, ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՏԵՍԵԼ ԵՎ ՍԱԿԱՅՆ ԿՀԱՎԱՏԱՆ»

(ՀՈՎՀ. 20:29)

Հարուցյալ Հիսուսի խոսքն է սա, որն ուղղված էր թերահավատ Թովմաս Առաքյալին և նրա անձի միջից բոլոր ժամանակներում ապրած, ապրող և ապրելու կոչված սերունդներին:

Հովհաննես Ավետարանչի 20-րդ գլխի 24-29 համարներում կարող ենք կարդալ Թովմաս Առաքյալի թերահավատության մասին.

«Իսկ Թովմասը՝ տասներկուսից մեկը՝ Երկվորյակ կոչվածը նրանց հետ չէր, երբ Հիսուս եկավ: Մյուս աշակերտները նրան ասացին, թե՝ Տիրոջը տեսան: Եվ նա ասաց նրանց. «Եթե չտեսնեմ նրա ձեռքերի վրա մեխերի նշանը և իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա»:

Ութ օր հետո աշակերտները դարձյալ ներսում էին. և Թովմասը՝ նրանց հետ: Հիսուս եկավ փակ դռներով, կանգնեց մեջտեղը ու ասաց. «Խաղաղություն ձեզ»: Ապա Թովմասին ասաց. «Բեր քո մատները և դիր այստեղ ու տես իմ ձեռքերը, և բեր քո ձեռքը ու մտցրու իմ կողի մեջ. անհավատ մի եղիր, այլ՝ հավատացյալ»: Թովմասը պատասխան տվեց ու Նրան ասաց՝ «Տեր իմ և Աստված իմ»: Հիսուս նրան ասաց. «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր, երանի՜ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ. 20:24-29):

Քրիստոնեությունը նոր և արմատական հեղաշրջում բերեց անմահության գաղափարին: Նա անմահությունը դարձրեց պայծառ մի իրողություն, այն հաստատելով Հիսուսի Հարության դեպքի վրա: Քրիստոնեությունը եղավ և է այն միակ կրոնը, որ բոլոր դարերի մարդկանց միտքը զբաղեցնող Հոբ Երանելու դասական հարցմանը՝ *«Զի եթե իջնի մարդ գերեզման, չի ելնի այլևս, չի դառնա՝ իր տունը, իր տեղն էլ նրան չի*

ճանաչի» (Հոբ 7:9-10),- պատասխանում է դրականապես, հայտարարելով՝ *«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:*

Այսպիսով քրիստոնեությունը լուսավոր մի կյանքի արշալույսը բացեց մեղավոր և հուսահատ մարդկության առաջ, որն անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնի նման ասում է, թե՝ *«Անմահությունը ցրում է բոլոր ցավերս, սրբում արցունքներս և խորքից լսվող հավիտենական որոտի պես ականջիս հնչեցնում է այս ճշմարտությունը՝ «Դու պիտի ապրես հավիտյան»:*

19-րդ դարի նշանավոր անգլիացի մի քարոզիչ, հետևյալ ազդու և տպավորիչ պատմությամբ տալիս է Հիսուսի մեղքի ու մահվան վրա տարած հաղթանակի իսկական իմաստը.

«Նա պատմում է, թե մի օր շուկա գնացած ժամանակ, տեսնում է մի փոքրիկ տղայի, որի ձեռքում հնացած մի վանդակ ու նրա մեջը սովորական մի թռչուն կար: Երբ քարոզիչը տղային հարցնում է, թե՝ «Ի՞նչ պիտի անի թռչունին», նա անգթորեն պատասխանում է. «Մի քիչ խաղալուց հետո պիտի սպանեմ նրան»: Բարի քարոզիչը մտահոգված թռչունի վիճակով, թանկ գնով վերցնում է այն ու տղայի ներկայությամբ ազատ արձակում, իսկ վանդակը վերցնելով իր հետ տանում ու դնում է եկեղեցու խորանի վրա:

Հաջորդ օրը Զատիկ լինելով, հավատացյալները եկեղեցի գալով ու խորանի վրա տեսնելով ծոմված ճաղերով, դատարկ ու հին վանդակը՝ զարմանում են:

Քարոզի ժամանակ, բարի կրոնականը պատմում է տղայի ու թռչունի պատմությունը և ավելացնում, *«Ճիշտ նույն բանն էր, որ մեր Տերը Հիսուս արեց մեզ համար: Մեղք կոչվող ախտը մեզ առել էր վանդակի մեջ ու մենք թաթախվել էինք մահվան երկյուղից բռնված, բայց Հիսուս գալով հարցրեց մեղքին, թե նա ի՞նչ էր ցանկանում անել մեզ՝ մարդկանց:*

- Նախ իրենց պիտի սովորեցնեմ ատել իրար և երբ ձանձրանամ, պիտի սպանեմ նրանց:

- Հիսուսի հարցին, թե ի՞նչ է պահանջում նրանց ազատ արձակելու համար: Նա պատասխանում է.

- Սակայն ի՞նչ պետք ունես սրանց, մարդիկ Քեզ պիտի ատեն, թքեն Քո վրա, չարչարեն ու ապա խաչ հանեն: Բայց եթե

անպայման ուզում ես ազատել նրանց, սրանք պիտի արժեն ամբողջ արցունքներդ ու երակներիդ մեջ հոսող արյունը, մի խոսքով ամբողջ կյանքդ»: Ինչպես գիտենք, Հիսուս Իր երիտասարդ 33-ամյա կյանքը զոհեց մեր մեղքերի փրկության համար:

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը ասում է.

««Հնկեցեք և արթուն մնացեք, որ Հարության հույսը չհանգչի ձեր հոգիներից ներս: Հավիտենապես ապրելու ցանկությամբ է, որ մարդը գերազանցում է ինքն իրեն՝ դառնում շինարար, ստեղծագործող, արարիչ և անմահ: Առանց հավիտենապես ապրելու հույսի, մարդը կմեռնի մահից առաջ, սակայն այդ հույսով նա կապրի մահից էլ այն կողմ...»:

«Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր, երանի նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան»:

Ես վստահ եմ, որ այսօր ևս, քսանմեկ դարեր հետո էլ, հավատքի նույն փորձառությունն է ապրում յուրաքանչյուր քրիստոնյա: Ուրեմն, Քրիստոսի Հարությամբ ներշնչված, եկեք մեր միջից հանենք ու նետենք Թովմաս Առաքյալից ժառանգված թերահավատությունը և լցվենք անսահման հավատքով ու հույսով դեպի վաղվա պայծառ օրը և մեր երջանիկ ապագան: Թերահավատ են նրանք, որոնց մեջ ներկա չի Ինքը՝ Հիսուս Քրիստոս:

Երուսաղեմի միաբան երջանկահիշատակ Սիոն Արք. Մանուկյանն ասում է.

«Ի՞նչն է պատճառը այսօրվա խռովյալ կացութեան, պետությունները իրար դեմ են զինվում, իրար են խաբում, իրար ատում են, վասն ինչի՞: Չմոռանանք, որ մեծ մասն էլ քրիստոնյա պատվական անունն էլ են կրում իրենց վրա: Որովհետև եսասեր ու անհավատ են...: Եվ դեռ գանգատվում են, թե աշխարհը փոխվել է, Աստված չարերին չի պատժում, արդարներին չի պաշտպանում ու վարձատրում: Կարճատես մտածողություն, աշխարհը փոխվել է, բայց Աստված չի փոխվել, մենք փոխվել ենք, չարացել ենք, թերահավատ ենք, չասելու համար անհավատ ենք» (Սիոն Արք. Մանուկյան, «Ավետարանի Պատգամներ» Բ. Տպագրություն, Երուսաղեմ, 1965, էջ 143):

Սուրբ Հարության խորհրդով ոգևորված՝ Աստծու նկատմամբ ունեցած անսահման սիրով և հանուն Հիսուսի

Ավետարանի ճշմարտությունների, քրիստոնյաները շարունակում են իրենց պայքարը, որպեսզի վերահաստատեն արդարությունը մարդկանց միջև: Իր նշանավոր մի ճառում *«Ես մի երազ ունեմ»* Մարտին Լուտեր Քինկը խոսում է իրականացված մի երազի մասին ու ասում. *«Ես մի երազ ունեմ, որ մի օր Ջորջիայի կարմիր բլուրների վրա նույն եղբայրության սեղանի շուրջ հնարավորություն ունենան նստել և նախկին ստրուկները և նրանց նախկին տերերը»:*

Հիսուս մարդկային բանական կյանքի գերագույն վերամորոգիչն է:

Քրիստոնեության հիմնական այս գաղափարին է հատկացված Նոր Կիրակին: Եվ օրվա շարականը, որը Ներսես Լամբրոնացու քերթողական բարձր ոճով գրված գրչի արդյունքն է, հայտարարում է մարդկային ազգի նորոգությունը մեղքի ու մահվան հնությունից ու հռչակում այս Կիրակին իբրև նավակատիքը, այսինքն՝ սկիզբը մեր փրկության:

Որպես հայ քրիստոնյա ի՞նչ իմաստ ունի մեզ տոնել Սուրբ Զատիկը, երբ մի նոր փոփոխություն չպիտի լինի մեր կյանքում: Զգույշ լինենք և չտոնենք այն պարզապես նշած լինելու համար, ընդհակառակը, մեր խորհրդածության նյութ դարձնելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը, բարեփոխենք մեր կյանքն ու ապրելակերպը և ազնվացնենք մեր զգացումները:

Քրիստոսի Հարությունը իրապես տոնած կլինենք և ճշմարտապես հավատացած Նրան, եթե մենք էլ ներքնապես հարություն առնենք: Այլ խոսքով, երբ մենք կարողանանք մեռցնել մեր անձնասիրությունը, ատելությունն ու հպարտությունը, այն ժամանակ մենք ևս հաղթած կլինենք աշխարհին ու մասնակից կդառնանք մեր Տիրոջ Հարության. *«Եթե նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաև նրա հարության նմանությամբ» (Հռոմ 6:5):*

Մեր ժողովրդի կյանքում տեղ է գտել *«Թուխմաս լինելու»* մասին խոսելաձևը: Վստահություն փնտրող մարդիկ, մանրազնին կերպով հարցերը քննելուց հետո, դարձյալ թերահավատությամբ են մոտենում ասվածներին: Այսպիսի մարդիկ

ամեն ասածը կասկածի տակ են առնում ու չեն հավատում մինչև անձամբ չստուգեն: Ժողովուրդը այդպիսիներին դիմում է ասելով. *«Ինչ է, Թովմա՞ս եղար»:*

Տարիքով մարդիկ պնդում են, որ հավատքի մասին եղածը չպետք է մանրամասն քննել, այլ պետք է ուղղակի հավատալ: Ներկա աշխարհի գիտական զարգացումն ու հաջողությունները երիտասարդներին մղում են ամեն ինչ ստուգելու, նույնիսկ դարերով ճանաչված առարկաները: Օրինակի համար սրբատուփի մեջ գտնվող սրբի մասունքի իրական լինելը հարցականի տակ դնելուց հետո, նրանք մտածում են, *«արդյոք նշյալ սրբի մասունքո՞ւն է դա, թե՝ ոչ»* և խոսքը գործի վերածելով հնագիտական զանազան տեսակի գործիքներով փորձում են ճշտել ճայռնի հնությունը: Ավելի առաջ գնալով, ուզում են հարցականի տակ դնել Հիսուսի Մարդեղության Խորհուրդը, Սուրբ Հոգու միջոցով Սուրբ Կույսի Հղացումը, Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միասնական զորությունը, տիեզերքի ստեղծագործությունը ու վերջապես Աստծու գոյությունը:

Մեր ժողովրդի արտահայտությունը ինչքա՜ն է հարմարվում նրանց ասելով. *«Ինչ է, Թովմա՞ս եղար»:* Իսկ Հիսուսի հանդիմանությունը որքա՜ն դաստիարակիչ է բոլորիս համար. *«Անհավատ մի լինի, այլ՝ հավատացյալ»:* Թովմասի անհավատությանը տրված պատասխանը, ինքնին մի հրահանգ է բոլոր ժամանակներում ապրող այն մարդկանց, որոնք Հիսուսի Հարության կամ հավիտենական ճշմարտությունների նկատմամբ քննական մոտեցում են ցուցաբերում. *«Երանի՜ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան»:*

Շնորհք Պատրիարք Գալուստյանը շեշտելով հանդերձ՝ Թովմաս Առաքյալի թերահավատությունը, դրական գծեր է նկատում նրա կեցվածքի մեջ.

«Թովմաս երևութապես անհավատ մի անձ լինելով հանդերձ՝ խորքում քաջ և առաքինի մի առաքյալ էր: Մենք երիցս պարտական ենք իրեն: Ինչպես հիշեցինք՝ նախ նրա համար, որ մեզ անձնուրացության սքանչելի մի օրինակ տվեց հանձն առնելով և հրավիրելով իր ընկերներին մեռնել Հիսուսի կողմից հայտնված գերագույն ու գեղեցկագույն մի ճշմարտության համար, երբ Նա

պատասխանելով իր հարցմանը հաստատեց, որ Ինքն է ճանապարհը, ճշմարտությունը և Կյանքը: Ու վերջապես իբրև երրորդ պարգև մեզ ապահովեց Քրիստոսի վերջին ու մեծագույն երանին. «Երանի առանց տեսնելու հավատացողներին» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Տաղավար Տոներ», Երուսաղեմ, 1976, էջ 209):

Լրացնելու համար Շնորհք Պատրիարքի հրաշալի բացատրությունները, ասենք, որ Թովմաս Առաքյալը առաջինը եղավ, որ Քրիստոսին Աստված կոչեց, ասելով. *«Տեր իմ է Աստված իմ»,* մի բան, որ չի վրիպել Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի ուշադրությունից *««Նայեաց սիրով»* շարականում. *«Անստվեր լույս, էությանդ առաջ կանգնած պաղատում ենք Քեզ, որ հարության երեկոյի դռները փակված՝ տասնմեկին երևացիր. Թովմասի հետ Քեզ ենք գոչում, Քեզ Տեր է Աստված ենք դավանում, այս երեկո մեզ մոտ էլ իջիր ու ողջույնդ տուր մեր հոգիներին»:*

Լավ պիտի լիներ, եթե ձեզանից ամեն մեկը իր հոգու ու սրտի մեջ ունենար Հիսուսի Հարության լույսից մի ճառագայթ՝ հաղթելու համար կյանքի բոլոր դժվարություններն ու նեղությունները: Իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի հավատարիմ զավակներ, մեր պարտականությունը կատարած հայ մարդու ներքին հպարտությամբ Հիսուսի նման բացականչենք՝ *«Մենք հաղթեցինք աշխարհին»:*

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԴԿ.

«ՆՈՐՈԳԵԱԼ ԿՂՋԻՔ»

Նորոգեալ կղզիք առ աստուած եկեղեցիք հեթանոսաց, ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի տուք զփառս աստուծոյ. եւ պատմեցէք զքաջութիւն յարուցելոյն ի մեռելոց:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի աստուծոյ, զարդարեա ի ներքոյ ի հանդերձս յոսկեհուռն պսակեալ. քանզի ահա գայ առ քեզ քրիստոս փառաց թագաւորն:

Ռախացեալ որդիք սիոնի ի թագաւորն քրիստոս, տօնեցէք ցնծութեամբ զնաւակատիս հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ. եւ ընդ հրեշտակս օրհնեսցուք զքրիստոս փառաց թագաւորն:

Աստծու նորոգված կղզիներ, հեթանոս եկեղեցիներ, լեռների կատարներից բարձրաձայն փառք տվեք Աստծուն և պատմեք մեռելներից Հարուցյալի քաջությունը:

Աստծու Երկնավոր փեսայի հարսնացյալ եկեղեցի, զարդարվիր ներքնապես պճնված ոսկեհուռ հանդերձներով, որովհետև ահա Քեզ մոտ է գայիս փառքի Թագավորը՝ Քրիստոս:

Քրիստոս Թագավորով ուրախացած Սիոնի որդիներ, ցնծությամբ տոնեցեք հնությունից նորոգված մեր հոգիների նավակատիքը և հրեշտակների հետ օրհնենք Քրիստոսին՝ Փառքի Թագավորին:

Նոր Կիրակիի այս օրը կրկին անգամ ցնծությամբ և ուրախությամբ բացականչենք՝ *«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»* և ստանանք հաղթական պատասխանը՝ *«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:* Ամեն:

ԿԱՆԱՉ ԿԱՄ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ

Ավետարանում կարդում ենք, թե Առաքյալները Հիսուսի Համբարձումից հետո հավաքվում էին Վերնատան մեջ, Սիոն լերան բարձունքին և հիշում իրենց Մեծ Վարդապետի Վերջին Ընթրիքի ժամանակ տված պատգամները: Օրհնում էին հացն ու գինին, միասին աղոթում ու ճաշում էին: Մեկը բոլորի համար էր, բոլորը՝ մեկի: Այսպիսի հավաքույթների առաջին աղոթավայրն է, որ կոչվեց Աշխարհամատուռ, այսինքն՝ աշխարհում առաջին Աղոթքի Մատուռը:

Մատուռ Հունարեն բառ է *(մարտիռիոն),* որ նշանակում է *Մարտիրոսների վայր:*

Այսօրվա տոնը կոչվում է նաև *Կանաչ Կիրակի:* Դրժբախտաբար *կանաչ* բառի ճշգրիտ իմաստը մեզ ծանոթ չէ: Ոմանք նոր մի իմաստ են ուզում տեսնել նրա մեջ՝ նմանեցնելով բնության ն առաջին Եկեղեցու միջն: Նա բնության մեջ ծաղկող, աճող կյանքն է, որը կենդանություն ու թարմություն է տալիս աշխարհին ն մարդկության: Աշխարհամատուռն էլ որպես Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը աճեց, բազմացավ ն դարձավ աշխարհում տարածված առաջին Եկեղեցին:

Տաք երկրներում, ուր քիչ ձմեռ կա կամ ընդհանրապես չկա, ձյուն չի գալիս, այնտեղ ապրող ժողովուրդները շատ չեն զգում գարնան հրաշալիքը, տեսակ-տեսակ ծաղիկների բացվելը ն կանաչության արթնացումը: Հիշում եմ, Հայաստանի ձյունոտ ցուրտ ձմեռվանից հետո, երբ ձյունը սկսում էր հալվել, առաջինը ձնծաղիկն էր, որ դուրս էր գալիս, ապա ծառերը սկսում էին ծաղկել ու շլացնում էին իրենց գեղեցկությամբ: Մենք փոքրիկներս երազում էինք այդ օրվան, որպեսզի վազվզենք, կանաչների վրա թավալգլոր տանք ու ծաղիկներ հավաքենք:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին յուրահատուկ է այն իմաստով, որ Զատկին հաջորդող Կիրակիներին տվել է շատ որոշիչ անվանումներ՝ *Նոր Կիրակի, Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի:* Դրա համար էլ մեր Հայրերը երբեմն այս Կիրակիները կոչել են գունագեղ Կիրակիներ, որովհետև

գույները իրենց խորհուրդներն ունեն, սպիտակը, որ նաև կոչվում է Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ՝ խորհրդանիշն է նորի, Կանաչը՝ վերազարթնումի և Կարմիրը՝ պայքարի:

Հայտնի չէ, թե երբվանի՞ց, ի՞նչ ճանապարհով կամ ի՞նչ նկատառումով են այդ գունավոր անունները մտել մեր եկեղեցական պատմության մեջ:

Շնորհք Պատրիարք Գալուստյանը ասում է.

«Որքան էլ այս երկու անվանակոչումները ժողովրդային ծագում ունենան և ըստ երևույթին ծիսական նշանակությունից զուրկ մնացած լինեն, սակայն բոլորովին էլ դատարկ չեն կրոնական երանգից: Ասացինք, որ նրանք գարնան հետ կապ ունեն ու գարունը զուրկ չի կրոնական իմաստից: Գարունը կյանքի վերակենդանության շրջանն է: Գարունը գեղեցկության և քաղցրության մի ցուցադրություն է, որը անտարբեր չի կարող թողնել, այնքան, ինչքան մարդու մարմինն ու աչքը, նույնքան էլ նրա միտքն ու հոգեկան աշխարհը: Ինչքա՜ն հաճելի է զգալ մեջքին կամ կրծքին արեգակի ջերմությունը, նույնքան հոգեպարար է ման գալ վերազարթնող բնության մեջ և զգալ հոգեկան բավարարությունն ու խաղաղությունը, որը թափանցում է մեր մտքի և սրտի աշխարհից ներս, թռչունների զվարթ երգերի ու ծաղիկների հիասքանչ ժպիտների հետ:... Բնությունը հոգերուժ է»:

«Երբեք հեթանոսություն չի բնության երևույթներով հոգեպես տպավորվելը, տարվելը և հմայվելը: Երբեք հեթանոսություն չի ի տես գարնան քաղցր և հոգին գրավող երևույթների բացվելը, հոգեպես հանգստանալը, երգելը, ցատկելը ու պար բռնելը: Հեթանոսություն է, սակայն այս երևույթների առաջ կանգնելը և նրանցից դեպի վեր չբարձրանալը.»:

«...Այս օրերին բնության գրեթե ամեն երևույթ կյանք է գոռում ու կյանք երգում:... Մահը կյանքի երևութական ու ժամանակավոր պարտությունն է:... Հին տերևները թափվում են, նորերը՝ ծաղկում: Կյանքի անհատ երևույթները՝ ծառ, թուփ, տնկի կարող են չորանալ և հող դառնալ, բայց նրանց թողած հունը, սերմն ու արմատը շարունակում են մեռածների գոյությունը, հաճախ աճած ու ավելի բազմապատկված» (Շնորհք Պատրիարք Գայուստյան, «Գունագեղ Կիրակիներ», Ստամբուլ 1976, էջ 16-17):

Ուրեմն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Հիսուսի Հարությունից հետո երրորդ Կիրակին հիշատակելով Աշխարհամատրան տոնը, մեզ ուզում է հիշեցնել Եկեղեցու Նավակատիքը, այսինքն՝ սկիզբը: Իրապես էլ մի Եկեղեցու հիմնական կարևորագույն հատկանիշը ոչ թե շենքն է, այլ այն, որ նրա մեջ հայտնվի Ինքը՝ Քրիստոս:

Այն Եկեղեցում, ուր կա մեր Տիրոջ զգալի ներկայությունը, Նրա հայտնությունը, Հարությունն ու հավիտենականության ոգին, նա է կենդանի Եկեղեցին և Վերնատան շարունակությունը:

1892թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկն իր անդրանիկ կոնդակում գեղեցիկ պատգամները է տալիս մեր ժողովրդին. *«Դուք ասում է- ինձ նշանակեցիք հովիվ այս հոտի վրա: Հիմա իմ պարտականությունն է գնալ և պարտքս կատարել»:* Ամեն մեկս էլ հավատքով մեր պարտքը ունենք կատարելիք Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու հանդեպ: Եվ Հայրիկը շարունակելով ասում է. *«Պարտավոր եք հավատարիմ մնալ այն հաստատության, որի հիմքերը Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները դրեցին: Հավատարիմ մնալ այդ հիմքերին, որ մեզ ավանդվել է մեր Հայրապետների կողմից, չխախտել, չխանգարել մեր ավանդությունները, որովհետև այդ ավանդություններն են, որ յուրաքանչյուր ժողովրդի և յուրաքանչյուր Եկեղեցու տալիս են իր նկարագիրը»:*

Եվ վերջին խրատը, որ տալիս է Հայրիկը սա է. *«Օգնական եղեք ինձ»: Խոսքը ձեր մասին է, սիրելի ժողովուրդ: Դուք, որպես Ծուխի անդամներ, պարտավոր էք զորավիգ լինել մեր Եկեղեցուն, ինչպես Սիմոն Կյուրենացին: Երբ որ Հիսուս խաչը տանում էր Գողգոթա, Սիմոն Կյուրենացի անունով մի մարդ մոտենում է և Հիսուսի փոխարեն խաչը վերցնում ու բարձրացնում է Գողգոթա»:* Հայրիկը շարունակում է իր խոսքը. *«Որպեսզի ես կարողանամ հայ ժողովրդի խաչը բարձրացնել, առաջ տանել, դուք էլ Սիմոն Կյուրենացու պես պետք է օգնեք ինձ»:*

Շատ կարևոր և հիմնավոր մի պատգամ է այս: Ամեն մեկս անդամ ենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և կարիքն ունենք վերանորոգումի ու վերազարթնումի: Ու դրա

համար ոչ միայն պետք է հավատանք, ոչ միայն ասենք, թե քրիստոնյա ենք, այլ մեր կենդանի գործով ու օրինակով պահապան և պաշտպան կանգնենք դրան: Կարդացեք մեր Եկեղեցու պատմությունը և կտեսնեք, թե դարեր շարունակ մինչև այսօր նա ինչպիսի սիրով, ջերմությամբ ու հավատքով է պաշտպանել իր զավակներին օտար հարձակումներից ու մահ սփռող Լենկթեմուրներից, Չինկիզխաններից ու Շահ Աբբասներից: Մոտեցեք ու գրկախառնվեցեք նրա հետ և կզգաք թե դուք ինչքան ուժեղ եք: Ձեզանից ամեն մեկը թող իր հոգեկան աշխարհը դարձնի մեկ-մեկ Եկեղեցի, որպեսզի ոչ մի օտար ազդեցություն և ոչ մի օտար աղանդ չկարողանա կործանել մեր տան միասնությունն ու խաղաղությունը:

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ ԳԶ.
«ԱՅՍՕՐ ՀՐԵՇՏԱԿԱՑ»

Այսօր հրեշտակաց բազմութիւնքն տօնակից լինին ընդ մեզ, քանզի երկնաւոր թագաւորն եկաւորի ի սուրբ եկեղեցի:

Խնդա եւ զուարճացիր հարսնացեալդ աստուծոյ եկեղեցի. քանզի զքեզ տէրն տերանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակիլ ի քեզ:

Լուսաւորեա լուսաւորեա կաթուղիկէ եկեղեցի. քանզի ի քեզ շող աստուածեղէն ի հօրէ լուսոյ ծագեաց. եւ լուսաւորեաց զմանկունս քո:

Այսօր հրեշտակաց բազմությունը տոնակից է լինում մեզ. քանզի երկնավոր թագավորդ ահա գալիս է Սուրբ Եկեղեցի:

Հրճվիր, զվարճացիր, Աստծու Հարս Եկեղեցի, որովհետև քեզ ընտրեց Տերերի Տերը և հաճույքով քո մեջ բնակվեց:

Լուսավորվիր, լուսավորվիր Ընդհանրական Եկեղեցի, որովհետև Հորից աստվածային լույսի շող ծագեց քո վրա և լուսավորեց զավակներիդ: Ամեն:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Կարմիր Կիրակի: Կարմիր անունը անբացատրելի է: Հավանաբար սա էլ բնության հետ կապ ունեցող մի բան է, քանի որ Կանաչ և Կարմիր Կիրակիներին Եկեղեցում սովորություն էր այդ գույները գործածել, ինչպես՝ *Եկեղեցու վարագույրը, պատարագիչ քահանայի, դպիրների ու սարկավագների զգեստները, Սուրբ Մեղանի սփռոցները* և զանազան այլ իրեր:

Անցյալ դարի Կաթողիկոսներից երանաշնորհ Բաբգեն Կյուլեսերյանը իր «*Քրիստոնեական.*» գրքում, Կարմիր Կիրակիին նվիրված մի գեղեցիկ երգ ունի, ուր նա նմանություն է տեսնում Կարմիրի և Հիսուսի թափած արյան միջև.

«Թող կարմիր կոչվի այս նազելի օրը, որովհետև Տերը երևում է ինչպես Զատկի կիրակի օրը: Եվ սա ինչո՞ւ է կոչվում կարմիր կիրակի, որովհետև նրան պատշաճ է, քանի որ արյունով ծաղկեց» (Քրիստոնեական, 1932, Անթիլիաս, էջ 44):

Քրիստոսի արյունով ծաղկած Եկեղեցի և նրա արյունով հաստատված Եկեղեցի:

«Տարօրինակ է, որ ժողովրդական լեզվում կանաչ-կարմիր նշանակում է նաև Ծիածան: Սահակ վարդապետ Անատունին իր «Հայոց բառ ու բան» բառարանում գրում է. Աղեղնակ, Անանակ, Անդրնակ Կանաչ ու Կարմիր, Աղեղն, ծիածան. Ծիրանի գոտին՝ որ ամպ ու անձրեւ օրերում կամարաձև երևում է երկնքի երեսին: Ծիածանը, որին կոչում են կանաչ ու կարմիր, Աստծու գոտին է» (Արտակ Արք. Մանուկյան, «Հայ Եկեղեցու տոները», էջ 154):

Մայր Աթոռի միաբան Հոգշ. Տ. Զատիկ Վրդ. Ավետիքյանն այս մասին ասում է.

«Կարմիր, որ գույնն է արյան, խորհրդանիշը կյանքի, կյանքի համար պայքարի ու հաղթանակի: Հաղթանակ քրիստոնեական ոգու, բայց հատկապես հաղթանակ քրիստոնեական ըմբռնումի: Այդ հաղթանակին ժառանգորդ լինելու համար մեր Եկեղեցու Հայրերի կողմից մեզ մատուցվող սուրբ-գրական ընթերցումները լավագույն զենք կարող են հանդիսանալ, զենք, որ ներշնչում է, հոգևոր սնունդ է մատակարարում ու այլ կյանքի կոչում» (Զատիկ վարդապետ Ավետիքյան, Ս. Էջմիածին, 1 Ապրիլի 2002):

«Հին ժամանակներում, պսակի արարողության ընթացքում կանաչ-կարմիր ժապավեններ էին կապում փեսայի և հարսի վրա, իբրև խորհրդանիշ պտղաբերության: Կանաչ-կարմիր կապել նշանակում էր իրար հետ պսակել: Կարմիր կանչել՝ հարսանիքի ժամանակ փեսայի համար դրամ հավաքել: Կարմրականչ անել՝ հյուրասիրության հրավեր կատարել: Սա մեր այսօրվա խնամականչն է, որը, ինչպես գիտեք տեղի էր ունենում փեսայի տանը՝ հարսի ծնողների և հարազատների համար (Արտակ Արք. Մանուկյան, ««Հայ Եկեղեցու տոները», էջ 154):

Կարմիր գույնը ընդհանրապես պայքարի նշանն է: Ցուլը մարդու բռնած կարմիր կտորը տեսնելիս վազում է նրա վրա՝ այն պատռելու համար: Քրիստոնեությունը երբ ուզեց իր Հարուցյալ Փրկչին պատկերով ներկայացնել, զգեստավորեց նրան կարմիրով:

Շնորհք Պատրիարք Գալուստյանը ասում է.-

«Ծանոթ է ամենքիս «կյանքը պայքար է» սովորական խոսքը, պայքար՝ ոչ միայն ի խնդիր ամենօրյա հացի, այլ նաև պայքար՝ անգութ ընկերային մրցակցությանց մեջ իր տեղը, դիրքը և հաւասարակշռությունը պահելու համար: Մեր ամենօրյա ապրած ֆիզիքական կյանքի ամեն մի բոպեն մշտական պայքար է կյանքի քանդիչ աժերի դեմ: Մեր միլիոնավոր կարմիր ու ճերմակ գնդիկները մեկական զինվոր են, որոնք մշտապես պայքարում են բնաջնջելու համար մեր ֆիզիքական կյանքի բոլոր միկրոբները, կամ ընկնելու՝ կռվի պատնեշի վրա»:

«Նույնն է իրողությունը ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ համար:... Քրիստոնեական մկրտությամբ, ամեն մեկ հավատացյալ օժտվում է հոգևոր կենսական նոր մի սկզբունքով... Դրոշմի խորհուրդը սահմանված է տալու հավատացյալին այն անհրաժեշտ զորությունը և կարողությունը, որով նա կարողանա «զամենայն նետս մուխս չարին շիջուցանել», այսինքն՝ պայքարել այն այլասերիչ ու ապականիչ չար ուժերի դեմ, որոնք սպառնում են մեզ տրված հոգևոր կյանքը փչացնել, թուլացնել կամ սպանել» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, «Գունագեղ Կիրակիներ», Ստամբուլ, 1976, էջ 19-20):

Քրիստոնեական այս կյանքի պայքարը, այնքան էլ

պարզ ու հեշտ պայքար չէ, ինչպես թվում է առաջին հայացքից, այլ կարող եմ ասել, մահու և կենաց մի կռիվ է: Քրիստոս այդ կյանքը մատնանշեց իբրև *«նեղ դուռ և անձուկ ճանապարհ, որը սակայն դեպի ԿՅԱՆՔ է առաջնորդում»:* Իսկ *լայն դուռը»,* այսինքն պայքարից խուսափելը և բնազդի ու մոլության հեշտ և հարթ ճանապարհը ընտրելը՝ կուրորեն առաջնորդում է դեպի կորուստ: Այս նոր կյանքին տիրանալու ու այն պահելու համար մեծ ուժի կարիք կա: Քրիստոնյա լինելու համար անհրաժեշտ են եռանդ և մարտական ազնիվ ոգի, այն սովորական և պայքարելու տրամադրությունից զուրկ մարդու գործը չէ: Հաճախ Քրիստոս և քրիստոնյան պատկերացվում են իբրև անվնաս, խաղաղասեր և այսպես կոչված *«բարի»* մարդիկ, իրապես այդպես է: Քրիստոնյան լեռներից հոսող քրքջացող ջուրը չէ, այլ՝ այն խոր, խաղաղ և խոշոր գետն է, որի շարժումն անգամ դժվար է նկատել և, որը, սակայն հսկայական ուժ է պարունակում իր մեջ: Իրապես էլ քրիստոնյան փոթորիկ կամ բուք ու բորան չէ, բայց հանդարտ ու առատահոս անձրև է, որը ոչ միայն կյանք է տալիս այգիներին և անդաստաններին, այլ նաև ստեղծում է մեծ գետերի ակունքները:

Քրիստոնեական կյանքը ունենալու և պահելու համար միայն ցանկությունը շատ քիչ է, կենդանի ու ապրող հավատք է պետք: Թեթև փորձերով հնարավոր չէ տիրանալ նրան, բուռն ներքին պայքար է պետք դուրս թափելու համար հին կյանքի կուտակված մոլությունները, այլասերիչ ու ապականիչ երևույթներն ու ախորժակները՝ տեղ բացելու նոր կյանքին, որ Քրիստոսով ապահովված է մեզ համար: Ոչ մեկը հեշտ ճանապարհով չի շահել քրիստոնեական այս պայքարը: Ուժեղները միայն կարող են նրան տիրանալ: Աշխարհում, երբեմն թույլ կարծվող մարդկանց մեջ ուժի մեծ և առատ աղբյուրներ կան ու հակառակը՝ ուժեղ նկատված մարդկանց մոտ՝ քայքայիչ թուլություն: Երբեմն զարմանալիորեն ուսում չունեցող, աղքատ և պարզ սիրտ ունեցող մարդկանց մոտ ինչ սքանչելի ազնվականություն կա ու հակառակը՝ ինչ տխուր ամայություն՝ ազնվական, մեծահա-

րուստ և իշխանավոր մարդկանց դատարկ ու կարծր սրտերում:

Պողոս Առաքյալը այս բոլորին ակնարկելով գրում էր Կորնթոսի քրիստոնյաներին. *«Եղբայրներ, ձեր իսկ կոչումին նայեցեք, ըստ մարմնի՝ ոչ շատ իմաստուններ, ոչ շատ հզորներ և ոչ շատ ազնվականներ կանչվեցին. բայց Աստված ընտրեց այս աշխարհի հիմարներին, որպեսզի ամաչեցնի իմաստուններին. և Աստված ընտրեց այս աշխարհի տկարներին, որպեսզի ամաչեցնի հզորներին, և Աստված աշխարհի ոչ-տոհմիկներին, արհամարհվածներին և ոչինչներին ընտրեց, որպեսզի իրենք իրենց մի բան կարծողներին ոչնչի վերածի» (Ա. Կորնթ. 1:26-22):*

Հեթանոսաց Առաքյալը մի ուրիշ տեղ քրիստոնյային պատկերացնում է իբրև ամբողջովին զինված մի մարտիկ: *«Եվ, վերջապես, զորացեք Տիրոջով և նրա զորության կարողությամբ, և Աստծու սպառազինությունը հագեք, որպեսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարքներին... Ուստի առեք Աստծու սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին... Եվ առեք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը» (Եփես. 6:10-19):*

Իր կյանքի վերջում մեծ Առաքյալը ասում է հոգու ամբողջ խաղաղությամբ. *«Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը: Եվ հիմա ինձ է սպասում արդարության պսակը, որը, որպես հատուցում, ինձ պիտի տա Տերը՝ արդար Դատավորը, այն օրը, և ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր նրանց, որ սիրեցին նրա հայտնվելը» (Բ. Տիմ 4:7):*

Ուրեմն Կարմիր Կիրակին հիշեցնում է մեզ Քրիստոսի Հարությամբ ապահովված մեր կյանքի կարևորագույն երեսը, թե մեր քրիստոնեական կյանքը պայքար է վատ և տգեղ երևույթների դեմ, որոնք մարդուն նվաստացնում են ու ցեխին հավասարեցնում:

Կարմիր Կիրակին մեզ այցելում է Ապրիլին կամ Մայիսին, այսինքն տարվա այն եղանակին, երբ նոր վերազարթնած բնական կյանքը պայքարի է դուրս գալիս ցրտի, խստաշունչ հովի, եղյամի, որդի և այն բոլորի դեմ, որոնք սպառնում են արթնացող կյանքին: Կարող է պատահել, որ

նոր բացված, չհասած պտուղներն ու ծաղիկները սառեն վերահաս եղյամից ու դրանցից մի մասը թափվեն կարկուտից, սակայն ծառի և տունկի կյանքը շարունակում է իր գոյությունը՝ ապագայում պտղաբերելու հույսով: Կյանքը շարունակում է իր ընթացքը և հաղթանակը, որովհետև արևը և եղանակը, որոնք օր ըստ օրե ավելի են տաքանում՝ ի նպաստ նրանց են:

Կարմիր Կիրակին քրիստոնեական քաջության հիշեցման օրն է: Քաջությունը հիմնական կետն է քրիստոնեական առաքինությունների մեջ, որը *«Կարմիր Վարդան»-ի* նկարագրի ամենահատկանշական գիծն էր: Վա՜յ նրան, ով դատարկված է այդ առաքինություններից: Մեր բարոյական և ֆիզիկական գոյությունը պայմանավորված է ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻԻ խորհրդով - քաջությամբ և ազնվական պայքարով ընդդեմ աշխարհի այլասերիչ սովորությունների:

ՇԱՐԱԿԱՆ ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԳԿ.
«ԶԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԶԳԵՐԵԶՄԱՆԱՒՆ»

Զաստուածային զգերեզմանաւն բոլորեալ դասք հրեշտակաց, տեսանէին զտէրն յարուցեալ ի գերեզմանէն:

Աստուածասէր կանայքն եկին ի գերեզման փրկչի անոյշ իւղօք եւ խնկօք, յօծանել զմարմինն տէրունական:

Լուսապայծառ հրեշտակն նստէր ի վերայ վիմին, աւետարանէր կանանցն, յարեաւ փրկիչն տիեզերաց:

Հրեշտակների դասերը աստվածային գերեզմանի շուրջը հավաքված, տեսնում էին Տիրոջը՝ գերեզմանից հարություն առած:

Աստվածասեր կանայք, Փրկչի գերեզմանին եկան անուշ յուղերով և խունկերով՝ օծելու Տերունական մարմինը:

Վեմի վրա նստած լուսապայծառ հրեշտակը կանանց ավետում էր,- Տիեզերքի Փրկիչը Հարություն առավ:

Սիրո և Խաղաղության Արեգակը՝ Հիսուս Քրիստոս, թող միշտ ներկայություն լինի ձեր սրտերում և ընտանիքներից ներս: Ամեն:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

«ԱՅԺՄ, ՈՎ ՏԵՐ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԿԻՐ
ՔՈ ԾԱՌԱՅԻՆ՝ ԸՍՏ ՔՈ ԽՈՍՔԻ. ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՉՔԵՐՍ
ՏԵՍԱՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ, ՈՐ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՐ
ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋ»
(ՂՈՒԿ. 2:29-31)

Տյառնընդառաջը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարևոր տոներից մեկն է, որ բաղկացած է *Տյառն=Տիրոջ, Ընդառաջ= առաջը գնալ՝ դիմավորել* բառերից: Խոսքը Հիսուս Մանուկի տաճար Ընծայման մասին է, որը կատարվեց Նրա Ծնունդից քառասուն օր հետո:

Ուզում եմ մեջբերել Ղուկաս Ավետարանչի խոսքերը այս մասին.

«Երբոր նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսեսի օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպէս գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»: Եվ Տիրոջ օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տա մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ:

Արդ, Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար, և այդ մարդը արդար ու աստվածավախ էր ու ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը, և Սուրբ Հոգին էր նրա մեջ: Եվ Սուրբ Հոգուց հրամայված էր իրեն մահ չտեսնել մինչև որ տեսներ Տիրոջ Օծյային: Նա Հոգով առաջնորդված՝ եկավ տաճարը, և երբ ծնողները բերին Հիսուս մանկանը՝ նրա վրա կատարելու ինչ որ օրենքի սովորության համաձայն էր, Սիմեոնը նրան իր գիրկն առավ, օրհնեց Աստծուն և ասաց. «Այժմ, ով Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի, որովհետև աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար» (Ղուկաս 2:22:33):

Համաձայն ավանդության Սիմեոն Ծերունին այն յոթանասուներկու թարգմանիչներից մեկն էր, որոնք Հին Կտակարանը Հունարենից թարգմանում էին Երբայերենի: Թարգ-

մանությունը կատարվել է Հիսուսի Ծնունդից շուրջ 230 տարի առաջ: Թարգմանության ժամանակ, երբ նա տեսնում է Մարգարեի վկայությունը, թե՝ *«Պիտի գա Օծյալ Փրկիչը, փրկելու Իսրայելի ժողովրդին»,* անմիջապես ջնջում է այդ նախադասությունը: Այդ պահին նրա վրա քուն է գալիս և, երբ նա արթնանում է, տեսնում է նույն գրությունը, որը կարծես թե ջնջված չէր եղել: Իր մտքում ասում է. *««Երանի նրան, ով կտեսնի Օծյալ Փրկչին»:* Ինչպես գիտեք Աստված կարդում է մարդկանց մտքերը: Տերը Սիմեոն Ծերունուն տալիս է այնքան կյանք, որ նա գրկի և բարի գալուստ մաղթի Օծյալ Փրկչին:

Ավետարանում ասվում էր, թե՝ *«Երբոր նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջ ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»:* Այս սովորության համաձայն, Հովսեփը և Մարիամը Հիսուս Մանուկին Տաճար տարան քահանայի կողմից օրհնություն ստանալու համար: Երբ նրանք մոտեցան Տաճարին, Արևելյան Դուռը, որ վաղուց ի վեր փակ էր մնացել, դղրդյունով բացվեց և մարդիկ վախեցած դուրս թափվեցին իրենց տներից ու քանի որ մութ էր, ոմանք կանթեղներ, իսկ ոմանք էլ մոմեր վերցնելով, գնացին տեսնելու համար, թե ի՞նչ կատարվեց:

Ավետարանը շարունակում է ասելով, թե՝ Սիմեոն Ծերունին Սուրբ Հոգուց առաջնորդված Տաճար գնաց և դիմավորելով Մանուկ Հիսուսին, գրկեց Նրան և ասաց. *«Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային ըստ. քո խոսքի. որովհետև աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք Իսրայելի քո ժողովրդի համար»:*

Այսօր էլ մեր բոլոր Եկեղեցիներում, Հիսուս Մանուկի օրինակով, հայ հավատացյալ ծնողները քառասուն օրը լրացած՝ իրենց երեխաներին բերում են Եկեղեցի, որպեսզի Քահանան քառասունքից հանելու արարողություն կատարի նրա և մոր վրա, ի հիշատակ Հիսուսի քառասնօրյա Տաճար Ընծայման:

Հիսուս Մանուկի Տաճար Ընծայումը օրինակ պիտի հանդիսանա յուրաքանչյուր քրիստոնյա մարդու հոգևոր կյանքի նվիրման: Արդեն իսկ շարականի մեջ շատ գեղեցիկ կերպով ասվում է *««Սուրբ Կույսից ծնվածին ընդունենք մեր սրտերում հավատքով, ինչպես երբեմն Սիմեոն ծերունու գրկում էր»:* Այս է մեծագույն պատգամը, որը հասնում է հայ քրիստոնյա մարդու սրտին ու հոգուն և նրան ջերմորեն կապում հոգևոր կյանքի հետ:

Հայաստանի և Միջին Արևելքի մեջ Փետրվարի 13-ի երեկոյան, բոլոր Եկեղեցիներում, ժամերգությունից հետո տեղի էր ունենում անդաստան, այսինքն՝ օրհնվում էին Արևելքն ու Արևմուտքը, Հյուսիսն ու Հարավը, որից հետո Սարկավագը վառում էր Սուրբ Սեղանի մոմերը: Հավատացյալները Եկեղեցուց վառած մոմերը իրենց հետ տուն էին տանում ու հավատում, որ Աստծու լույսով են լցվում իրենց բնակարանները, սրտերն ու հոգիները:

Եկեղեցական արարողությունից հետո, ըստ հնավանդ սովորության, Եկեղեցու բակում կրակ էր վառվում: *«Ի՞նչն էր պատճառը, ինչո՞ւ էր կրակ վառվում, սա ի՞նչ կապ ուներ և ունի Մանուկ Հիսուսի Քառասնօրյա Տաճարին Ընծայման Տոնի հետ»:*

«Հրավառության (կրակ վառելու) մասին քրիստոնեական եկեղեցական որևէ օրենք և կանոն գոյություն չունի, ասում է երջանկահիշատակ Արտակ Արք. Մանուկյանը և շարունակում. *«Ընդհակառակը տոնացույցի մեջ կրակ վառելը և նրա շուրջը պտտվելը խոտելի է, դատապարտելի է որպես հեթանոսական շրջանից մնացած սովորություն» (Արտակ արք. Մանուկյան, «Հայ Եկեղեցու տոները, «Տյառնընդառաջ» անվան տակ, էջ 60):*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և մեր ժողովուրդը առաջին դարից իսկ ընդունել են Աստծու լույսը և ի գին ամեն զոհողության ամուր են պահել այն մինչև այսօր:

Այս օտար ափերում, մեծ դժվարությամբ մենք մեր երիտասարդներին բերում ենք Եկեղեցի և այս ձևով փորձում նրանց մեջ զորացնել հավատքն ու սերը դեպի մեր ազգային

գեղեցիկ սովորությունները: Ինչպես տեսաք Սիմեոն ծերունին իր գիրկն առավ Մանուկ Հիսուսին և փառք տվեց Աստծուն, այն ժամանակ, երբ ոչ մեկը չէր ճանաչում Նրան, իսկ մեր ժողովուրդը ահա երկու հաղար տարիներից ի վեր ճանաչել է Աստծուն և ոչ միայն ճանաչել է, այլև շատ անգամներ նահատակվել Նրա նկատմամբ ունեցած հավատքի համար: Այսօր առավել ևս պիտի գիտակցենք այս ճշմարտությունը և ընդունենք Աստծու լույսը մեր մեջ ու մեր բարի և արդար գործերով, առանց հուսահատվելու ու առանց ընկճվելու, իբրև հայ քրիստոնյաներ, հպարտությամբ արժևորենք մեր այս կյանքը:

Չհուսահատվելու լավագույն օրինակն է տալիս մեզ Երկրորդ Համաշխարհային պատերազմի գլխավոր դերակատարներից՝ Անգլիայի նշանավոր վարչապետ՝ Ուինսթըն Չրչիլը, որը հայտնի էր իր ազգայնաշունչ և մանավանդ երկարաշունչ ճառերով: Սակայն նա զարմանալիորեն խոսել է աշխարհի ամենակարճ ճառը իր ժողովրդին՝ *«Երբեք, երբեք, երբեք տեղի չտալ»:*

Սիմեոնն արդեն ծերացած էր և սպասումի բազմաթիվ անքուն գիշերներ էր անցկացրել արցունքով ու աղոթքով, թե Աստված ե՞րբ պիտի կատարեր Իր խոստումը, չմեռած տեսնելու Մեսիային՝ Իսրայելի Փրկչին: Հակառակ սպասումի այս դժվարին վիճակին, այնուամենայնիվ Սիմեոն Ծերունին տեղի չտվեց, այլ հույսով շարունակեց սպասել:

Հետաքրքիր է իմանալ այս պատմությունը.

«19-րդ դարում, Ամերիկայի քաղաքացիական պատերազմից անմիջապես հետո, Հարավային Քարոլայնա նահանգի՝ Կրինվիլ փոքրիկ քաղաքում Մկրտչական աննշան մի Դպրեվանք, երկար ընդմիջումից հետո վերաբացում էր իր դռները ուսանողության առաջ՝ դասընթացքները սկսելով միայն յոթը ուսանողներով և չորս դասախոսներով: Քաղաքական պայմանների պատճառով, շատ չանցած այդ Դպրեվանքը սնանկանում էր, սակայն դասախոսները շարունակում էին իրենց դասերը անվճար՝ սպասելով և աղոթելով: Եվ մի օր, իրենց հերթական ժողովներից մեկում դասախոսներից մեկը առաջարկում է.

- Եկեք որոշենք մեռնել և երբեք թույլ չտալ, որ այս

Դպրեվանքը փակվի:

Անցնում են երկար, ծանր ու դժվարին տարիներ:

Այսօր այդ նույն Դպրեվանքը, որը փոխադրվել է Քենթաքի նահանգի Լուիվիր քաղաքը՝ իր երկու հազարից ավելի ուսանողներով, դասախոսներով և տարեկան մոտ մի քանի միլիոն դոլարի բյուջեով, հանդիսանում է աշխարհի երկրորդ մեծագույն Դպրեվանքը, շնորհիվ այդ չորս դասախոսների, որոնք նախընտրեցին մեռնել՝ քան թե հուսահատվել ու տեղի տալ»:

Չրչիլը թերադրեց անգլիացիներին երբեք ու երբեք տեղի չտալ և չհուսահատվել, նույնը արեց Սիմեոն Ծերունին ու նույնը արեցին Մկրտչական Դպրեվանքի չորս դասախոսները, որոնք թույլ չտվեցին, որ ընկերային և քաղաքական պայմանները ձախողեցնեին իրենց փայփայած ծրագիրները, որոնք ավելի վսեմ էին ու ավելի բարձր, քան աշխարհի բոլոր հաճույքները և բարիքները միասին վերցրած:

Այսօրվա քրիստոնյայից ակնկալվածը ուրիշ բան չի, եթե ոչ զինվել հավատքով, հույսով ու սիրով. սպասել մեր կյանքի տաճարի դրան առաջ, առանց երբեք տեղի տալու:

Ծերունի Սիմեոնը միաժամանակ մեր խոստումն է ու մարտահրավերը: Նա Աստվածային այն խոստումն է, թե մեր կյանքում ինչ որ տեսնում ենք բացասական կամ սխալ հակառակ քաղաքական վերիվայրումների, լավ հասկանանք, որ դրանք վերջ ի վերջո դատապարտված են բարելավվելու:

Հիսուս Մանուկի քառասնօրյա հասակում Տաճարին Ընծայելու տոնը մեր մեջ առաջացնում է այս հարցը, թե՝ *«Մենք տեսնո՞ւմ ենք այն, ինչ որ Ծերունի Սիմեոնն էր տեսնում»:* Անկասկած նա բարի ու հավատացյալ անձ լինելով, հեքիաթներին հավատացող մեկը չէր, բայց լավ էր հասկանում աշխարհի բարին ու չարը և քաջ գիտեր, թե ի՞նչ է նշանակում տառապել՝ սպասելով ու ակնկալելով: Սակայն նա իր աչքերը հառած երկնքին, հավատաց Աստծու խոստմանը, մերժեց լքել տարիների իր երազը ու համբերությամբ հասավ իր նպատակին: Մենք էլ եկեք հավատանք մեր վաղվա օրվան և Աստծու կամքի համաձայն շարունակենք մեր կյանքը, միշտ հույսով ու աղոթքով, որ վերջ ի վերջո մեր երազները իրականություն պիտի դառնան:

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ. (ՈՂՈՐՄԵԱ)
«ԱՐԵԳԱԿՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ»

Արեգակն արդարութեան ի հայաստան ծագեալ պայծառացուցեր սուրբ զեկեղեցի հեղմամբ արեան սրբոցն. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց եւ ողորմեա քո արարածոց:

Պանծալի սուրբ զաւակօք հովիւքն գուարթունք, հրով հոգւոյն շիջուցին զբոցն զկրակապաշտ պարսիցն. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց եւ ողորմեա քո արարածոց:

Պարթեւական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ զհաւատոյ որդիս սրբոյն գրիգորի պսակագարդ տեսեալ. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց. եւ ողորմեա քո արարածոցս:

Արդարության արեգակ Հայաստանի մեջ ծագելով, սրբերի արյամբ պայծառացրեցիր Սուրբ Եկեղեցին, նրանց աղոթքով խնայիր մեզ բարիքների պարգևատու և ողորմիր Քո արարածներին:

Արթուն հովիվները պանծալի սուրբ զավակներդ, Հոգու հրով հանգցրեցին կրակապաշտ պարսիկների բոցը. նրանց աղոթքով խնայիր մեզ բարիքների պարգևատու և ողորմիր Քո արարածներին:

Պարթև տեսնողը (Ս. Սահակ) (աստվածային) նախազդեցությամբ Սուրբ Գրիգորի, հավատքի որդիներին տեսավ պսակազարդված. նրանց աղոթքով խնայիր մեզ բարիքների պարգևատու և ողորմիր Քո արարածներին:

Աղոթենք, որ մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի Անվանակոչության այս տոնին, Հայր Աստված մեզ բոլորիս տա հավատալու և հուսալու այդ անսպառ ուժը, որպեսզի մենք ևս մեր կյանքի ավարտին ձայնակցելով Սիմեոն Ծերունուն կարողանանք ասել, *«Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի, որովհետև աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ...»:* Ամեն:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

«ԳՆԱՑԵ'Ք ՈՒՐԵՄՆ ԱՇԱԿԵՐՏ ԴԱՐՁՐԵ'Ք ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ՄԿՐՏԵՑԵՔ ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՈՒՆՈՎ»

(ՄԱՏԹ. 28:19)

Համբարձում նշանակում է *Երկինք բարձրանալ:* Երեք Ավետարանիչները՝ Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը գեղեցկորեն նկարագրում են Հիսուսի երկինք բարձրանալը: Մեր Տերը Գալիլիայի լեռան վրա Իր հետևալ կարևոր պատգամը տվեց Առաքյալներին. *«Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. 28:18-20):*

Այս պատգամը տրվեց Ձիթենյաց լեռան վրա, երբ մեր Տերը Համբարձավ երկինք: Սրանով Հիսուս պաշտոնապես իշխանություն էր տալիս Առաքյալներին, որ գնան հեթանոսների աշխարհը, մկրտեն Սուրբ Երրորդության անունով, սովորեցնեն նրանց Իր տված պատվերները և վստահ լինեն, թե Ինքը անբաժան է իրենցից մինչև աշխարհի վերջը:

Մինչ այդ մեր Տերը Իր Հարությունից հետո քառասուն օրեր երևաց Առաքյալներին, որոնք Իր խաչելությունից վախեցած փախել և ցիր ու ցան էին եղել: Հիսուս Իր ջերմ զրույցներով, քաջալերական խրատներով, վերստին արթնացրեց նրանց մէջ հավատքը Իր քարոզած վարդապետության նկատմամբ, նույնիսկ փարատեց Թովմաս Առաքյալի թերահավատությունը: Այս քառասուն օրերը կարծես թե ամենաերջանիկ օրերը հանդիսացան մեր Տիրոջ և Առաքյալների համար:

Հիսուսի առաքելության ավարտի ժամանակը հասել էր և Նա պետք է վերադառնար Իր Հոր մոտ: Դեպքը տեղի էր ունենում Նրա կյանքի հետ կապված տխուր վայրերում, ուր

Նրան մատնեցին, չարչարեցին, տանջեցին ու խաչեցին: Վերջին հրաժեշտը տալուց առաջ Հիսուս Իր աշակերտներին պատվիրում էր չհեռանալ Երուսաղեմից, մինչև Իր Հոր խոստացած Մխիթարիչ Սուրբ Հոգին ուղարկելը:

Շատ խորհրդավոր էր Հիսուսի երկինք համբառնալը: Իր վերջին պատվերի և օրհնության ավարտին, Նա սկսում է քիչ քիչ կտրվել երկրից: Համբարձման պահն էր և Առաքյալները շշմած աչքերով հետևում էին Նրան մինչև որ Նա անհետվում է ամպերի մեջ:

Առաքյալները դեռևս երկար ժամանակ այդպես շփոթված կմնային երկինք նայելով, եթե նրանց չերևային երկու սպիտակազգեստ հրեշտակներ, որոնք փորձում էին զգաստացնել դեռևս իրենց Տիրոջ հետքերը որոնող տասնմեկ Առաքյալներին. *«Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը» (Գործք Առաք. 1:11)*

Շնորհք Պատրիարք Գալուստյանն ասում է.

«Քրիստոսի Համբարձումը Հարության երևումների հանդիսավոր փակումն է Նրա հետ. Հիսուսի տնորինությունների կրնքումն է և նյութական աշխարհից Նրա պաշտոնական ու տեսանելի բաժանումն է՝ Իր հետևորդների հետ հոգեպես և բարոյապես մնալու համար՝ մինչև աշխարհի վախճանը» (Շնորհք Պատրիարք Գայուստյան «Գունագեղ Կիրակիներ», Ստամբուլ, 1976, էջ 31):

Առաքյալները Հիսուսի երկինք Համբառնալու համար լաց չեղան և չտխրեցին, ինչո՞ւ: Պատասխանը պարզ է. որովհետև արդեն իսկ իրենց մեջ ունեին Աստծու ներկայությունը:

Այստեղ կարելի է հարց տալ, թե՝ *«Մեզանից քանի՞ հոգիներ են զգացել Աստծու ներկայությունը իրենց մեջ»:* Մեզանից ո՞ր մեկն է հարց տվել, թե՝ *«Իմ մեջ Հիսուս բնակվո՞ւմ է կամ ոչ»:* Կամ եթե հարց տվել է, շարունակե՞լ է ասելով. *«Իսկ ինչպե՞ս ես պիտի կարողանամ զգալ Աստծու ներկայությունը իմ մեջ»:*

Ավետարանում, երբ մի մեծահարուստ երիտասարդ Հիսուսին հարցնում է, թե ինչ բարիք գործի, որ կարողանա երկնքի արքայությունը ժառանգել, մեր Տերը նրան պատասխանում է, թե՝ պահիր պատվիրանները: Հարուստ երիտասարդը ասում է, թե փոքր տարիքից արդեն իսկ դրանք պահել

է ու հետևել նրանց, ուրիշ ինչի՞ պետք կա: *«Եթե կամենում ես կատարյալ լինել գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս, և դու արի իմ հետևից» (Մատթ. 19:22)*

Երիտասարդ տարիքին, երբ թե՝ ֆիզիկապես և ինչո՞ւ չէ նաև հոգեպես ուժեղ ենք, երբեք չենք մտածում, թե մի օր հանկարծ կարող ենք և չլինել: Շարունակում ենք մեր կերուխումներով լի և ամենօրյա խրախճանքներով շրջապատված կյանքը: Երբեմն նույնիսկ խրատները անզոր են լինում մարդկանց ետ կանգնեցնելու իրենց այս վիճակից, *(Այսպիսի դեպքում ժողովուրդն ասում է. «մի ականջից մտնում է, մյուսից՝ դուրս գալիս»),* որը վերջ ի վերջո զանազան ձևերով տանում է դեպի կործանում: Այսօր, կարծես թե մարդկանց մեջ մեծ պայքար կա ունենալու ամեն բան, հասնելու նույնիսկ անկարելիին, նյութական հզորության. խելակորույս մի պայքար, ուր բնական է շատ սխալներ են գործվում: Նյութական պայքարի մեջ մտնելով մարդիկ մոռանում են Աստծու գոյության մասին, *Եկեղեցի, աղոթք, հոգեկան կյանք,* ո՞ւմ են պետք սրանք, շատ անգամներ լսել ենք նույնիսկ սիրտ ցավեցնող այս արտահայտությունը, թե՝ *«Դրանք փոր չեն կշտացնի» կամ «Աղոթքը տուն չի պահի»:* Անում ենք ամեն բան այս նշանաբանով. *«Աշխարհը մեռնել կա»:* Սակայն մոռանում ենք, որ Աստված անտեսանելի Իր հայացքով հետևում է մեր ամեն մի քայլին, ամեն մի գործին ու պիտի գա մի օր, երբ Նա մեզանից հաշիվ պիտի պահանջի. *«Տուր քո ապրած կյանքի հաշիվը»,* այն ժամանակ ի՞նչ պիտի պատասխանենք մեր Երկնավոր Հորը:

Երուսաղեմի միաբան երջանկահիշատակ Սիոն Արք. Մանուկյանն ասում է.

«Տիրոջ Համբարձման պատգամն է - վեր բարձրանալ մեր ճղճիմ մտահոգություններից, աշխարհի մեղքերից, սնոտի ու անցավոր փառքերից, երկրավոր ժամանակավոր շահերից ու վերանալ իրական մեծության և հոգեկան կյանքի ոլորտների մեջ ու վերևից նայել այս աշխարհի չնչին արժեքների վրա:

Համբարձումը հոգու վերացման, բարձրացման Տոնն է: Ամեն քրիստոնյա պետք է ունենա իր Համբարձման լեռը: Երբ

բարձր մի լեռան կատարն ենք բարձրանում, դաշտի փոքր առարկաները չենք տեսնում, մեծություններն են միայն երևացողը:... Բարձրանանք մեր հոգևոր Համբարձման լեռը ու այնտեղից, այդ բարձրությունից նայենք մարդկանց ճղճիմ փառքերի վրա, այն ժամանակ ավելի ներողամիտ ոգի պիտի ունենանք» (Միհոն Արք. Մանուկյան, «Ավետարանի Պատգամներ», Բ. Տպագրություն, Երուսաղեմ, 1965, էջ 69):

Համբարձման տոնի հետ ավանդական ժողովրդական սովորություն է նաև *Վիճակ* գցելը:

Հայերի մոտ վիճակին մասնակցողները եղել են հայ աղջիկները և նորահարսները, երբ սափորը լցված էր լինում յոթը աղբյուրներից վերցված ջրով, սափորի մեջ նետում էին մանր, արժեքավոր իրեր՝ մատանի, օղ, ապարանջան և այլ կարգի ոսկեղեններ:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԴՁ.
«ՀԱՄԲԱՐՁԱՒ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԵՐԿԻՆՍ»

Համբարձաւ Տէրն մեր յերկինս, ասելով աշակերտացն, նստարուք ի քաղաքիդ երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախորհուրդ եւ միակրօն, միաբան նստէին ի սուրբ վերնատանն, եւ ակն ունէին զալստեան սուրբ հոգւոյն:

Յանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման. եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսըն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Մեր Տերը երկինք համբարձավ, ասելով աշակերտներին, նստեցեք դուք Երուսաղեմ քաղաքում, մինչև երկնքից զորություն ստանաք:

Սուրբ առաքյալները միաբանված, մեկ միտք ու մեկ սիրտ, միասին նստել էին սուրբ Վերնատանը և սպասում էին Սուրբ Հոգու գալստյան:

Լույսի փայլի նմանությամբ (Սուրբ Հոգին) հանկարծ հասավ, եկավ բնակվեց սուրբ առաքյալների մեջ, մինչ նրանք Վերնատան մէջ նստած էին:

Համբարձման այս գեղեցիկ օրը փառք տանք Աստծուն մեր այս կյանքի համար ու աղոթենք, որ Նա զորացնի մեր հաւատքը, ավելացնի մեր սերը, ուժ և կարողություն պարգևի մեզ ստեղծելու լավն ու բարին, օգնելու կարիքավորներին, ձեռք մեկնելու նրանց, որոնք պետք ունեն այդ օգնության: Ամեն:

Գործք Առաքելոցի 2-րդ գլխի 1-4 համարներում գեղեցիկ կերպով նկարագրվում է Սուրբ Հոգու էջքը Վերնատան մեջ առաքյալների վրա:

«Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք Առաք. 2:1-4):

Հոգեգալուստը հրեաների ամենամեծ տոներից մեկն էր, որ կոչվում էր *Պենտեկոստե:* Սա Հունարեն բառ է, որ նշանակում է *հիսուն օր:* Մովսեսի գրքերում գրված է, որ հրեաների Եգիպտոսից ելնելուց հիսուն օր հետո Սինա լեռան վրա Աստված երևաց ժողովրդին ու Մովսեսի միջոցով տվեց գրաւոր Պատվիրան-Օրենքները: Աստծու կողմից ստացված այս շնորհների համար հրեա ժողովուրդը իբրև երախտագիտություն հաստատեց *«Տարվա հունձքի առաջին բերքի»* տոնը, երբ ամեն մարդ Աստծուն պիտի նվիրեր իր առաջին բերքը և զոհաբերեր կենդանիներ:

Սուրբ Հոգու գալուստը Վերնատան մեջ պարզապես Առաքյալներին մխիթարելը չէր, այլ մասնավորաբար նրանց Աստվածային շնորհներ տալը, որպեսզի նրանց հոգին զորանար, միտքը լուսավորվեր, սրտերը կազդուրվեին և վախը փարատվեր:

Հետաքրքիր մի հարց է առաջանում, թե՝

«Ինչո՞ւ Հիսուս Համբարձումից հետո անմիջապես Իր Առաքյալներին չհրահանգեց գնալ և քարոզել աշխարհին Ավետարանի ճշմարտությունները, պատճառը ի՞նչ էր»:

Երուսաղեմի Պատրիարք երջանկահիշատակ Թորգոմ Արք. Գուշակյանը հստակ կերպով տալիս է սրա պատասխանը.

«Այդ հոգին, Աստծու իմաստության և զորության կենդանի ներգործությունը մարդու մեջ, այնպիսի մի վիճակ է առաջ բերում,

որ ինքնաբերաբար բացվում ու մաքրվում են մեր էությունը Կատարյալի հետ հարաբերության մեջ դնող ծանոթությունների ճանապարհները: Ու մարդկային տկար միտքը, մոռացման մշուշից սրբված և գերագույն ճշմարտությունները հասկացած, ընդունած, գործված ու պայծառ իմացականության շնորհներով է զարդարվում» («Ավետարանի ճամբեն», էջ 74):

Այդպես է, որ Վերնատուն մտած առաքյալները՝ Սուրբ Հոգու զորությամբ և շնորհներով լցված, դուրս են գալիս իբրև իմաստուն լեզվագետներ և խիզախ գործիչներ, քարոզիչներ և աստվածուսույց վարդապետներ:

Յուրաքանչյուր հավատացյալի մտքում կարող է ևս մի հարց ծագել, թե՝ *«Ո՞վ է Սուրբ Հոգին»:* Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության Անձերից մեկն է, որ Հորդանան գետում Հիսուսի մկրտության ժամանակ իջավ Նրա վրա աղավնու, ապա վերնատան մեջ՝ Առաքյալների վրա՝ հրեղեն լեզուների կերպարանքով:

Մի կարծեք, թե Հոգեգալուստը երկու հազար տարիներ առաջ եղավ ու վերջացավ: Մեզ՝ քրիստոնյաներիս համար, Սուրբ Հոգու գալուստը կարող է լինել ամեն րոպե, ամեն ժամ ու ամեն օր, եթե մենք մեր սրտերն ու հոգիները մաքրենք չարից՝ Աստծու անսպառ շնորհները ընդունելու համար:

Հոգեգալստյան դեպքը ավելի լավ պատկերացնելու և ընդհանուր մի եզրակացության հանգելու համար, կարելի է մի հայացք նետել երկու հազար տարիներ առաջվա նախնական Եկեղեցու հավաքական կյանքի վրա, որի պատկերը կարող ենք տեսնել կարդալով Գործք Առաքելոցի 2-րդ գլխի 42-47 համարները.

...«Հավատացյալները ամենքը միասին էին և ինչ որ ունեին՝ ընդհանուր էր: Նրանք վաճառում էին իրենց կալվածքներն ու ունեցվածքները և բաժանում բոլորին՝ ում ինչ որ պետք լիներ: Ամեն օր միասիրտ, առաւոտ շուտ գնում էին տաճար, տներում էին հաց կտրում և ուրախությամբ ու սրտի պարզությամբ կերակուր ուտում: Օրհնում էին Աստծուն և ամբողջ ժողովրդի մէջ հարգանք էին վայելում: Եվ Տերը օրեցօր փրկվածներին նրանց թվի վրա ավելացնում էր» (Գործք Առաքելոց 2:1-4):

Խնդրեմ ձեզ մի պարզ օրինակ քրիստոնյա համայնքի

նախնական կյանքից: Հետաքրքրիր է, թե՝ *«Մեր նախնիները ի՞նչպես էին կարողանում միասնական պահել այս սկզբնական համայնքը: Ի՞նչ էր դրա գաղտնիքը»:*

Այս հարցի պատասխանը տալիս է Շնորհք Պատրիարք Գալուստյանը.

«Մեր երևութական ու արհեստական տարբերությունները այնքան շեշտված ու այնքան ամուր արմատ են բռնել են մեր մտքերում, որ հաճախ չենք անդրադառնում այն հիմնական ու հավիտենական մեկության, որ մարդկությանն է վերաբերում: Ու այնքան վարժվել ենք իրար հետ կռվելու և իրար կասկածանքով նայելու, որ այլևս «միաբան ու միասին» ապրելը մեզ թվում է անկարելի երազ, որը հաճախ մեր ցանկությունների աշխարհում էլ չի գտնվում...»:

«Ինչո՞ւ Առաքյալները «էին ամենեքյան միաբան ի միասին»: Պատճառը շատ պարզ ու բացահայտ էր. որովհետև նրանք միասին ապրել ու միասին տառապել էին.. միասին տկարացել և վերջապես միասին երջանկացել էին: Եվ հետևաբար միասին էլ մեկ հոգով լցվել... Արդ որո՞նք են պարզագույն գծերը այս նոր կյանքի կառուցվածքի:

ա. Նույն հավատքը ունեին, բ. Հոգով կապված էին իրար հետ. գ. Սուրբ Հաղորդություն էին ստանում, դ. Հավաքական աղոթքի մեջ էին. ե. Տնտեսական համագործակցություն ունեին»

(Շնորհք Պատրիարք Գաշուստյան, «Գունագեղ Կիրակիներ», Ստամբուլ, 1976, էջ 45, 64-65):

Ահա այս հինգ հիմնական կետերն էին պատճառները, որոնք առաջին քրիստոնյա համայնքի բոլոր հավատացյալներին պահում էին միասնական, խաղաղ ու համերաշխ:

Մխիթարիչ Սուրբ Հոգու գալուստը պատահեց, երբ Հիսուսի աշակերտները միասին էին, միախորհուրդ և միաբան:

Երբեմն հակառակ մեր կամքին և ընտանեկան հոգևոր մթնոլորտին, մեր զավակները փորձում են շեղվել հավատքի ճանապարհից ու հոգևոր կյանքից:

Այս օրինակով ուզում եմ հաստատել իմ այս ասածը.

«Հոգևոր կյանքով ապրող մի ընտանիքի զավակ, իր բարեպաշտ հոր դեմ սկսում է ըմբոստանալ անարգելով Եկեղեցու

սրբությունները, մինչև իսկ հանդգնում է շեշտել Սուրբ Հոգու անիմաստ լինելը: Հայրը բարեպաշտ ու աստվածավախ մարդ լինելով, համբերությամբ հետևում է իր զավակի բոլոր անարգալից արտահայտություններին: Զանազան առիթներով նա հոգևոր բովանդակությամբ և երիտասարդությանը հետաքրքրող գրքեր է բերում, որպեսզի նա կարդա և հոգեկան արթնություն ունենա, սակայն նրա բոլոր ճիգերը ապարդյուն են անցնում:

Հանկարծ նրա մտքում մի նոր գաղափար է ծագում և իր զավակի նախընտրած գրքերից մի օրինակ գնելով բերում է տուն և գիշերը, երբ նա վերադառնում է, նվիրում է նրան: Զավակը նախ ապշում է հոր որդեգրած նոր դիրքից, ապա շնորհակալություն է հայտնում և անմիջապես սկսում է թղթատել դրանք: Հայրը, որ հետևում էր որդու շարժումներին, կամաց մոտենում է սենյակի վարագույրներին և փակում դրանք դրսի լույսը խափանելով: Ապա փակում է նաև դուռը և վերջապես հանգցնում սենյակի լույսը:

Զավակը, որը խորասուզված էր նոր ստացած գրքի էջերում գտնվող գունավոր պատկերների մեջ, ստեղծված արհեստական խավարում բարկանում է հոր վրա ու ասում է, թե նա ամեն ինչ փակել է, լույս չունի, որ կարողանա նրա նվիրած գիրքը կարդալ:

Հայրը առիթը հարմար նկատելով նրան բացատրում է, թե իր նվիրած գիրքը Աստծուց ստացած մեր նյութական նվերն է, մեր միտքը, գիտությունն ու կարողությունները, սակայն դրանք օգտագործելու համար Սուրբ Հոգու պետքը ունենք, ինչպես գիրքը կարդալու համար լույսի կարիքը զգացվեց»: Բայց գիրքը ի՞նչ արժեք ունի, երբ լույս չկա և չես կարող կարդալ: Եթե ֆիզիկական լույսը այսքան կարևոր է մեր կյանքի համար, հապա ինչքան ավելի կարևոր է Սուրբ Հոգու պարգևած հոգևոր լույսը, իմաստությունը և հանճարը, որի արդյունքները ամբողջ աշխարհին բարիք կընծայեն:

Հոգին մարդու կողմնացույցն է, որին նա պետք ունի ամեն րոպե իր կյանքում, եթե ուզում է մնալ աստվածահաճո ուղու մեջ և ժառանգել այն, ինչ որ սկզբից պատրաստված է Աստծու կամքը կատարողների համար:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԳԶ.
«ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱՒՆՈՅ»

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս աստուծոյ. զոր առեալ ի հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի հօրէ հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Հորից ուղարկված աղավնին (Սուրբ Հոգին) մեծաձայն հնչումով լույսի փայլատակման նմանությամբ բարձունքից իջնելով, անկիզելի կրակով զինեց աշակերտներին, երբ նրանք Վերնատան մէջ նստած էին:

Աննյութ աղավնի, ինքը անքննելի, որ Աստծու խորհուրդներն է քննում և Հորից վերցնելով հիշեցնում է մեզ ահավոր երկրորդ գայստյան մասին. Հոգու համար մեզ քարոզեցին, թե Նա Համագոյ է Հորը և Որդուն:

Օրհնություն բարձունքների մեջ Հորից բխող Սուրբ Հոգուն, որի անմահական բաժակով առաքյալները հարբեցին և երկրին երկինք հրավիրեցին:

Ինչպես Սուրբ Հոգին Հորդանան գետում Հիսուսի Սուրբ Մկրտության ժամանակ և Վերնատան մեջ հրեղեն լեզուների կերպարանքով իջավ Առաքյալների վրա, այսօր էլ ես իմ աղոթքը բարձրացնում եմ առ Աստուած, որ Սուրբ Հոգու այդ զօրությունը մտնի յուրաքանչյուր հայի ընտանիքից ներս, այնտեղ հաստատի սեր, միություն և խաղաղություն: Ամեն:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

«ԵՎ ԲՈԼՈՐԸ ԼՑՎԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ՈՒ ՍԿՍԵՑԻՆ ԽՈՍԵԼ ՈՒՐԻՇ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՆՐԱՆՑ ԽՈՍԵԼ ԷՐ ՏԱԼԻՍ»

(ԳՈՐԾՔ ԱՌԱՔ. 2:14)

Պատկերացրեք մի մարդու, որը ամբողջությամբ ապրում է միայն իբրև ֆիզիկական մարմին. հոգին մեռած է նրա մեջ: Մարմինը տիրոջից պիտի պահանջի հլու հնազանդ ձևով կատարել իր պահանջները՝ ուտել, խմել, հանգստանալ և այլ հաճույքներ: Միայն այսքանը: Ուրիշ ոչ մի բան նա չի կարող ցանկանալ: Այսպիսի մեկը ինչո՞վ է տարբերվում կենդանուց. իր դաժանությա՞մբ, թէ՞՝ իր տրամաբանությամբ ու խելքով: Եթե նրա մեջ հոգի չկա, բնական է, որ այս երկուսը նա պիտի օգտագործի գազանային բնազդով իր մարմնական բոլոր ցանկությունները իրագործելու համար: Սակայն հարց է ծագում, թէ՝ *«Ով որ հոգի ունի, արդյոք չի՞ մտածում իր մարմնի, ատելիքի, հագուստի և այլ նյութական կարիքների մասին»:* Անշուշտ մտածում է և նույնիսկ պարտավոր է, բայց հոգին է, որ կարգավորում է, իմաստավորում և գեղեցկացնում մարդկային կյանքը:

Այս առթիվ ուզում եմ ձեզ մի հետաքրքիր դեպք պատմել.

«Մի օր Նյու Յորքի Սուրբ Վարդան Սուրբ Տաճարում Առաջնորդ Սրբազան Հայրը իր քարոզում մի քանի անգամ ոգևորված ասում է. «Ո՞ւր է Հոգին, ո՞ւր է Հոգին»: Այդ պահին, մի տասը տարեկան երեխա վազում է Սուրբ Սեղանի մոտ և ուղղակի դիմելով քարոզիչ Սրբազանին, ասում. «Այստեղ եմ, այստեղ եմ»: Անշուշտ այդ պահին բոլորը զարմանում և շփոթվում են: Փոքրիկը, որն իր մոր կողմից միշտ կանչվելիս է եղել «Հոգիս, Հոգիս» Քաղաքշական խոսքով, մի պահ մտածում է, թե Սրբազան Հայրը իրեն է կանչում ու վազում է Սուրբ Սեղանի մոտ»» (այդ շրջանին Միացեալ Նահանգաց Արևելյան Թեմի Առաջնորդն էր՝ Գերաշնորհ Տ. Թորգոմ Արք. Մանուկյանը, որն այժմ Երուսաղեմի Հայոց Պատրիարքն է): Մաքուր սրտով մանուկը այդ պահին դառնում էր Սուրբ Հոգու շնորհների տեսանելի ներկայությունը Սուրբ Սեղանի առջև:

Բոլորս էլ գիտենք, որ կան նաև չար սիրտ ունեցողներ: Երբ մենք խոսում ենք բարության, սիրո, մեծահոգության, խղճմտանքի, գթասրտության և ընդհանրապես գեղեցիկի մասին, մարտահրավեր ենք ուղղում չարի, ատելության, թշնամության, անհոգության, բարկության և ընդհանրապես վատ երևույթների դեմ: Բոլոր բացասական երևույթները մարդուն ղեպի մահ են տանում, խոսքս ֆիզիկական մահվան մասին չի, այլ՝ հոգու մահվան:

Հիսուսի ամբողջ քարոզչությունը, կատարած հրաշքներն ու բժշկությունները, Իր կրած տանջանքներն ու մահը և ապա հրաշալի ու հաղթական Հարությունը, միայն մի բանի համար էր, որպեսզի մարդկանց հոգիներում թագավորի բարին ու գեղեցիկը:

«Եվ ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. 24:49):

Առաքյալներին պատրաստելու համար Հիսուս փչեց նրանց վրա ու ասաց. *«Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20:22-23):*

Եթե այսօր մեր Եկեղեցին ցանկություն ունի ավելի կենսունակ, միասնական և միասիրտ դառնալ, ինչպես մեր նախնիներն էին, առանց խախտելու հիմքը պիտի կարողանա նոր, ժամանակակից ձևերով, մոտեցում ցուցաբերել հավատացյալների հավատքը և սերը զորացնելու համար:

Հարավային Հնդկաստանի Եկեղեցու եպիսկոպոսներից Լեզլի Նիուպիկին գրում է. *«Եթե մի պատասխան գտնենք այս հարցմանը, թէ ո՞ւր է Եկեղեցին, նախ պետք է հարցնենք, թէ «Ո՞ւր է, որ Սուրբ Հոգին ներկա է իր զորությամբ»:*

Այսօր պարզ Եկեղեցի եկողների մեծ մասը բացարձակ ծանոթություն չունեն ոչ մեր Եկեղեցու պատմության, ոչ նրա հոգևոր առաքելության և ոչ էլ մանավանդ՝ Սուրբ Հոգու մասին:

Հարց է առաջանում, եթե մեր ժողովրդի զավակները տեղեկություններ չունեն վերոհիշյալների մասին, ինչպե՞ս կարող են լցվել Սուրբ Հոգով:

Պատասխանը կարող ենք գտնել Կ. Պոլսի երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանի այս հրաշալի բացատրական խոսքերի մեջ.

«Պետք է համաձայնվենք, որ եթե մեկը ուզում է մի նոր բանով լցվել, նախ պետք է դատարկվի: Հիսուս ասաց. «Երանի հոգով աղքատներին»: Մինչև որ մեկը չդատարկի ինքնիրեն հպարտությունից, անձնասիրությունից, իշխելու ցանկությունից և մարդկային մյուս սովորական ցանկություններից, Սուրբ Հոգին չպիտի լցնի նրա կյանքը: Մենք պիտի խաչվենք Քրիստոսի հետ, որպեսզի Նա կազմավորվի մեր մեջ...:

...Հետո մենք պետք է համաձայնության գանք Սուրբ Հոգու գլխավոր պարգևի մասին, որը սերն է:... Ինչքա՛ն Հոգին ամբողջությամբ բնակվի մեր մեջ, այնքա՛ն շատ սեր պիտի արտահայտվի դեպի դուրս» («Գունագեղ Կիրակիներ և Հոգեգալուստ», Ստամբուլ, 1972, էջ 74-75):

Այսպէս հիմնվեց Աստծու Եկեղեցին: Եկեղեցի, որը կառուցված է մարդկային հոգիների աղյուսից, շաղախված սիրով ու եղբայրսիրությամբ: Այն ոչ քարից է, ոչ փայտից և ոչ էլ ոսկուց: Քրիստոսի Եկեղեցին հոգեկան տաճարն է: Նյութական տաճարները հնանում են, կործանվում կամ թշնամին է ավերում, սակայն ոգեղեն տաճարները անմահ են, մշտանորոգ և փյունիկի պէս վերածնվող:

Հոգու կրակը չհանգցնելու լավագույն միջոցը նրա տարածումն է, երբ համախմբվենք ու կողք-կողքի բերենք մեր ջահերը, հրդեհ ու բոց կլինի, որը ոչ մի հակառակորդ ուժ չի կարող հանգցնել: Հակառակորդ, որը երբեմն սողոսկում է մեր մեջ, հուսալքելու, մատնելու անհոգության, բաժանելու և քայքայելու, դարձնելու մեր ազգի զավակներին անտարբեր իրենց հոգևոր ժառանգությանց ու սրբությունների նկատմամբ: Չարիքներ, որոնք կարող են հանգցնել հոգու նվիրական հուրը, սփռելով ցուրտ ու խավար:

Հիշյալ մտքի ճշմարիտ վկան է Հայ ժողովրդի ու նրանից անբաժան մեր Եկեղեցու պատմությունը: Թեև թշնամիները շատ անգամներ կործանեցին Հայոց երկիրը, հողմացրիվ արեցին մեր ազգի զավակներին, փլատակների ու պահեստների վերածեցին մեր Եկեղեցիները, սակայն չկարողացան հանգցնել

Հայ հոգու կանթեղը, հավատքի ու հույսի կրակը: Այո, չկարողացան, որովհետև ինքնագիտակցության փոքրիկ մի կայծ բավական է եղել վերստին բորբոքելու Հայ հոգու հուրը:

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ ԱՋ.
«ԶՀՈԳԻՈՅՆ ԶԳԱԼՈՒՍՏՆ»

Զհոգւոյն գալուստն տօնեմք, որ մխիթարեաց զառաքեալսն հանգչելով ի նոսա հրեղէն լեզուօք. օրհնեալ յաւիտեան:

Զերեւումն հոգւոյն տօնեմք, վերաբերեալ աստուած խոստովանիմք նորոգող եւ կենդանարար. օրհնեալ յաւիտեան:

Այսօր ուրախացեալք հոգւովն, խոստովանիմք աստուած զհոգին սուրբ բղխումն եւ լցուցիչ զամենայն. օրհնեալ յաւիտեան:

Հոգու գալուստն ենք տոնում, որը առաքյալներին մխիթարեց հրեղեն լեզուներով նրանց վրա հանգչելով. թող օրհնյալ լինի հավիտյան:

Հոգու երևումն ենք տոնում, նրան խոստովանվում ենք իբրև վերևից եկող նորոգիչ և կենդանարար Աստված. թող օրհնյալ լինի հավիտյան:

Այսօր ուրախ սրտով Սուրբ Հոգուն իբրև Աստված ենք խոստովանվում. բխումն ու բոլորին լիցքավորողը, թող օրհնյալ լինի հավիտյան:

Հոգեգալստյան տոնը ամեն տարի մի առիթ է ստեղծում մեզ հավատացյալներիս առաքյալների օրինակով ի մի գալու, վերստին խառնելու *սրտերի մոխիրը և վառելու, բորբոքելու Սուրբ Հոգու կիսահանգած ու դալկացած կրակը՝ անհամանձայնության, այլասիրության, կեղծիքի խավարը և եսասիրության ցուրտը:* Եվ կարևոր չի, որ մենք խոսենք զանազան լեզուներով, սակայն *Սուրբ Հոգու շնորհիվ* խոսենք մեզ պակասող մի շատ կարևոր լեզվով՝ *Միտ լեզվով, Միտ բարբառով,* որով խոսում են սրտերը, որոնք փառաբանում են Հորը, Որդուն և Մխիթարիչ Սուրբ Հոգուն: Ամեն:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ (ՎԱՐԴԱՎԱՌ)

«ՏԵՐ, ԼԱՎ Է, ՈՐ ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ԵՆՔ...» (ՄԱՏԹ. 17:4)

Հիսուսի Պայծառակերպությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հինգ Տաղավարներից մեկն է:

Ավետարանը մեզ պատմում է Հիսուսի Պայծառակերպության մասին Իր երեք Առաքյալների՝ Պետրոսի, Հակոբոսի ու Հովհաննեսի ներկայությամբ, երբ աղոթքի պահին Թաբոր լեռան վրա Նա հանկարծ սկսում է հրաշալի մի տեսիլք ունենալ: *«Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը: Եվ ահա նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին նրա հետ: Պետրոսը պատասխան տվեց և ասաց Հիսուսին. «Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Եվ մինչ նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրան լսեցեք»:* Երբ *աշակերտները այս լսեցին, իրենց երեսի վրա ընկան ու սաստիկ վախեցան. Եվ Հիսուս մոտենալով, դիպավ նրանց ու ասաց. «Ոտքի ելեք և մի վախեցեք»: Նրանք աչքները բարձրացրին և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան» (Մատթ. 17:2-8):*

Հիսուսի Պայծառակերպությունը Նրա աստվածային լուսեղեն Հոգու հայտնությունն էր:

«Աշխարհում մշտական ուրախություն չկա»,- ասում է մեզ սովորական կյանքի փորձը. *«Չկա ոչ մի երջանկություն»,*- ասում են մի շարք *հոռետես մարդիկ, ըստ նրանց՝ «դառն ու ողորմելի է նրա վիճակը, որովհետև իր ամբողջ կյանքի ընթացքում մարդը չունի այնպիսի մի բոպե, որին հնարավոր լիներ ասելու՝ կանգ առ, բավական է շարժվես, առաջ մի գնա»:*

Երուսաղեմի Պատրիարք երջանկահիշատակ Թորգոմ Գուշակյանը ասում է.

«Ահա Հիսուսի հավիտենական օրինակը, որ Թաբորի բարձունքից ավանդվում է մեզ:

Մովսեսը և Եղիան. - օրենքն ու նախանձախնդրությունը.

Արդարությունը և համոզման քաջությունը: Որպեսզի գաղափարական մի գործիչ կարողանա ընթանալ դեպի իր կոչման վախճանը, պետք է, որ ունենա այդ երկուսից. պետք է, որ արդարությունը ուղղի իր քայլերը և անկեղծությունը թռիչք տա իր հոգուն... Կյանքում երկու գեղեցիկ բան կա. աստղազարդ երկինքը՝ մեր գլխավերևում ու բարոյական օրենքը՝ մեր ներսում:... Բայց ոչ արդարության սերը և ո՛չ էլ օրենքի հարգանքը ոչինչ չպիտի շարժեն, եթե մի բան՝ բարոյական մի ուրիշ զորություն դրանք կյանքի չվերածեր: Այդ զորությունն է՝ անկեղծությունը և համոզման քաջությունը...» (Ամբողջ Երկեր, Թորգոմ Պատրիարք Գուշակյան, «Ե. Քարոզներ», Երուսաղեմ, 1940, էջ 128-129):

Զարմանալի է Պայծառակերպության պատմությունը, քանի որ նա իր առանձնահատուկ տեղն ունի ավետարանական հայտնության մեջ: Թեև մեր Փրկչի ամբողջ կյանքը հրաշքների մի բազմախորհուրդ հյուսվածք է, բայց այս փոքրիկ դեպքը առանձնապես հրաշալի ու խորհրդավոր նշանակություն ունի. կարծես նա կատարվում է երկնքի ու երկրի մեջտեղում և մարդկանց աչքի առաջ դեպի անմահության լուսեղեն կյանքը գնալու մի փոքրիկ անցք է բացում:

Պայծառակերպության դեպքից մի քանի օր առաջ Պետրոս Առաքյալը վկայել էր, թե իրենց Վարդապետը Քրիստոսն է, խոստացյալ Մեսիան: Այդ րոպեից արդեն իսկ դրված էր Հիսուսի Եկեղեցու հիմքը: Սակայն այդ Սուրբ Հաստատությունը, այսինքն՝ Եկեղեցին, կարելի էր կառուցել միայն ու միայն Աստվածային Անմահ Գառան՝ Հիսուս Քրիստոսի և անթիվ քրիստոնյա նահատակների անարատ արյունով:

Դժբախտաբար մարդիկ հեշտության ու քմահաճ բախտին անձնատուր լինելու հիվանդությամբ տարված, դատարկ օդի մեջ ձգտում են դեպի վեր թռչել և գլորվում են անդունդը, մինչդեռ Փրկիչը երկրորդ անգամ ևս փորձությանը հաղթելով, սովորեցնում է մեզ հանձն առնել չարչարանքն ու խաչը, ուրանալ *«էս»-ը,* մինչև գերեզման խոնարհվել և իջնել ու այդպես միայն գտնել այն ճանապարհը, որն իրապես տանում է դեպի երջանկություն: Որպեսզի դեպի Գողգոթա բացվող մռայլ տեսարանը չհուսահատեցնի Հիսու-

սի աշակերտներին *(այսինքն՝ Իր մատնությունը, չարչարանքները, արհամարհանքն ու անարգանքը և խաչելությունը),* Փրկիչը բացում է Թաբոր լեռան վրա մի ծալքն այն վարագույրի, որը մարդու աչքից ծածկում է երկնքի սրբությունները և թույլ տալիս նրանց մի կարճ հայացք նետելու դեպի այն աշխարհը, որտեղից Ինքն էր եկել և, ուր որ պիտի գնային Իրեն ճշմարիտ հետևողները:

Իբրև հայ քրիստոնյաներ, մենք էլ ապրելով այս երկրային կյանքում Հիսուսի հետ, Պետրոս Առաքյալի նման կարող ենք բացականչել *«Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք»,* Իսկ Պողոս Առաքյալի նման ավելի լավ կհամարեինք, *«Յանկանալ բարձրանալ և Քրիստոսի հետ լինել»:* Բայց և իբրև քրիստոնյա մենք սովորում ենք նույն Պողոս Առաքյալից, թե՝ *«այս երկրավոր կյանքում մնալն էլ կարևոր է»:* Հրաշքով գուցե հնարավոր լինի միանգամից լեռներ շրջել, գետեր կանգնեցնել, բայց անհնարին է հանկարծակի, թեկուզ և հրաշքով պարզ մի մարդուց բարոյական բարձր անձնավորություն դաստիարակել, դրա համար հարատև ու տքնաջան աշխատանք է պետք աշխարհի և մարմնական ցանկությունների դեմ:

Հետաքրքիրն այն էր, որ Հիսուս աղոթելուց հետո էր, որ այլակերպվեց: Երբ աղոթում ենք, զգում ենք ու ապրում Նրա ներկայությունը: Աղոթքը Երկնքի արքայության բանալին է, որը բացում է մեր մեղավոր հոգու փականքները և առողջություն, բժշկություն ու փրկություն պարգևում մեզ:

Այս պատմությունը Հիսուսի կյանքից վերցված մի պատկեր է, ուր նա աղոթում է ու մեզ սովորեցնում միշտ աղոթել: Եթե մեր Տերը իբրև Աստվածորդի պետք ուներ աղոթքի ու զգում էր նրա կարևորությունը, ուրեմն, մենք մեղավոր մարդիկս, որ այնքան տկար ենք ու թույլ և շատ հաճախ, իմանալով կամ առանց իմանալու, բազում սխալներ ենք գործում, ինչքա՞ն պետք ունենք աղոթքի: Հիսուս մեր աղոթքի ուսուցիչն է: Ի՞նչ էր Նրա ամբողջ կյանքը, Նրա գործը, եթե ոչ Հայր Աստծուն նվիրված մի աղոթք:

«...Ու Իր անձի և գործի, Իր դերի և պաշտոնի վրա աղոթասույզ խոկման այդ պահին, Իր աշակերտները տեսնում են Նրան

փառավորված աստվածային մեծ վայելչությամբ. որովհետև մարդկային հոգում չկա Նրան ստուգապես բարձրացնող մի բան՝ քան պարտականության սերն ու կամքը, որն իր կատարելության է հասցնում կամ կրոնական բացատրությամբ՝ պայծառակերպում է մարդուն» (Ամբողջ Երկեր, Թորգոմ Պատրիարք Գուշակյան, «Ե. Քարոզներ», Երուսաղեմ, 1940, էջ 130):

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ - այս երկու բառերն էլ բացատրում են Ավետարանի ոգին: Քրիստոնյա հավատացյալը Սուրբ Ավետարանի գիտությամբ դրականապես փոխում է իր կյանքը: Հիսուս Իր երիտասարդ կյանքը զոհեց մարդկանց հոգիների փրկության համար: Մի մոռացեք, որ նա ընդամենը 33 տարեկան էր, երբ խաչ բարձրացավ: Այսօր մարդկային կյանքը Հիսուսի սիրո վարդապետությամբ պետք ունի անդադար նորոգվելու: Այնպես ինչպես թթվածինը մաքրում է մեր թոքերը լարված մի մեքենայի նման, այնպես էլ մարդկային աշխարհը պետք ունի միշտ նորոգվելու հոգևոր դաստիարակությամբ: Հայ Եկեղեցու պարտականությունն է այդպիսիներին հրավիրել խմելու Ավետարանի կենարար ջրից:

Պատմական այս պատկերը, իր գեղեցկությամբ ու թելադրությամբ, իր մեջ ունի հոգիները հեղաշրջելու ուժը, բավական է, որ այն ըմբռնվի իր հարազատ իմաստով: Պողոս Առաքյալն ասում է. *«Մենք հավատքը ընդունելուց հետո, Տիրոջ փառքն ենք ցոլացնում հայելու պես, որովհետև այլակերպված ու նորոգված ենք Իր նմանությամբ, բարձրանալով վեհագույն փառքի...» (Բ. Կորնթ.3:18):*

Բացի իր կրոնական խոր նշանակությունից, Քրիստոսի Պայծառակերպությունը մեզ համար ունի նաև այլ իմաստ:

Մեր հավատքի Հայր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ իմաստությունը ունեցավ որոշ հին հեթանոսական տոները քրիստոնեացնել: Այս ձևով հայոց հեթանոսական Նավասարդյան շքեղ տոնակատարությունները, *իրար վրա ջուր սրսկելը, աղավնիներ թռցնելը և այլն,*- քրիստոնեական *կերպարանք ստացան:*

Հայ Եկեղեցին ի տարբերություն մյուս Եկեղեցիների,

Պայծառակերպության տոնին տվել է նաև *Վարդավառ* անունը: Ավանդության համաձայն Վարդավառը եղել է հեթանոսական շրջանի մեր մեծագույն տոնը՝ նվիրված Աստղիկ դիցուհուն: Այս տոնի օրը պաշտամունքի ժամանակ արձանի առջև վարդեր շաղ տալու համար, այն կոչվել է Վարդավառ: Վարդը Հունական դիցաբանության մեջ առասպելական ծագում ունի: Հերասը գողացած լինելով Ափրոդիտեի զարդեղենների տուփը, երբ հազնում է նրա մեջի զգեստները, երկրի վրա գեղեցիկ վարդեր են բուսնում:

Վարդավառը հին հայոց հոգևոր մշակույթի մի գեղեցիկ պատկերացումն է, որն իր մեջ բովանդակում է սուրբ գրական ճշմարտություն և կյանք, խոր արմատ թողնելով հայ հոգիներում փրկության նկատմամբ: Այս առթիվ Հայաստանում և Միջին Արևելքում ի հիշատակ Զրհեղեղի, մարդիկ իրար վրա ջուր էին սրսկում և աղավնիներ թռցնում:

Այսօր, երբ աշխարհը հսկայաքայլ հաջողություններով առաջ է գնում ու մարդկային կյանքը վերածվում է շնչակտուր մի վազքի, իբրև հայ քրիստոնյաներ մենք առավել ևս պետք ունենք Աստծու պայծառակերպող լույսին: Մեզ պետք է կենդանի հավատք և մանավանդ անշահախնդիր սեր, որպեսզի կարողանանք արժանանալ գերազույն այդ վիճակին, որը կարող է մեզ պարգևել միմիայն մեր հոգու Թաբոր լեռը՝ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին: Ով որ մի քայլ իսկ հեռանում է մեր Սուրբ Եկեղեցու հավատքից, այդ պահից դառնում է Հիսուսի ասած մոլորյալ ոչխարը, որը դժբախտաբար ոչխարի մորթի հագած գայլերի զոհն է դառնում: Մեր Եկեղեցու հավատարիմ զավակներ, Հիսուս երկու հազար տարի առաջ արդեն իսկ զգուշացրել է մեզ հեռու մնալ ոչխարի մորթի հագած գայլի ախորժակով այդ սուտ քարոզիչներից: *Լսեցե՛ք մեր Տիրոջ հորդորը և կատարեցեք:*

Մեր նշանավոր Հայրերից մեկը ասել է. *«Եթե հայ ժողովուրդը իր Եկեղեցու նշանակությունը անտեսի, կկործանի իր զգացումների շենքը»:*

Ահա շուրջ երկու հազար տարիներից ի վեր մեր Սուրբ Եկեղեցին եղել է, կա ու մնալու է այն Թաբոր լեռը, ուր

բարձրացել են Հայ ոգու ու մտքի հանճարները, Մեսրոպ Մաշտոցից մինչև Կոմիտաս Վարդապետ, Վարդան Մամիկոնյանից մինչև Անդրանիկ Զորավար և մեր օրերի հերոսները: Հանճարներ, որոնք իրենց նվիրյալ ու հերոսական կյանքով տեսիլքը և երազն ունեցան Հայ ժողովրդի զավակներին առաջնորդելու դեպի ծարավ հոգիները հագեցնող լույսի աղբյուրը՝ մեր Տիրոջ Սիրո Վարդապետությունը:

Հիսուս այսօր մեզանից ամեն մեկի առջև բացում է Իր կյանքի օրինակը: Առօրյա մեր հոգսերից ու անվերջ աշխատանքներից հետո, մեր բոլոր Եկեղեցիները դառնում են այն Թաբոր լեռը, ուր Աստծու ներկայությամբ, ամեն Կիրակի, հավատացյալները գնում են հաղորդվելու Նրա շնչով՝ նորոգվելու ու պայծառանալու համար, որպեսզի նոր ուժով, սիրով ու հավատքով լիցքավորված կարողանան շարունակել իրենց կյանքը:

Ուզում եմ մեջբերել երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի խոսքը. *««Հայ Եկեղեցին, ազգային տեսակետով իր ունեցած բոլոր առավելությունների հետ, իր զավակներին կարող է ցույց տայ հոգևոր փրկության ճանապարհը՝ Ավետարանի սկզբունքների համաձայն և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևանքով...: Հարգեցեք դիմացինի համոզումը և Եկեղեցին, բայց չպետք է շեղվեք մեր Հայ Եկեղեցուց ու հայ դավանությունից: Լավ պետք է հասկանանք, որ Հայ Եկեղեցին եղել է մեր գոյության պահապանը, նա միխիթարել է մեզ, հոգով ծնել ու դաստիարակել է մեզ, տառապել ու նահատակվել է մեր ժողովրդի հետ և քամել վշտի ու տառապանքի բաժակը մինչև վերջ» («Հասկ», Մարտ, 1946), («Դեպի Լույս և Կյանք» Երևան, 1994, էջ 297-298):*

Հիսուսի Պայծառակերպության այս տոնի օրը հետևենք մեր սիրելի Հայրապետի խորհրդին, չշեղվենք մեր Եկեղեցու դարավոր ավանդություններից, մանավանդ այս օտար ափերում չլսենք ուրիշի ձայնը, որ թվում է թե քաղցր է, բայց վստահ եղեք, որ այն չափից ավելի դառն է, քանի որ մերը չէ: Հիշենք Սուրբ Սահակ Պարթև Կաթողիկոսի հիանալի խրատը. *«Ավելի Լավ է մեր հիվանդ ոչխարը, քան թե ուրիշի առողջ գայլը»:*

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԱՁ.
«ՈՐ Ի ԼԵՐԻՆՆ ԱՅԼԱԿԵՐՊԵԱԼ»

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Որ ահագին տեսլեամբ զարհուցեցուցեր զքո զաշակերտսն, ի թմրութիւն հրաշիցն ի սէր աստուածային փառաց քոց. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Դու որ յեռան վրա այլակերպվելով Քո աստվածային զորությունդ ցույց տվիր. Քեզ կփառավորենք, իմանալի լույս:

Դու որ արեգակնակերպ փայլմամբ Քո փառքից ճառագայթը ցույց տալով արարածներին լուսավորեցիր. Քեզ կփառավորենք, իմանալի լույս:

Դու որ ահագին տեսիլքով վախեցրեցիր Քո աշակերտներին հրաշքի թմբիրով, ի սեր քո աստվածային փառքի. Քեզ կփառավորենք, իմանալի լույս:

Պայծառակերպության այս տոնը թող մի առիթ լինի, որպեսզի նոր ոգևորությամբ և եռանդով վերսկսենք մի նոր կյանք, ավելի սիրենք մեր Եկեղեցին ու հավատանք նրա առաքելությանը: Ամեն:

ԵՐԵՎՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Տարին չորս անգամ Հայ Եկեղեցին տոնում է Խաչի խորհուրդը, իբրև աշխարհի փրկության մեծագույն խորհրդանշանը:

ԵՐԵՎՄԱՆ ԽԱՉ: ԽԱՉԻ ԵՐԵՎՈՒՄԸ:

Մեզ հասած ձեռագիրներից մեկում կարդում ենք այս մտահոգ արտահայտությունը, որը բացահայտում է չորրորդ դարում քրիստոնեական համայնքների մեջ տարածված թերահավատությունը: Դեռևս մի բանի հարյուր տարիներ էին անցել Քրիստոսի երկրավոր կյանքի օրերից ու առաքյալների խանդավառ աշխատանքով ծավալված քրիստոնյա համայնքների ստեղծումից, երբ ակնհայտ դարձավ ժողովուրդների թերացումը հավատքի կյանքում: Կենսաբեր խաչը իր իմաստը սկսել էր կորցնել և մարդիկ այն համարում էին պարզապես նյութեղեն փայտ: Նման վարմունքը մարդկանց հեռացնում էր Աստծուց ու Քրիստոսի Ավետարանին հետևելու համոզումը մի տեղաշարժ էր ունենում նրանց հոգիներում:

«Երկմտանքի մատնված հավատացյալների կյանքում օրինաբեր մի բեկում է տեղի ունենում, երբ 351 թվականին, Երուսաղեմ քաղաքում, Գողգոթայից մինչև Զիթենյաց Լեռը խաչանման լույսեր են տարածվում ավելի փայլուն քան արևի լույսը: Այս հրաշալի տեսիլքից հաղորդվում է ամբողջ ժողովուրդը, որն շտապում է Եկեղեցի գոհություն մատուցելու Աստծուն իրեն տրված այս մխիթարության համար: Երուսաղեմի Պատրիարք Կյուրեղ Երուսաղեմացին հատուկ մի թուղթ է գրում Կ. Պոլսի Կոստանդ կայսրին, նկարագրում բազմաթիվ վկայություններով հաստատված խաչի երևումը ու հիշեցնում նրան իր Հոր՝ Կոստանդիանոս կայսրի պատշգամած դավանության ուղղափառ ճշմարտությունը»:

Այնուհետև շարականների և դարերի խորքերից մեզ հասած մատյաններում մենք հաղորդվում ենք մեր հայրապետների աղոթք դարձած բառերի հետ, որոնք բացատրում են խաչի խորհուրդը. *«Քրիստոսով է զարդարված այս խաչը»: «Խաչը դեպի երկինք փոխադրող հավատքի ճանապարհն է»: «Խաչը անմահության լույսը բաշխող աղբյուրն է»: «Խաչի վրա զոհվեց Աստվածորդին և նույն խաչով Աստծուն ընդունենք որպես պաշտպան»:*

ԽԱՉ: Մի բառ է սա և սակայն այն բանալին է Քրիստոսի

կյանքը հասկանալու համար: Խաչ՝ նշանակում է Խաչյալ Քրիստոսը:

Խաչը կարելի է նմանեցնել ադամանդի: Հղկված ադամանդի վրա ամեն կողմից կարելի է տարբեր գույնի գեղեցկություն տեսնել: Սակայն նրա գեղեցկությունը և արժեքը հասկանալու համար պետք է գտնել իրական երեսը: Խաչի իմաստը կարելի է հասկանալ հասակից և թևերից, բայց խորհրդին թափանցելու համար պէտք է տեսնել նրա վրա մեխուած Հիսուս Քրիստոսին ու հասկանալ այդ գաղտնիքի խորքը: Առաքյալը այն պատկերացնում է այսպէս. *«Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար» (Ա. Կորնթ. 15:3):*

Աստծուն մոտենալու համար մարդ պետք է իր խաչը շալակի և դեպի նրան գնա:

Այսօր քիչ չի թիվը այն անհատների, որոնք քմծիծաղով են մոտենում խաչի քարոզությանը ու խուսափում են քայլել նրա ճանապարհով, որովհետև այն տառապանքի և զոհողութեան ճանապարհն է:

Դավիթ Անհաղթ Իմաստասերն ասում է. *«Այնտեղ, որտեղ խաչ կա, այնտեղ է Խաչեցյալը և այնտեղ ուր Խաչեցյալն է՝ այնտեղ Խաչելություն կա»:*

351 թվականին Երուսաղեմ Սուրբ քաղաքում ժողովուրդները իրենց հավատքը ամրապնդեցին, երբ ականատես դարձան խաչանման լույսերի տարածմանը: Բացենք մեր սրտերը Աստծուն ու լցնենք մեր կյանքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հայրապետների ներշնչումով:

Քրիստոնեական պատմության մեջ Աստված Ինքնիրեն հայտնեց նախ խոսքով և ապա գործով: Քրիստոսի խաչափայտը որպես սիրո ու զոհողության խորհրդանիշ ճառագայթում է բոլոր քրիստոնյա հավատացյալների հոգու ու սրտի մեջ: *Խաչը քրիստոնեական հավատքի կնիքն է:*

Խաչի օրը ցերեկով հրաշալի երևումը խորհրդանշում է քրիստոնեական Եկեղեցու հրաշափառ հաղթանակը: Երևման տոնը Խաչի հարությունն է:

Մարդն իր ապրած տարիների ընթացքում, կյանքի վրա երեք պատուհաններ է բացում.

ա. *ԱՌԱՋԻՆՊԱՏՈՒՀԱՆԻՑ* նայում է *ՄԻՐՏՔ*, ի տես զարթնող բնության, ծաղիկների բիբերի մեջ հուշիկ գարնան, հրճվում է իր զգացական լարերի գերզգայուն թրթռացումներով: Եվ

սիրտը երգում է աստիճան առ աստիճան:

բ. *ԵՐԿՈՐԴ ՊԱՏՈՒՀԱՆԻՑ* նայում է *ՄԻՏՔԸ* և անհասանելի բարձունքներից ներքև է բերում դարերի կյանք ունեցող երկնային դրության մասին նոր գաղտնիքներ: Հետազոտում է երկրի ընդերքը և լույս աշխարհ բերում նոր հնարավորություններ, մարդկային առօրյան առավել հետաքրքիր դարձնելու համար: Այդպես է, որ մտքի խավարը քիչ առ քիչ հալվում է հետզհետե խտացող լույսի առաջ:

գ. *ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒՀԱՆԸ* բացվում է *ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ,* որտեղից նայում է մարդկային հոգին՝ իր աննյութական աչքերով և տեսնում՝ սիրո, նվիրումի ու զոհաբերության հավիտենական ուղին, որը սկիզբ է առնում Սուրբ Ծննդյան Մսուրից և ձգվում մինչև Գողգոթայի բարձունքը:

ՇԱՐԱԿԱՆ ՈՂՈՐՄԵԱ ԴԿ.

«Ի ՅԵՐԿՆԻՑ ԵՐԵԻԵԱԼ»

Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան:

Եւ բազմութեան ժողովոյն տեսանէին այսօր սուրբ զխաչն լուսոյ ճառագայթիւք զարդարեալ:

Ընդ երեւումն սրբոյ խաչի քո քրիստոս այսօր երուսաղէմ մեծապէս պանծացաւ յոյժ:

Երկնքից այսօր երևաց հաղթության նշանը, հեթանոսների համար ծագեց ողորմության լույսը:

Հավաքված բազմությունը այսօր տեսնում էր, Սուրբ Խաչը զարդարված լույսի ճառագայթով:

Քրիստոս Քո սուրբ խաչիդ երևումով այսօր Երուսաղեմը մեծապես պայծառացավ:

Քրիստոսի Խաչը ավետիսն է Աստծու անհուն շնորհների, անսահման սիրո, կարեկցության, գթության և ամբողջական նվիրումի: Եթե քրիստոնյան ցանկանում է ապրել և ստեղծագործել իբրև Աստծու պատկերը, պետք է կանգնի երես առ երես Գողգոթայի խաչի դեմ և նրանից ստանա իր ներշնչումն ու մղիչ ուժը: Ամեն:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

«ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ,
ԵՎ ԻՄ ՀԱՅՐԸ ՄՇԱԿՆ Է» (ՀՈՎՀ 15:1)

Սուրբ Կույսի Վերափոխման պատմությունը այս է.

««Մեր Տիրոջ Համբարձումից հետո Սուրբ Կույսը ապրել է Երուսաղեմում և ըստ ավանդության ունեցել խաղաղ ու հանգիստ մահ: Հիսուսի Հարությունից 15 տարի հետո Երուսաղեմում նա մահացել է: Առաքյալներն ու բարեպաշտ քրիստոնյաները նրան թաղել են Գեթսեմանիի իրենց ընտանեկան դամբարանում: Ասվում է, թե հրեշտակները երեք օր ու գիշեր երգել են նրա գերեզմանի վրա: Բարթողիմեոս առաքյալը, որը ներկա չի եղել Սուրբ Կույսի հուղարկավորությանը, ցանկացել է վերջին անգամ տեսնել նրա դիակը և, երբ Առաքյալները բացել են այն, նա այնտեղ չի եղել ու բոլորը եզրակացրել են, թե նա վերափոխվել է երկինք»:

Վերափոխվել նշանակում է *փոխադրվել երկինք:* Ընդհանրապես Սուրբ Աստվածածնի համար *մահացավ կամ վախճանվեց* ասելու փոխարեն, մեր Եկեղեցին օգտագործում է *ննջեց* բառը:

Սուրբ Կույսը հնազանդվեց Աստծու կամքին և իրեն տրված շնորհը սիրով կրեց, որի համար էլ Աստված հավիտենական փառքի արժանացրեց Իր Որդու Մորը: Ու երջանիկ մի օր, շարականագրի խոսքերով ասված սրբերը միասին հավաքված պիտի տեսնեին՝ *«Սուրբ Կույսին ամպերեն կառքով վեր բարձրացած դեպի երկինք, իմաստուն կույսերի հետ մտնելով երկնային խորանները»,* իսկ սրբերը երկնային զորքերի հետ միասնաբար պիտի երգեին՝ *«Օրհնված ես դու, ամենաօրհնվածը կանանց մեջ»:*

Ամեն մայր Սուրբ Աստվածամոր նման, պիտի լսի Աստծու ձայնը և հետևի նրա կանչին՝ հնազանդությամբ և համբերությամբ, որպեսզի հասնի իր ամենաբարի նպատակների իրագործմանը:

«Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցում հանդիսանում է առաջին սուրբը, որն

իր պարկեշտ ու օրինակելի կյանքի համար ընտրվեց Աստծու կողմից, դառնալու համար այն կինը, որը Սուրբ Հոգու զորությամբ ծնեց Աստծու Որդուն՝ Հիսուս Մանուկին և Աշխարհի Փրկչին,- վկայում է մեր բարձրաստիճան հոգևորականներից մեկը և շարունակում,- *«Ո՞վ էր Մարիամը, հավատավոր մի կին, որն իր մաքուր կյանքով ու Աստծու երկյուղով լիուլի կատարեց մայրական իր պարտականությունները հնազանդ գտնվելով Աստծու կանչին...»*

Հայ քրիստոնյաներիս համար ուսանելի և օրինակելի են Սուրբ Կույս Մարիամի անսահման խոնարհությունն ու Աստծու ձայնին անսալը: Բացենք Աստվածաշունչն ու նորից ընթերցենք Ղուկասի Ավետարանի առաջին գլուխը, որը պատմում է մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան պատմությունը, երբ Գաբրիել Հրեշտակապետն ավետիս է տալիս Մարիամին, վերջինս առանց տրտնջալու խոնարհությամբ պատասխանում է. *«Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. 1:38):* Ահա այս խոնարհությունն ու պատրաստակամության ոգին է ուզում Աստված տեսնել մեր մեջ: Շատ անգամ մեր իսկ կյանքում Նա բազմապիսի ձևերով ու ճանապարհներով հայտնում է Իր ամենասուրբ կամքը, բայց մենք չենք ուզում հետևել այդ ձայնին, որովհետև մեր առօրյա հոգսերն ու մեր շուրջը տիրող նյութապաշտ մթնոլորտը չեն թողնում, որ մենք մի րոպե իսկ վերանանք այդ ամենից ու մտածենք Աստծու և երկնային բարիքների մասին: Չենք ուզում մեր սրտերը բացել Արարչի առաջ ու Նրան ընդունել այնտեղ:

Եթե ուշադիր քննենք ինքներս մեզ, կտեսնենք մեր անզորությունն ու տկարությունը, կհասկանանք, որ մեղքի ծանրությունն է մեզ ճնշում, բայց, աւա՜ղ, չենք ուզում անգամ ապաշխարել և քայլ անել դեպի Աստված: Չգիտեմ ո՞ւմ կամ ինչի՞ վրա ենք մեր հույսը դրել: Չենք ուզում հասկանալ, որ մենք տարբեր ենք մյուսներից ու ստեղծվել ենք Աստծու պատկերով և նմանությամբ ու որպես մարդիկ այս աշխարհում սուրբ առաքելություն ունենք լինելու նրա լույսն ու համ տվող աղը: Իսկ Սուրբ Աստվածածինն այդ բոլորից վեր էր

կանգնած, այդ իսկ պատճառով, երբ հրեշտակը նրան ավետիս տվեց, նա լուռ խոնարհությամբ համաձայնվեց աստվածային ձայնին: Հետևաբար Աստծու ձայնին հետևելն է, որ պակասել կամ ինչո՞ւ չէ վերացել է մեր կյանքից: Ցավոք, այսօր մեզանից շատերին կյանքում առաջնորդում են այ լ արժեքներ, արժեքնե ր, որոնք /ամանակավոր են ու անցողիկ, արժեքնե ր, որոնք երջանկություն և ուրախություն չեն բերում, ընդհակառակը՝ շատ հաճախ վնասներ են պատճառում: Անտարակույս մեզանում պակասել է ամեն րոպե Աստծուն նվիրվելու նախանձախնդրության ոգին: Մոռացել ենք Հիսուսի պատգամը. *«Երկինքն ու երկիրը պիտի անցնեն, բայց Իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. 24:35):* Ուրեմն ո՞ւր ենք գնում, ո՞րն ենք ընտրում, հետևել խաչյալ և հարուցյալ Հիսուսի՞ն ու լուսավոր մի կյանք ունենա՞լ, թե՞՝ հետևել սատանային ու խարխափել անգիտության խավարում: Գաղտնիք չի, որ կյանքում միշտ էլ դժվար է լավին ընդօրինակելն ու բարուն ձգտելը, բայց ավելի հեշտ է վատ բաները սովորելը: Բայց արի ու տես, որ դժբախտաբար մենք հաճախ երկրորդն ենք ընտրում: Մեր Տերը ասում է. «Մտեք նեղ դրռնով, ինչքան լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. 7:13): *Մեր նախնիները դարերով այս* ընտրության առաջ են եղել, բայց երբեք չեն ընկճվել ու վախեցել, որովհետև իրենց հայացքը հառել են հավատքի զորագլխին՝ Հիսուս Քրիստոսին ու իրենց անդադար աղոթքներով դիմել են Սուրբ Կույսին բարեխոսելու իր Որդու մոտ՝ *«Ամբողջ աշխարհի խաղաղության և մեր Սուրբ Եկեղեցու պայծառության համար»:*

Տասնաբանյա պատվիրանը ասում է. *«Պատվիր հորդ և մորդ, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տայու է քեզ» (Եք 20:12):* Մոր նվիրած գուրգուրանքը, փայփայանքն ու սերը անփոխարինելի ու անգին են: Մայրերը զավակների ցավերը իրենցն են նկատում ու տառապում նրանց հետ:

Արևելյան մի իմաստուն ասել է, թե՝ *«Դրախտը գտնվում է մայրերի ծնկների առջև»:* Զավակները իրենց մայրերի սերն ու գուրգուրանքը վայելած լինելու համար ընդհանրապես կրում են նաև նրանց նկարագիրը:

Մեր խոսքը հաստատելու համար պատմությունից բերենք մի քանի օրինակներ:

Ֆրանսիացի մեծ զորավար Նապոլյոն Բոնապարտին երբ հարցնում են, թե՝ *«Ֆրանսիական ազգի մեծագույն կարիքը ի՞նչ է»,* նա պատասխանում է. *«Մայրեր...»:*

Ծայրագույն Արևելքի Ամերիկյան բանակների ընդհանուր հրամանատար զորավար ՄքԱրթըրը, հետևյալ խոստովանությունն է արել. *«...Իմ սրբուհի մայրս է, որ ինձ սովորեցրեց Աստծուն նվիրվել ու սիրել մի երկիր, որն ինձ պաշտպանեց հեռավոր թշնամի երկրներում իմ լավ ու վատ օրերում: Իրրև զավակ իմ հարգալից գոհունակությունս եմ հայտնում իրեն»:*

Ամերիկայի նախագահներից Աբրահամ Լինքըլնը ասել է, թե *ինքը պարտական է իր հրեշտականման մորը:*

Ուրեմն մարդ այն է, ինչ որ է իր մայրը:

Մեր Տիրոջ նկարագիրը նշմարում ենք Իր Մոր մեջ: Նա փոքր տարիքից նվիրվեց Աստծուն, դաստիարակվեց ու ապրեց մաքրակենցաղ մի կյանք:

Մայրական սիրո ցայտուն օրինակ է Հին Կտակարանի Թագավորաց Երրորդ գրքի 16-18 համարներում պատմվված հետևյալ դեպքը:

«Երկու անառակ կանայք մի տան մեջ երեխաներ են ծընում: Երեխաներից մեկը մեռնում է, որովհետև մայրը քնել էր նրա վրա: Գիշերվա կեսին այս մայրը մյուս քնած մոր գրկից վերցնում է նրա կենդանի երեխային ու մեռածին դնում նրա գիրկը: Մայրը երբ արթնանում է, ուզում է կաթ տալ իր որդուն, բայց տեսնում է, որ նա մեռած է: Երկար նայելուց հետո հասկանում է, որ դա իր որդին չէ, սակայն ինչպես կարող էր ապացուցել: Սողոմոն իմաստունը լսելով երկուսի բողոքն ու պատճառաբանությունները, հրամայում է, որ մի սուր բերեն ու երեխային երկու կես անեն, որպեսզի կեսը մեկին տա, իսկ կեսը՝ մյուս մորը: Երբ դահիճը ուզում է երկու կես անել երեխային, իսկական մայրը խնդրում է թագավորին խնայել երեխայի կյանքը ու կենդանի տալ մյուս մորը, բայց մյուսը պնդում

է, որ կիսեն: Սողոմոն իմաստուն թագավորը անմիջապես հասկանում է, թե ո՞վ է իսկական մայրը, նա, որը չի ուզում իր երեխայի մահը ու հրամայում է երեխային վերադարձնել նրան» (Թագ. 3:16-18): Ահա իրական մոր սիրտն ու սերը:

Արդարև Սուրբ Կույսը մեզ համար եղավ ներշնչման աղբյուր, որպեսզի իրար սիրենք հավատքով, առանց ատելության, ոխակալության, առանց նախանձի և առանց տրտնջալու:

««Հոգևոր մի քարոզիչ քայլելու ժամանակ տեսնում է մի քանդակագործի, որը ծնկի եկած աշխատում էր կոշտ ժայռի վրա: Նա հիացմունքով դիտում է վարպետի աշխատանքը, որի ձեռքերում մուրճի ճկուն հարվածների շնորհիվ ձևավորվում էր անտաշ ժայռը ու դառնում գեղեցիկ մի արձան: «Երանի թե իմ ժողովրդիս էլ ես կարողանայի այսպես ձևավորել ու դարձի բերել»,- ասում է հուսահատված քարոզիչը՝ դիմելով քանդակագործին: *«Եթէ ծնկի գաս ու աշխատես, կարող ես հասնել քո նպատակին»*,- պատասխանում է քանդակագործը»: Ինչպիսի՜ ճշմարիտ խոսքեր: Իրապես էլ իբրև հայ քրիստոնյաներ, մեր արդար աշխատանքով, հավատքով ու աղոթքով է, որ պիտի կարողանանք գորանալ, մեր միասնական ուժով մեր ժողովրդի առջև ծառացած բոլոր արգելքներն ու խոչնդոտները հաղթահարել և քարացած սրտերն ու հոգիները փխրեցնել: Այո, կարող ենք, եթէ սիրենք իրար, հավատանք ու աշխատենք:

Աստվածամայրը *«կենդանի տաճար է»*,- ասում է շարականագիրը: Այս կենդանի տաճարում մենք բոլորս դառնում ենք մեկ ու միացած Քրիստոսով: Ինչպես խնամում ենք մեր անձերը, երբ թույլ ու հիվանդ ենք, բժշկի նշանակած տեսակ-տեսակ հատուկ դեղամիջոցներով ու սնունդով, փորձելով աշխուժացնել մեր մարմինը, այս ճանապարհով էլ մեգանից յուրաքանչյուրը կարող է իր մեջ ուժեղացնել աստվածային կամքն ու հավատքը:

Հարց է ծագում, թե՝ *«Հայության հեթանոսական անցյալից ժառանգված Մրգերի հ Սուրբ Աստվածածնի Տոնը ի՞նչ ձևով կապված պիտի լինեին, որ Հայոց Երկրորդ Լուսավորիչ Հայրապետը մի անվան տակ եղբայրացներ դրանք»:*

Այս երկու տոների միջև եղող կապը մայրության գաղափարն է: Առաջինի պարագային բնությունը ներկայանում էր որպես բարիք տվող մայրություն՝ մարդկության համար, իսկ երկրորդի պարագային՝ քրիստոնյա մարդկությունը փառավորում էր գերագույն մի Մայրություն, ամբողջ աշխարհի համար մի Փրկիչ շնորհող Կուսության մեջ:

Մի Մայր՝ քրիստոնյա առաջին մայրը, որ իր հավիտենական մայրությամբ, եղավ մարմնացումը անհիշաչարության, սիրո, ներողամտության և իր ամբողջական երկինք վերացումով դարձավ բարեխոսը՝ Միածին Որդու ու մեղավոր մարդկանց միջև:

Բոլոր պարագաներում, մայրությունը պարզ մի տեսակը ստեղծելու միջոցը չի: Մայրությունը խարիսխն է ընտանեկան ամրոցի և անփոխարինելի ճարտարապետը սերունդների նկարագրի ու ներքին մարդու կերտման: Մայրության հարազատ կաթի, լեզվի ու արյան ճանապարհներով սերունդներին են փոխանցվում տոհմային ավանդություններն ու ցեղային ժառանգությունները: Մայրն է մանկան առաջին առողջ միջավայր ստեղծողը: Մանուկը առաջին անգամ մորից ստանում է Աստված պաշտելու ներշնչումը, առաջին խաչաձևը մոր ձեռքով է գծվում և մանկան համար ընտանիքը դառնում է բարեպաշտության գաղափարը տվող ԱՌԱՋԻՆ ԽՈՐԱՆԸ:

Սուրբ Պատարագի ավարտին կատարվում է նաև խաղողի օրհնության արարողությունը:

Հիսուս հաճախ իրեն նմանեցնում էր խաղողի որթին.

«Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակ է: Ամեն ճյուղ, որ իմ վրա է և պտուղ չի տալիս, նա կտրում է այն... Մնացեք իմ մեջ, և ես ձեր մեջ, ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաստատված չլինի, նույնպես և դուք՝ եթե իմ վրա հաստատված չլինեք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը» *(Հովհ. 15:15):* Մեր Տերը վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Սուրբ Հաղորդության խորհուրդը, օրհնեց հացը, տվեց Իր աշակերտներին ու ասաց, «*Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված, այս արեք իմ հիշատակի համար»* և օրհնեց գինին, ասելով, *«Այս բաժակը նոր ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված» (Ղուկ. 22:1920):* Ահա այս ձևով Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական շրջանի արմատների ու պտուղների ընծայման տոնը փոխանցեց քրիստոնեության, պտուղների միջից ընտրելով խաղողը, որովհետև գինին պատրաստվում էր

խաղողից և Հայ Եկեղեցում նրա օրհնությունը միացրեց Սուրբ Կույսի Վերափոխման տոնին, իբրև նրա անբաժանելի մի մասնիկը:

Եկեք աղոթենք, որ ավելի ծաղկի ու պայծառանա Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և Առաքելահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը իբրև մեր Հոգևոր Մայրը՝ դարեր շարունակ դաստիարակել, հավատքի մեջ առավել զորացրել, սնել ու օգնության է հասել և այսօր նույնպես շարունակում է իր առաքելությունը կատարել իրեն հավատարիմ զավակների հանդեպ:

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ,
«ԱՐԵԻԵԼՔ ԳԵՐԱՐՓԻՆ»

Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին, զանմայր ծնեալն առաջին ծնար անհայր յերկրորդին, բարեխօսեա միածնին աստուածածին մայր բանին:

Բանին հօր մարմնարան եւ առագաստ բնակութեան, որ կաթամբ կուսական կերակրեցեր զէակն բան. բարեխօսեա միածնին աստուածածին մայր բանին:

Դու ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան, եւ շառաւիղ օրհնութեան նախնւոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա միածնին աստուածածին մայր բանին:

Արևելք գերարփի և լույսը ծնող բնակարան, սկզբում առանց մոր ծնածին, հետո անհայր ծնեցիր. բարեխոսիր Միածնին, ո՛վ Աստվածածին մայր Բանի:

Հոր Բանի մարմնարան և բնակութեան առագաստ, որ կուսական կաթով կերակրեցիր էակից Բանին, բարեխոսիր Միածնին, ո՛վ Աստվածածին մայր Բանի:

Դու մարդկային ցեղի անթառամ ծաղիկ և մեր բնության նախածնողի օրհնյալ շառավիղ. բարեխոսի՛ր Միածնին, ո՛վ Աստվածածին մայր Բանի:

Թող Աստվածամոր լուսավոր կերպարը, նրա խոնարհությունն ու աստվածահաճո կյանքը առաջնորդ և օրինակ լինեն մեզ: Ամեն:

ԽԱՉՎԵՐԱՑ

«ՔՈ ՍՈՒՐԲ ԽԱՉԻԴ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ, ՔՐԻՍՏՈՍ, ՈՐ ԿԱՆԳՆԵՑԻՐ ԱՇԽԱՐՀԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՍԱ ԹՈՂ ՊԱՀՊԱՆԻ ՄԵՋ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»
(ՇԱՐԱԿԱՆ

Վերացման Խաչի պատմությունը այս է.

«610-ին Պարսից Խոսրով Բ. Փարվիզ թագավորը հարձակվում է Բյուզանդիայի վրա և չորս տարիներ պատերազմելուց հետո, 614-ին գրավում Երուսաղեմը ու կործանում այն: Հիսուն հազար հոգի սպանվում են և երեսուն հազարը՝ աքսորվում: Հիսուսի խաչափայտը գերի է ընկնում պարսիկների ձեռքը:

Հունաց Հերակլ կայսրը խաչափայտը փրկելու համար հարձակվում է Պարսկաստանի վրա: Նրա բանակին մաս էին կազմում նաև Հայաստանի Հունական կողմի զինվորները՝ Մժեժ Գնունի հրամանատարի գլխավորությամբ: Կայսրը հաղթում է պարսիկներին ու ստիպում նրանց խաղաղության դաշինք կնքելու, որի գլխավոր պայմաններից մեկը՝ Հիսուսի Խաչափայտի վերադարձնելն էր:

Ստանալով Խաչափայտը, Կայսրը նախ այն տանում է Կ. Պոլիս, որը Բյուզանդիայի մայրաքաղաքն էր, այնուհետեւ մեծ պատիվներով ու կրոնական արարողություններով տեղափոխում է Երուսաղեմ: Ավանդությունն ասում է, թե, երբ զինվորները քաղաքների ու գյուղերի միջով տանում էին Խաչափայտը, ժողովուրդը նրանց դիմավորում էր ռեհաններով, քանի որ նրա գտնվելու ժամանակ այն անուշահոտ ռեհաններով էր շրջապատված եղել»:

Ըստ Քրիստոնեական Եկեղեցու ուսուցման խաչը ապրված ու խտացված Ավետարանն է: Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խաչելությունից շատ առաջ խաչը պատժի ու անարգանքի գործիք էր, սակայն Քրիստոսով խաչը սրբացավ ու դարձավ միլիոնավոր հավատացյալների համար պաշտամունքի և երկրպագության առարկա՝ իր սրբազան խորհրդով ու նշանակությամբ: Աշխարհի բոլոր քրիստոնյաներից կարծես Հայ ժողովուրդն է, որ առավելապես կարիք է զգացել սուրբ խաչի զորությանը, որովհետև դարեր շարունակ նա պայքարել և մարտնչել է քրիստոնեական կրոնի, հավատքի

ու սրբությունների համար: Շնորհիվ իր անսասան հավատքի, Հայ ժողովուրդը միշտ էլ հաղթահարել է բոլոր տեսակի դժվարությունները ու իմացել մանավանդ տառապել, խաչվել և ապա հարություն առնել Քրիստոսի նման: Ամեն ժողովուրդ իր խաչն ունի: Մենք էլ որպես Եկեղեցի մեր գոյությունը պարտական ենք Քրիստոսի սուրբ խաչի զորությանը: Հավատքի մի վառ օրինակ ունենք՝ հինգերորդ դարում Վարդանանց հերոսամարտից առաջ մեր զինվորները երդվեցին. *«Մեր հավատքից մեզ ոչ ոք չի կարող բաժանել ո՛չ սուրը և ոչ էլ հուրը, ո՛չ մարդիկ և ոչ էլ երկնքի հրեշտակները» (Եղիշե Պատմիչ, 5-րդ դար):* Այս երդումը կարծեք դարձավ մեր պատմության ու մեր գոյատևման անկյունաքարը:

Մեր մեծագույն վարդապետներից Գրիգոր Տաթևացին ասում է, թե՝ Քրիստոսի Խաչի չորս թևերը չորս բարերարություններ են նշանակում. Վերևի մասը՝ *երկնքի արքայության բացումն է.* ներքևինը՝ *դժողքի ավերումը,* աջը՝ *շնորհների բաշխումը, իսկ* ձախը՝ *մեղքերի թողությունը:* Նա ասում է, թե խաչը խորհրդանիշն է նաև չորս առաքինությունների: Չորս անկյուն քառաթև խաչը ներկայացնում է չորս խորհուրդներ.-

Վերևի մասը՝ *Աստվածային զորություն.* Ներքևինը՝ *Աստվածային սեր ու գոհաբերություն, նվիրում և ծառայություն, որովհետև նրա վրա Աստծո Միածին Որդին Իր անբիծ ու մաքուր կյանքը գոհեց՝ աշխարհի փրկության համար:* Ձախ կողմը՝ *տառապանք, համբերություն ու պարտականություն:* Եվ վերջապես աջ կողմը՝ *հաղթություն ու փրկություն:*

Խաչը հաշտության նշանն է մեր և Աստծու միջև *(Կողոս. 1:19-20),* քանի որ խաչի մահով Հիսուս մեզ համար բացեց երկինքը, որը փակ էր այն օրվանից ինչ նախաստեղծները՝ Ադամն ու Եվան ճաշակեցին արգելված պտուղը և զրկվեցին աստվածային շնորհները վայելելուց ու մահն աշխարհ մտավ: Հոգևոր աշխարհի դռները բացելով Հիսուս սկբնավորեց հաղորդակցությունը Աստծու և մարդկանց միջև:

20-րդ դարի մեր մեծագույն և լուսավոր Կաթողիկոսներից երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանցը իր պատգամն է փոխանցում մեզ.

«...Հայ ժողովրդի հոգևոր Հայրենիքը Հայաստանյայց Եկեղեցին է: Այս Հայրենիքի վերա միայն կարող ենք հոգևորապես աճել ու զարգանալ ինչպես որոշ կլիմայի և տեղին հատուկ բույսն ու կենդանին յուր հայրենիքում: Մեր անցյալն ուրանալ չենք կարող, եթե տգիտության և միակողմանի հասկացողության թանձր մառախուղը չի նստել մեր հոգու վերա» («Դեպի Լույս և Կյանք», Երևան, 1994, էջ 144-145):

Երբ առաքյալները Երուսաղեմում հանդիպեցին ի ծնե կույրին, Հիսուսին հարցրեցին. «*Ռաբբի, մեղքը ո՞ւմն է., որ կույր է ծնվել, սրա՞նն է, թէ՞ հորն ու մորը» (Հովհ. 9:1-2):* Հիսուս պատասխանեց. *«Ոչ դրա մեղքն է, եւ ոչ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն»: (Հովհ. 9:3):*

Այս ձևով Աստվածորդին թելադրում էր Իր հետնորդներին, իզուր տեղը չփնտրել տառապանքի պատճառը:

Տառապանքը լուսավոր մի գաղտնիք է, որն Աստված կարող է մի բարի նպատակի ծառայեցնել: Ահա այս իմաստով է, որ մեր Տերը Իր աշակերտներին թելադրեց. *«Այն որ ուզում է ինձ աշակերտել, թող առնի իր խաչը ու գա իմ ետևից» (Ղուկաս 9:23):* Ու ի՞նչ էր խաչը, եթե ոչ տառապանք, ցավ ու անարգանք բարձր և վսեմ մի նպատակի համար:

Անկասկած տառապանքը մի բարիք չի, եթե այդպես լիներ Հիսուս չպիտի փորձեր բուժել տառապող հոգիներն ու մարմինները: Սակայն կյանքում չարիքներ ու դժբախտություններ կան, որոնք պարտավոր ենք համբերությամբ տանել: Անշուշտ Հայր Աստված ուրախությամբ չի դիտում մարդու դժբախտություններով լի կեանքը, սակայն Նա հաճախ մեծագույն բարության աղբյուրի կարող է վերածել այդ միեվնույն տառապանքն ու վիշտը: Հիշենք Հին Կտակարանից Հոբ Երանելուն, որն իր գերագույն տառապանքի մեջ ավելի բարձացավ ու սրբացավ, նման այն ոսկուն, որն իր հատկությունը ստանալու համար պիտի անցնի կրակի քուրայից: Մարդը պարտավոր է սովորել իր տկարությունները վերածել ուժի ու իր արյունաքամ վերքերը՝ ծաղիկների:

«Պատմվում է, թե ժամանակին Արևելքի բռնապետներից մեկը շատ մեծ ու բացառիկ գեղեցկությամբ մի թանկարժեք գոհար

ուներ: Ինչպես է պատահում, այդ քարի վրա խոր մի գիծ է առաջանում: Բռնապետը կանչում է իր տերության բոլոր վարպետ ոսկերիչներին ու քար հղկողներին, որպեսզի մաքրեն այդ տգեղությունը գոհարի վրայից: Շատ շատերը վախենում են բռնապետի զայրույթից, իսկ ովքեր որ փորձում ու ձախողվում են՝ գլխատվում են: Օրերից մի օր հեռու մի երկրից մի երիտասարդ քար հղկող է գալիս և այդ գոհարի վրա գտնվող խոր գծի ծայրին փորագրում է մի գեղեցիկ վարդ ու այդպիսով այն վերածում վարդի ցողունի»:

Մենք ևս իբրև հայ քրիստոնյաներ, պարտավոր ենք մեր առօրյա կյանքում տրված, *երբեմն պարտաղրված,* ցավերն ու փորձությունները վերցնել և դրանք վերածել հաղթանակի ու փառքի *պսակների:*

Երջանկահիշատակ Սիոն Արք. Մանուկյանն ասում է.

«Վերջապես, հավատացյալը հոգևոր մի զինվոր է, ե՞րբ ամենից ավելի կուրախանա զինվորը, առաջին անգամ պատերազմի փողը հնչա՞ծ ժամանակը, որն իրեն ռազմի դաշտ է կանչում, թե՛ ոչ, երբ երկար կռիվներից հետո, մեծ ղժվարությամբ հաղթում է թշնամուն ու հաղթական վերադառնում պատերազմից: Քրիստոնյան էլ արդյոք չի՞ մղում հավատքի բարի պատերազմը ընդդեմ խավարի ու սատանայի, ընդդեմ չարի ու մեղքի ու երբ Աստծու օժանդակությամբ պարտության է մատնում թշնամուն, Պողոս առաքյալի հետ կարող է ասել. «Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը: Եվ հիմա ինձ սպասում է արդարության պսակը, որը, որպես հատուցում, ինձ պիտի տա Տերը՝ արդար Դատավորը, այն օրը, և ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր նրանց, որ սիրեցին նրա հայտնվելը» (Բ. Տիմոթ. 4:7-8). (Սիոն Արք. Մանուկյան, «Ավետարանի Պատգամներ» Բ. Տպագրություն, Երուսաղեմ, 1965, էջ 184):

Ինչպես ժողովրդական իմաստուն առածն է ասում. *«Մարդը մի աշակերտ է,* իսկ *տառապանքը նրա ուսուցիչը»*: Այն ինչ որ Քրիստոս արեց խաչի վրա գեղեցիկ կերպով արտահայտում է 18-րդ դարի հոլանդացի մի մտածող, որն ասում է. *«Չգիտեմ թե ի՞նչ պատահեց այնտեղ խաչի վրա, սակայն գիտեմ թե ինչ պատահեց ինձ դրա պատճառով. Քրիստոս խոնարհվեց իմ մակարդակին ու ինձ ուժ տվեց բարձրանալու Իր մակարդակին»:*

Աստվածորդին, որն Իր կյանքը տվեց մեզ համար, կարիք չունի մեր գութին ու կարեկցության. Նա մեզանից միայն ակընկալում է, որ հավատանք ու վստահենք Իրեն:

Խաչի խորհրդով ստանում ենք հույս, զորություն ու սիրող հոգի: Մեր նեղություններն ու զրկանքները պիտի չքանան, եթե երկյուղածությամբ նայենք Խաչյալին: Նրա խոցված կողքից վազող արյունը մեզ հիշեցնում են բոլոր ժամանակների ամենամեծ տառապանքները:Քրիստոսի
կրած վերքերը մեզ համար պիտի լինեն ուժեղ, անխախտելի և հաստատուն պատվանդան կյանքի դժվարություններն ու նեղությունները հաղթահարելու համար: Նրա նման մենք ևս պիտի սովորենք դիմանալ ապտակների, փշե պսակների ու ծաղրանքների՝ ճշմարտության և արդարության սիրույն: Առանց խաչի ոչ հաղթանակ կա և ոչ էլ հարություն:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԱՁ.
«ՈՐ ԶԱՆԱՐԱՏ ԲԱԶՈՒԿՍ»

Որ զանարատ բազուկըս քո ի խաչին տարածեցեր քրիստոս աստըւած, եւ նշան յաղթութեան ետուր մեզ. սովաւ զկեանս մեր պահեա:

Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո քրիստոս աստուած գաւազան զօրութեան ետուր մեզ. սովաւ զկեանս մեր պահեա:

Որ զմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւն կենագործեցեր. սովաւ զկեանս մեր պահեա:

Քրիստոս Աստված, Դու որ Քո մաքուր ձեռքերդ խաչի վրա տարածեցիր և մեզ հաղթության նշանը տվեցիր, սրանով (խաչով) պահիր մեր կյանքը:

Քրիստոս Աստված, Դու որ Քո աշխարհը փրկող բազկատարած խաչը մեզ իբրև զորության գավազան տվեցիր. սրանով (խաչով) պահիր մեր կյանքը:

Դու որ փայտից ճաշակելու հանցանքով մեռածին կյանք պարգևեցիր. սրանով (խաչով) պահիր մեր կյանքը:

Վերացման խաչի տոնին, աղոթենք, որ Քրիստոսի խաչը մեզ օգնական լինի մեր ապրած կյանքի ընթացքում: Թող Նրա ամենազոր խաչը հովանի ու պահապան դառնա բոլոր հավատացյալներին ու խաղաղություն հաստատի աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ: Մեր Եկեղեցին մեզ բոլորիս մի անգամ ևս առիթ է տալիս վերանորոգելու մեր ուխտը Հիսուսի Խաչափայտի հանդեպ և հետևելու նրա պատգամին, որ է՝ *սեր և անձնուրացություն,* իրար նկատմամբ մեր եղբայրական անկեղծ սիրով, համերաշխությամբ ու ճշմարիտ հայ քրիստոնյային վայել կեցվածքով, որը պատիվ պիտի բերի ամեն մի հայի: Ամեն:

ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉ

«ՔՈ ԱՄԵՆԱՀԱՂԹ ԽԱՉԻԴ ՆՇԱՆՈՎ ՄԵԶ ՊԱՀՊԱՆԻՐ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԹՇՆԱՄՈՒՑ, ՈՎ ՄԱՐԴԱՍԵՐ ՔՐԻՍՏՈՍ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԴՈՒ ՄԻԱԿ ՀԱՎԵՏ ՕՐՀՆՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՆ ԵՍ, ՈՐԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՓԱՌՔԸ»

(Շարական)

Վարագա Սուրբ Խաչի պատմությունը այս է.

«Հռոմեական հալածանքներից փախչելով՝ Հռիփսիմյանց կույսերը գալիս ու բնակություն են հաստատում Հայաստանի Վարագ լեռան վրա: Ըստ ավանդության ասվում է, թե Հռիփսիմե կույսը իր վզից կախած ուներ Քրիստոսի Խաչափայտից մի մասնիկ և, որպեսզի այն հայածողների ձեռքը չընկնի, Վարագա լեռան վրա պահում է ապահով մի տեղում: Հռիփսիմյանց կույսերի նահատակությունից դարեր հետո, 653 թվականին, Թոդիկ ճգնավորը իր Հովել աշակերտի հետ միասին, աղոթքի միջոցով իմանում է, թե ո՞ւր է պահված Քրիստոսի Խաչափայտի մասնիկը: Աղոթքի պահին հանկարծ նրանք լսում են մի ձայն, որից հետո լեռան վրա ուժեղ լույս են տեսնում՝ տասներկու սյուների ձևով: Հետևելով լույսին նրանք գտնում են Քրիստոսի Խաչափայտի մասնիկը: Այս Լուսավոր սյուները տասներկու օր շարունակ մնում են ամբողջ ժողովրդի աչքի առաջ»:

Այս տոնը զուտ հայկական է:

Հիսուսի խաչելությամբ քրիստոնյաների համար խաչը դարձավ սուրբ նշան: Հայ հոգևորականը սուրբ խաչով է կատարում Եկեղեցու բոլոր ծիսակատարությունները և եկեղեցական արարողությունները, քանի որ խաչը եղել է օրհնելու ու օրհնություն ստանալու խորհրդանշան:

Մինչև Քրիստոս խաչը մահապարտներին պատժելու միջոց էր: Հիսուս Իր խաչելությամբ փոխեց նրա իմաստը և մի նոր լույս դրեց նրա մեջ ու մարդկության առջև բացեց կյանքի ճշմարիտ ճանապարհը:

Ոմանք մեղադրում են Հայ Եկեղեցուն չափից ավելի խաչապաշտության ու մանավանդ նահանջի մեջ: Սա սխալ մտածում է: Քրիստոնեությունը նահանջի կրոն չի, ընդհակառակը՝ պայքարի և չարի ու բռնության դեմ մարտնչելու

կրոն է:

Երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանը պատգամում է.

«Քրիստոնեական կյանքն էլ մի պայքար է ազնվական նպատակները իրագործելու, ինքնիրեն կերտելու և կատարելագործելու համար. պայքար՝ ընկերության մեջ վիստացող չարիքները չեզոքացնելու, պայքար մարդկության մեջ սեր, եղբայրություն, խաղաղություն հաստատելու համար: Սրանք հեշտ գործեր չեն. սրանք հոգեկան ուժ, քաջություն և զոհողություն պահանջող գործեր են, ինչ որ համազոր է ասելու, Ավետարանի ծանոթ բացատրությամբ, «խաչը առնել և Քրիստոսին հետևել»ը այսինքն խաչակիր լինել բառիս ամենաազնիվ իմաստով» («Գունագեղ Կիրակիներ և Հոգեզաշուստ», Ստամբուշ, 1972, էջ 2526):

Նույն հրաշքը կկրկնվի, եթե մենք մեր հոգիներում ու սրտերում ամուր պահենք քրիստոնեական հավատքի լույսը և այն փոխանցենք մեր զավակներին: Գողգոթայի խաչի վրա արտահայտված սերը՝ փառապսակն է քրիստոնեական կրոնի: Գողգոթայի խաչի վրա կերտված Սիրո Խորանի առջև մարդիկ երկու հազար տարիներից ի վեր բացում են իրենց սրտերը, խոստովանվում իրենց մեղքերն ու փրկվում են:

Պողոս Առաքյալն ասում է.

«Սակայն քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար» (Գաղատ. 6:14-1):

Վարագա Սուրբ Խաչի տոնին, եթե մի պահ մեր հոգու աչքերը ուղղենք դէպի Գողգոթա, այնտեղ պիտի տեսնենք Աստվածորդուն Իր բազուկները տարածած Քառաթև խաչի վրա, որ այսօր և միշտ մեզ հրավեր է կարդում Սուրբ Խաչի նշանը գործածելու մեր ամենօրյա կյանքում, հասկանալու նրա իմաստը, լսելու ու հետևելու Խաչյալի պատգամին. որ է՝ օգնել հիվանդներին, կարիքավորներին, աղքատներին, մանավանդ եղբայրական անկեղծ ու անշահախնդիր սիրով շարունակելու մեր ծառայությունը Աստծու փառքի համար:

ՇԱՐԱԿԱՆ ՈՂՈՐՄԵԱ ԳՁ.
«ՔԵԶ ՔՐԻՍՏՈՍԻ»

Քեզ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ շնորհողի զյաղթական զպատուական զաստուածընկալ սուրբ նշանս, մատուցանեմք զօրհներգութիւն միշտ ի բարձունս:

Սա կամաւ քո քրիստոս եւ թեւօք ամենազօր սուրբ հոգւոյն, եւ դասուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի ի լեառն վարագայ բնակիլ ի նմա:

Եկայք ժողովուրդ, երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս, համբարձէք միաբան զձեռս ձեր ի սրբութիւն, եւ զբնակեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:

Քեզ, Քրիստոս, հաղթական և պատվական աստվածընկալ այս սուրբ նշանը Ընդհանրական Եկեղեցուն շնորհողիդ՝ միշտ օրհներգություն ենք մատուցում բարձունքներում:

Քրիստոս, սա Քո կամքով և Սուրբ Հոգու ամենահզոր թևերով ու հրեշտակների դասերով թռավ եկավ Վարագա լեռան վրա բնակվելու:

Եկեք ժողովուրդներ, աստվածային այս սուրբ նշանին երկրպագենք, ձեր ձեռքերը միասնաբար բարձրացրեք սրբությանը և սրա մեջ բնակվողին միշտ փառավորեցեք:

Իբրև Եկեղեցի ու ժողովուրդ մենք կանհետանանք և կփոշիանանք այն ժամանակ միայն, երբ կորցնենք Քրիստոսի Սուրբ Խաչի հանդեպ ունեցած մեր նվիրումն ու հավատքը, մեր մայրենի լեզուն, մեր հայկական ոգին, մեր ավանդությունները ու մեր հոգեոր գանձերը: Ուրեմն, այս օրերին մանավանդ ամուր պահենք Հայ Եկեղեցին: Նրա տոները իմաստ կունենան, եթե մենք նվիրված հայ քրիստոնյաներ մնանք և քաջ գիտակցենք, թե այսօր, առանց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի, ի սպառ կկորչի հայ իրականությունը: Սուրբ էջմիածինը խորհրդանիշն է Հայ Եկեղեցու, իսկ հայ իրականությունը խորհրդանշող ճշմարիտ ոգին Հայրենիքն է: Որով առանց Սուրբ էջմիածնի՝ չկա Հայրենիք և առանց Հայրենիքի՝ չկա Սփյուռք: Ամեն:

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանաշնորհ Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սետեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ. Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր՝ անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ……. 6

Շնորհակալության խոսք …….. 7

Տիրոջ Ծառան Տիրոջ
Անդաստանին մեջ ……. 8

Սիրո առաքելությունը ……. 11

Սուրբ Ծնունդ ……. 14

Հիսուս Մանուկի Ծնունդը ……..... 18

Մեծ Պահքի խորհուրդը ……..... 23

Մեծ Պահքի արժեքը ……. 25

Բուն Բարեկենդանի Կիրակի ……. 28

Արտաքսման Կիրակի …….. 33

Անառակ Որդու Կիրակի ……..... 39

Անիրավ Տնտեսի Կիրակի …….. 46

Անիրավ Դատավորի Կիրակի …….. 52

Հիսուսի Երկրորդ Գալուստը ……. 58

Ծաղկազարդ 1 ……. 64

Ծաղկազարդ 2 ……. 68

Սուրբ Հարություն ……..... 73

Հարուցյալ Քրիստոսը …….. 77

Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ …….. 82

Կանաչ կամ Աշխարհամատրան Կիրակի …….. 89

Կարմիր Կիրակի 93

Տյառնընդառաջ ……. 98

Համբարձում ……... 104

Սուրբ Հոգու Գալուստը ……. 109

Հոգեգալուստ …….. 114

Պայծառակերպություն
(Վարդավառ) …… 118

Երևման Սուրբ Խաչ …….. 125

Վերափոխումն Սուրբ Աստվածածնի …… 128

Խաչվերաց …….. 135

Վարագա Սուրբ Խաչ ……. 141

Իմ կենսագրությունը ……. 144

Բովանդակություն …… 146